

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (28)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2019

«Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրություն՝	Միրզոյան Հրաչիկ (ի.գ.դ., պրոֆ.)
Գլխավոր խմբագիր՝	Ավետիսյան Լևոն (բ.գ.թ., դոց.)
Գլխ. խմբագրի տեղակալներ՝	Գոնչար Նատալիա (բ.գ.թ., դոց.)
Պատասխ. քարտուղար՝	Հովակիմյան Արմեն (բ.գ.թ.)
Պատասխ. խմբագիր՝	Գաբուզյան Արա (ի.գ.դ., պրոֆ.)

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յուրի (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Ավագյան Սուրեն (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Գևորգյան Կարեն (ի.գ.թ.), Դյուրան Բեռնարդ (Մոնպելյե, ի.գ.դ., պրոֆ.), Խաբրիևա Տալիա (Մոսկվա, ի.գ.դ., պրոֆ.), Կուրի Հելմուտ (Ֆրայբուրգ, ի.գ.դ., պրոֆ.), Հայկյանց Արմեն (ի.գ.դ., պրոֆ.), Հարությունյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.), Ղազինյան Գագիկ (ի.գ.դ., պրոֆ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մեղրյան Մերգեյ (ի.գ.թ., դոց.)

Редакция:	Мирзоян Грачик (д.флс.н., проф.)
Главный редактор:	Аветисян Левон (к.фил.н., доц.)
Зам. главного редактора:	Гончар Наталия (к.фил.н., доц.)
Ответственный секретарь:	Овакимян Армен (к.фил.н.)
Ответ. редактор:	Габузян Ара (д.юр.н., проф.)

Редакционная коллегия:

Авакьян Сурен (Москва, д.юр.н., проф.), Айкянц Армен (д.юр.н., проф.), Антонян Юрий (Москва, д.юр.н., проф.), Арутюнян Гагик (д.юр.н., проф.), Геворкян Карен (к.юр.н.), Дюран Бернард (Монпелье, д.юр.н., проф.), Казинян Гагик (д.юр.н., проф., академик НАН РА), Кури Хельмут (Фрайбург, д.юр.н., проф.), Мегрян Сергей (к.юр.н., доц.), Хабриева Талия (Москва, д.юр.н., проф.)

Edition:	Mirzoyan Hrachik (Sc. D. in Philosophy, Professor)
Editor-in-chief:	Avetisyan Levon (PhD in Philology, Associate Professor)
Deputy editor-in-chief:	Gonchar Natalya (PhD in Philology, Associate Professor)
Executive Secretary:	Hovakimyan Armen (PhD in Philology)
Managing Editor:	Gabuzyan Ara (Sc. D. in Legal Sciences, Professor)

Editorial Board:

Antonyan Yuri (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Avagyan Suren (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Duran Bernard (Montpellier, Sc. D. in Legal Sciences, Professor), Gevorgyan Karen (PhD in Legal Sciences), Ghazinyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Professor, Academician of NAS RA), Harutyunyan Gagik (Sc. D. in Legal Sciences, Professor), Haykyants Armen (Sc. D. in Legal Sciences, Professor), Khabrieva Talia (Moscow, Sc. D. in Legal Sciences, Professor), Kury Helmut (Freiburg, Sc. D. in Legal Sciences, Professor), Meghryan Sergey (PhD in Legal Sciences, Associate Professor)

© Բանբեր Երևանի համալսարանի *Вестник Ереванского университета *Bulletin of Yerevan University

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՑՄԱՆ

Սահմանադրության զարգացման եղանակների արդյունավետ իրացումը ենթադրում է ոչ միայն դրա տեքստում փոփոխություններ կատարելու, այլ նաև մի շարք այլ եղանակներով, այդ թվում՝ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությամբ Հիմնական օրենքի զարգացման հնարավորություն: Այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունությունը ենթադրում է նաև նման մեկնաբանություն ընդգրկող ՄԴ իրավական դիրքորոշումների կայունություն:

Հետևաբար հարց է առաջանում, թե կարող են արդյոք զարգանալ սահմանադրական մեկնաբանություն ընդգրկող ՄԴ իրավական դիրքորոշումները, և եթե այո՝, ապա ինչպես և ինչպիսի հաճախականությամբ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Կարծում ենք, որ օրենսդրական հիշյալ դրույթն ինքնին ենթադրում է, որ այն վերաբերում է Սահմանադրական դատարանի որոշմանն ամբողջությամբ, հետևաբար՝ ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրավակիչ մասերում արտահայտված իրավական դիրքորոշումներին¹:

Ուստի հաջորդ հարցը, որն առաջանում է հիշյալ համատեքստում, այն է, թե արդյոք Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են նաև հենց իր՝ Սահմանադրական դատարանի համար, և կարող է արդյոք վերջինս ժամանակի ընթացքում դրանք փոփոխել:

Օրենքով նախատեսված հիշյալ կարգավորումը հեղինակների մեծ

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս **Ա. Մանասյան**, Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Եր., 2013, էջ 56-116:

մասին հիմք է տվել եզրակացնելու, որ հասցեատերերի համար ՄԴ իրավական դիրքորոշումների պարտադիրությանն առնչվող կանոնը վերաբերում է նաև Սահմանադրական դատարանին²: Մակայն իրավաբանական գրականության մեջ հանդիպում է և այն տեսակետը, որ պարտադիրության հիշյալ կանոնն իր տարածման շրջանակների տեսանկյունից ունի մեկ բացառություն, այն է՝ Սահմանադրական դատարանը, քանզի վերջինս օժտված է իր նախադեպային իրավունքում ամրագրված սկզբունքները փոփոխելու հնարավորությամբ³:

Անդրադառնալով քննարկվող հիմնախնդրի առնչությամբ ՀՀ օրինակին՝ բազմիցս նշել ենք, որ, մեր կարծիքով նույնպես, սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը սահմանափակված է իր արտահայտած իրավական դիրքորոշումներով⁴: Հակառակ իրավիճակը կարող է հանգեցնել իրավական պետության հիմքում ընկած այնպիսի արժեքների ձևախեղման, ինչպիսիք են Սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիությունը, պրակտիկայի շարունակականությունը, իրավական որոշակիության սկզբունքի պահպանումը և այլն: Այդ է պատճառը, որ իր գործունեության ընթացքում ՀՀ Սահմանադրական դատարանը հավատարիմ է մնում նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ որոշումների շրջանակներում պարբերաբար վկայակոչելով դրանք⁵:

Այս համատեքստում հարկ ենք համարում ընդգծել կանխատեսելիության առանցքային դերակատարությունը ինչպես կայունության երաշխավորման, այնպես էլ իրավական պետության կայացման տեսանկյունից: Ակնհայտ է, որ հասարակական հարաբերությունների մասնակիցների իրավաչափ ակնկալիքի պաշտպանությունն ու երաշխավորումը կայունության, իրավական որոշակիության և իրավական պետության կայացման կարևորագույն գրավականներից են: Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ դատական ակտերի կանխատեսելիությունը հնարավորություն է տալիս դատավարության հնարավոր մասնակիցներին հնարավորինս ճշգրիտ կանխատեսելու քննության արդյունքները՝ նախքան

² Տե՛ս **Марченко М. Н.** Источники права. М., 2008, էջ 414, **Кряжков В. А., Лазарев Л. В.**, Конституционная юстиция в РФ. М.: БЕК, 1998, էջ 239, **Кампо В.** Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // "Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии". Ер., 2010, 1(47), էջ 27, **Kūris E.** Constitutional Law as Jurisprudential Law – the Lithuanian Experience, with Special Reference to Human Rights // "Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии". Ер., 1(51), 2011, էջ 111:

³ Տե՛ս **Kommers D. P.** The Constitutional Jurisprudence of the Federal Republic of Germany. Duke University Press, Durham and London, 1997, էջ 54:

⁴ Տե՛ս, օրինակ, **Ս. Մանասյան**, նշվ. աշխ., էջ 56-116:

⁵ Տե՛ս, օրինակ, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 27 մայիսի 2008թ. ՍԴՈ-754, 19 հունվարի 2010 թ. ՍԴՈ-852, 25 փետրվարի 2011 թ. ՍԴՈ-943, 5 մայիսի 2012 թ. ՍԴՈ-1027 և մի շարք այլ որոշումներ:

իրենց գործը դատարան ներկայացնելը և այդ առնչությամբ որոշում կայացնելը: Դատական ակտերի կանխատեսելիության մեծացմանը զուգահեռ՝ նվազում է դատավարությունների թիվը՝ նպաստելով առավել կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանը⁶: Ավելին, ընդգծվում է, որ կայունությունն ու իրավական կանխատեսելիությունը արժևորվում են նաև բարոյական տեսանկյունից, քանի որ դրանք երաշխավորում են համանման գործերի նկատմամբ հավասար վերաբերմունք⁷:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ ասվածն ամենին չի ենթադրում իրավական բոլոր երևույթների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների բացարձակ անփոփոխելիություն: Կայունությունը բոլոր դեպքերում չէ, որ ենթադրում է անփոփոխելիություն, ուստի «կայունությունն» ու «զարգացումը կամ փոփոխելիությունը» միմյանց բացառող հասկացություններ չեն: Ավելին, ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական հայեցակարգի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Հետևաբար, վերջինս կարծրացած երևույթ չէ և, հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ կարող է փոփոխվել: Այդ է պատճառը, որ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված է այն տեսակետը, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կայունությունը չի նշանակում, որ դրանք չեն կարող որոշակիացվել, հստակեցվել կամ փոփոխվել՝ Սահմանադրության մեջ և օրենքներում, ինչպես նաև հասարակական ու պետական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց⁸:

Պատահական չէ, որ մի շարք պետություններում, ինչպիսիք են օրինակ՝ ՌԴ-ն, Գերմանիան, Լիտվան, Հունգարիան և այլն, Սահմանադրական դատարանին տրված է նախկինում ընդունած իր որոշումներից շեղվելու ու դրանք փոփոխելու հնարավորություն⁹: Լիտվայի Սահմանադրական դատարանը քննարկվող հիմնախնդրի առնչությամբ

⁶ See u **Prisacariu M. R.** The Predictability of Romanian Constitutional Court Decisions and the Political 'Migration' of Parliamentarians // *Reforme ale Justitiei in Europa de Est*, Institutul European Publishing, Iasi, 2014, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2597715 (վերջին մուտք՝ 05.09.2018):

⁷ See u **Lindquist A. S., Cross C. F.** Stability, Predictability and the Rule of Law: Stare Decisis as Reciprocity Norm, University of Texas School of Law, <https://law.utexas.edu/conferences/measuring/The%20Papers/Rule%20of%20Law%20Conference.crosslindquist.pdf> (վերջին մուտք՝ 05.09.2018):

⁸ See u, օրինակ, **Витрук Н.** Конституционное правосудие. М., 2005, էջ 119, **Бондарь Н.** Судебный конституционализм в России. М., 2011, էջ 130, **Зорькин В.** Современный мир, право и Конституция. М., 2010, էջ 167:

⁹ See u **Зорькин В.** Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // "Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии". Ер., 2008, 2–3 (40–41), էջ 34–35, **Kommers D. P.**, նշվ. աշխ., էջ 54, Ruling № 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/060328.htm> (վերջին մուտք՝ 01.09.2015):

յամբ նույնիսկ արտահայտել է իրավական դիրքորոշում՝ ամրագրելով, որ հակառակ մեկնաբանությունը կնշանակեր, որ Սահմանադրական դատարանը չի իրականացնում սահմանադրական արդարադատություն և չի ապահովում Սահմանադրության գերակայությունը¹⁰: Նշվածի առումով գրականության մեջ ևս կարծիք է արտահայտվել, որ նախադեպերի բացարձակ կայունությունն ու կանխատեսելիությունը հանգեցնում են այնպիսի կոշտ իրավական հարացույցի ձևավորման, որը ունակ չի լինում փոփոխությունների՝ սոցիալական նորմերի և պրակտիկայի փոփոխություններին զուգահեռ¹¹:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական կայունության տեսանկյունից բացառիկ կարևորություն ունեն ինչպես Սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիությունը, այնպես էլ փոփոխվող հասարակական հարաբերություններին սահմանադրական հայեցակարգը համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Հետևաբար, կարծում ենք, որ սահմանադրական կայունության երաշխավորման տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանն օժտված լինի սահմանադրական հայեցակարգը զարգացնելու համարժեք հնարավորություններով, սակայն, մինչև ժամանակ, դրա հիմքում չլինի Սահմանադրական դատարանի անսահմանափակ հայեցողությունը:

Մեր կարծիքով, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը ենթադրում է երկու հնարավոր իրավիճակ՝ 1. երբ անհրաժեշտ է հիմնավորապես փոփոխել Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշումը, 2. երբ անհրաժեշտ է լայնացնել Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշման ծավալը՝ առանց փոփոխելու դրա բովանդակությունը:

Կարծում ենք, որ երկու իրավիճակներում էլ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական հայեցակարգի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելն է՝ Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Ընդ որում, որ առաջին իրավիճակում նշված հավասարակշռությունը ենթադրում է, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները փոփոխել հնարավոր է սուկ այն դեպքում, երբ առկա է

¹⁰ St' u Ruling № 33/03 of the Constitutional Court of the Republic of Lithuania of 28 March 2006, <http://www.lrkt.lt/dokumentai/2006/r060328.htm> (վերջին մուտք՝ 01.09.2015):

¹¹ St' u **Lindquist A. S., Cross C. F.** նշվ. աշխ., <https://law.utexas.edu/conferences/measuring/The%20Papers/Rule%20of%20Law%20Conference.crosslindquist.pdf> (վերջին մուտք՝ 01.09.2018):

կոնկրետ սահմանադրական անհրաժեշտություն, այն է՝ սահմանադրական համապատասխան նորմի կամ դրա ընկալման փոփոխություն:

Ինչ վերաբերում է ներկայացված երկրորդ իրավիճակում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանը, ապա կարծում ենք, որ դա ևս հնարավոր է սահմանադրական նորմի կամ դրա ընկալման փոփոխության դեպքում, սակայն որևէ պարագայում չի կարող սահմանափակվել միայն նշված փոփոխություններին առնչվող իրավիճակներով: Ինչպես նշեցինք, Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական հայեցակարգի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Ավելին, նշված հայեցակարգը կարծրացած երևույթ չէ և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կարող է ընդլայնվել: Ուստի ակնհայտ է, որ դիրքորոշման բովանդակությունը հիմնավորապես չփոփոխելու պարագայում սոսկ վերջինիս ծավալի ընդլայնման դեպքերը չեն կարող պայմանավորված լինել բացառապես սահմանարական նորմի կամ վերջինիս ընկալման փոփոխություններով և կարող են տեղի ունենալ ցանկացած իրավիճակում, եթե պահպանվում է հիշյալ հիմնախնդրի լուծման հիմնական բանալին, այն է՝ Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական հայեցակարգի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Որպես օրինակ կարելի է հիշատակել խտրականության արգելքին առնչվող ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: ՀՀ Սահմանադրական դատարանը 29 հունվարի 2008 թ. ՄԴՈ-731 որոշմամբ արձանագրեց. «ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց **հավասար հնարավորություն կտան իրացնելու**, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները»: Այնուհետև զարգացնելով իր այս իրավական դիրքորոշումները՝ Դատարանը 4 մայիսի 2010 թ. ՄԴՈ-881 որոշմամբ արձանագրեց. «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միև-

նույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից ...: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ տվյալ դեպքում սոցիալական անկախության երաշխիքներ նախատեսելու կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»: 7 հունիսի 2011 թ. ՄԴՈ-967 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը նշեց, որ «ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, որի նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»: 7 հուլիսի 2015 թ. ՄԴՈ-1224 որոշման շրջանակներում Դատարանը նաև արձանագրեց, որ «խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ»:

Նշենք, որ 2015 թ. փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրությունը օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի առնչությամբ նախատեսում է բովանդակային առումով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությանը համանման կարգավորումներ: Այդ առումով հատկանշական է, որ սահմանադրական փոփոխություններից հետո՝ 10 հուլիսի 2018 թ., ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունեց ՄԴՈ-1424 որոշումը, որով վերահաստատեց քննարկվող հարցադրման առնչությամբ նախկինում արտահայտած իր նախկին իրավական դիրքորոշումները:

Վերադառնալով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացմանն առնչվող հարցադրմանը՝ նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը նախատեսում է Սահմանադրական դատարանի կողմից այդ հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա վերանայելու հնարավորություն, եթե 1) փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, 2) ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանա-

դրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրափրավական նշանակություն:

Որոշ հեղինակների կարծիքով, տվյալ պարագայում պետք է խոսք լինի ոչ թե Սահմանադրական դատարանի որոշումների, այլ նրա իրավական դիրքորոշումների վերանայման մասին, քանզի Սահմանադրական դատարանի որոշման վերանայումը առաջ է բերում նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ քաղաքականության փոփոխություն, մինչդեռ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման վերանայումը նշանակում է, որ Սահմանադրական դատարանը փոխում է նախկինում ձևավորված իր դիրքորոշումը և, պայմանավորված հասարակական կյանքի էական փոփոխություններով, նոր գործով վերանայում է սահմանադրական նորմի ընկալումը: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող ունենալ հետադարձ նշանակություն և առաջ բերել նախկինում կայացված որոշման հիման վրա ձևավորված օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի փոփոխություն¹²:

Ակնհայտ է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված «որոշման վերանայում» ձևակերպումը վերաբերում է նաև իրավական դիրքորոշումներին: Սակայն, մեր կարծիքով, քննարկվող դրույթի նպատակը ոչ թե Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, այլ ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ վերջնական եզրահանգման վերանայման առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և իրավական դիրքորոշումներին վերջինս վերաբերում է այնքանով, որքանով դրանց փոփոխությունն անհրաժեշտ է քննարկվող եզրահանգումը վերանայելու համար: Այդ է վկայում նաև Սահմանադրական դատարանի որոշումները իր իսկ կողմից վերանայելու հնարավորություն նախատեսող պետությունների՝ հիշյալ հիմնախնդրին առնչվող արդարադատական պրակտիկան, երբ նմանատիպ դրույթների հիման վրա վերանայվում է Դատարանի վերջնական եզրահանգումը՝ հիմքում ունենալով նախկին իրավական դիրքորոշման փոփոխությունը¹³:

¹² Տե՛ս **Ա. Ղամբարյան**, ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների վերանայման թույլատրելիությունը // Իրավագիտության հարցեր, № 1-2, Եր., 2009, էջ 50:

¹³ Տե՛ս, օրինակ, Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 15 ապրիլի 1997 թ. № 3-56/97 եզրակացությունը Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 4 նոյեմբերի 1996 թ. եզրակացությունը վերանայելու վերաբերյալ, <http://www.lawbelarus.com/repub2008/sub39/text39295.htm> (վերջին մուտք 01.09.2015), Ղազախստանի Հանրապետության Սահմանադրական խորհրդի՝ 24 սեպտեմբերի 2008 թ. № 7 որոշումը Սահմանադրական խորհրդի՝ 26 դեկտեմբերի 2000 թ. № 22/2, 13 դեկտեմբերի 2001 թ. № 16-17/3, 18 մայիսի 2006 թ. № 2 որոշումները վերանայելու վերաբերյալ, <http://www.constcouncil.kz/rus/resheniya/?cid=11&rid=448> (վերջին մուտք 01.09.2015)):

Մինչդեռ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան, ինչպես նշեցինք, այնպիսին է, որ, բացի վերը շարադրվածից, հնարավոր են իրավիճակներ, երբ իրավական դիրքորոշումը փոփոխելու անհրաժեշտությունն առաջանա ոչ թե նախկինում կայացված որևէ որոշում վերանայելու ու վերջնական եզրահանգումը փոփոխելու, այլ նոր գործով որոշում ընդունելու համար: Ակնհայտ է, որ վերջինս, ի տարբերություն նախկինում կայացված վերջնական եզրահանգման վերանայման, վերաբերում է ոչ թե արդեն լուծված գործի ճակատագրին, այլ անհրաժեշտ է սահմանադրական հայեցակարգի զարգացման և նոր գործերով որոշումներ ընդունելու համար, ուստի բոլոր դեպքերում ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն¹⁴:

Հետևաբար, նմանատիպ իրավիճակներում իրավական դիրքորոշման փոփոխությունը չի կարող կախվածության մեջ դրվել այնպիսի նախապայմաններից, ինչպիսիք են նախկին որոշման կոնկրետ տեսակը, դրա ընդունման ժամանակահատվածը կամ դիմողի կողմից հենց նշված հարցին առնչվող դիմում ներկայացնելը: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68 հոդվածի 16-րդ մասի քննարկվող կարգավորումը վերաբերում է սուսկ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը և բացառում է որոշումների այլ տարատեսակների վրա հիշյալ կարգավորման տարածումը: Ավելին, նշված հիմքով Սահմանադրական դատարանը համապատասխան որոշումները կարող է վերանայել սուսկ օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա: Հավելենք նաև, որ մինչ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունումը «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. հունիսի 1-ի ՀՀ օրենքը նախատեսում էր, որ որոշման վերանայմանն առնչվող քննարկվող կարգավորումն առնչվում է սուսկ այն դեպքերին, երբ գործով ըստ էության որոշման ընդունումից անցել է առնվազն 7 տարի:

Վերը շարադրվածը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանն առնչվող դրույթի

¹⁴ Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասն ուղղված է անցյալին: Վերջինիս գործառնություն է իրավական շրջանառությունից հանել Սահմանադրությանը հակասող իրավական ակտը, մինչդեռ որոշման պատճառաբանական մասն ուղղված է ապագային և իրականացնում է ոչ միայն ընդունված որոշումը հիմնավորելու, այլ նաև կանխարգելիչ, օրենսդրին որոշակի սահմանադրական չափանիշների ուղղորդող գործառնությո՞, որոնցից վերջինս չի կարող հետ կանգնել (տե՛ս **Курис Э.** Конституционное правосудие. Вопросы теории и практики. Ер., 2004, էջ 37):

հիմնական նպատակը ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ վերջնական եզրահանգումը վերանայելու առնչությամբ կարգավորումներ ամրագրելն է, և այն չի վերաբերում հիշյալ նպատակային ուղղվածությունը չունեցող վերը նշված այլ իրավիճակներում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխությանը: Հակառակ մոտեցման պարագայում անխուսափելի է Սահմանադրական դատարանի պրակտիկայի ու սահմանադրական հայեցակարգի կարծրացած համակարգի ձևավորումը, ինչն իր հերթին կարող է վտանգի տակ դնել պետության ողջ իրավական անվտանգությունը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանը պետք է սահմանադրական հայեցակարգի զարգացման համարժեք հնարավորություններ ունենա, և այդ առումով չի կարող ընդունելի լինել որևէ այլ չափանիշի կամ նախապայմանի առկայություն, քան Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական հայեցակարգի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելը՝ Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ:

Հիշյալ համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ նաև սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների գործողությանն առնչվող խնդիրներին, մասնավորապես այն հարցադրմանը, թե շարունակում են արդյոք գործել սահմանադրական փոփոխություններից առաջ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, և եթե այո՝, ապա ինչ ծավալով:

Կարծում ենք՝ այն մոտեցումը, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները սահմանադրական փոփոխություններից հետո պետք է մեխանիկորեն կորցնեն իրենց իրավաբանական ուժը, տրամաբանական չէ, և չի կարող համարժեք արտահայտել նշված դիրքորոշումների սահմանադրական էությունն ու դրա հիմքում ընկած տրամաբանությունը:

Սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների առանձնահատկություններին առնչվող մեր բազմաթիվ գիտական հետազոտությունների շրջանակներում ներկայացված վերլուծությունները¹⁵ հիմք են տալիս եզրակացնելու, որ 1. սահմանա-

¹⁵ St' u, օրինակ, Манасян А. Стабильность и развитие Конституции как важнейшие предпосылки укрепления конституционализма в современных государствах // "Ученые записки юридического факультета Санкт-Петербургского государственного экономического университета", 2015, № 38 (48), էջ 53-61, Манасян А. Развитие Конституции Республики Армения как важнейшая предпосылка укрепления армянского конституционализма // "Сравнительное конституционное обозрение", 2012, № 3 (88), изд. Институтом права и

դրական կայունությունը ենթադրում է Սահմանադրության «միջուկը», առանցքը կազմող նորմերի անփոփոխելիություն, 2. Սահմանադրության զարգացումը ենթադրում է սահմանադրական նորմերի միջև կուտակային կապի առկայություն, 3. Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների կարևորագույն առանձնահատկություններից են դրանց կանխատեսելիությունն ու Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականությունը:

Ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների՝ սահմանադրական փոփոխություններից հետո մեխանիկորեն ուժը կորցնելու գաղափարը չի կարող համապատասխանել նշված տրամաբանությանը, քանզի բարեփոխումների շնորհիվ առնվազն հիմնարար փոփոխությունների չեն կարող ենթարկված լինել Սահմանադրության առանցքը կազմող նորմերը, ավելին՝ սահմանադրական հին և նոր կարգավորումների միջև պետք է պահպանված լինի կուտակային կապը: Իսկ նշվածն իր հերթին ենթադրում է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կանխատեսելիության և Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության երաշխավորման անհրաժեշտություն:

Հետևաբար, թեև սահմանադրական փոփոխություններով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները կարող են փոփոխվել, իսկ սահմանադրական հայեցակարգը զարգանալ, սակայն դա տրամաբանական կարող է լինել միայն այն դեպքում՝ երբ խոսքը փոփոխված սահմանադրական նորմի կամ նորմի փոփոխված ընկալմանն առնչվող իրավական դիրքորոշումների մասին է: Նույն կերպ՝ անտրամաբանական կլիներ ենթադրել, որ սահմանադրական չփոփոխված նորմը կամ դրա չփոփոխված ընկալումը կարող է հանգեցնել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխության:

Այդ առումով կարելի է հիշատակել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին առնչվող իրավական դիրքորոշումները:

Արդեն նշեցինք, որ 2015 թ. փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրությունը օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի առնչությամբ նախատեսում է բովանդակային առումով 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությանը համանման կարգավորումներ: Հետևաբար, ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի նման իրավական դիրքորոշումների պարագայում վերջիններիս իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու մասին տեսակետը տրամաբանական չէ և կարող է ձևախեղել սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների կանխատեսելիության և Դատարանի պրակտի-

կայի շարունակականության գաղափարների ամբողջ էությունն ու հիմքում ընկած տրամաբանությունը: Այլ հարց է, որ, ինչպես արդեն նշեցինք, սահմանադրական հայեցակարգը կարող է զարգանալ արդեն իսկ քննարկված իրավիճակներում և սկզբունքների պահպանմամբ:

Հավելենք, որ միջազգային պրակտիկայում ևս բացառիկ դեպքերում կարելի է հանդիպել սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրավաբանական ուժը մեխանիկորեն կորցնելու ինստիտուտին: Հունգարիայի՝ 2011 թ. ընդունված Հիմնական օրենքում 2013 թ. կատարված չորրորդ փոփոխությամբ Հիմնական օրենքի «Եզրափակիչ և անցումային» դրույթներում ամրագրվեց, որ մինչև Հիմնական օրենքն ուժի մեջ մտնելն ընդունված Սահմանադրական դատարանի որոշումները ուժը կորցրած են ճանաչվում: Միննույն ժամանակ նախատեսվեց, որ այս դրույթը չի անդրադառնում այդ որոշումների իրավական հետևանքներին¹⁶: Հատկանշականն այն է, որ մինչ այդ՝ 2012 թ., Հունգարիայի Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում էր արտահայտել այն մասին, որ նոր գործերով Սահմանադրական դատարանը կարող է օգտագործել մինչև Հիմնական օրենքն ուժի մեջ մտնելն ընդունված որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, եթե դա հնարավոր է Հիմնական օրենքի այնպիսի կոնկրետ նորմերի և դրանց մեկնաբանման կանոնների պայմաններում, որոնք ունեն նախկին Սահմանադրությունում ամրագրված նույն կամ համանման բովանդակությունը: Հիմնական օրենքի՝ չփոփոխված հիմնարար արժեքներին, մարդու իրավունքներին և ազատություններին և սահմանադրական այլ չփոփոխված ինստիտուտներին առնչվող Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը¹⁷:

Վերը շարադրված վերլուծությունը նկատի ունենալով և չանդրադառնալով կոնկրետ պետության սահմանադրական քաղաքականության հիմքում ընկած շարժառիթներին՝ կարծում ենք, որ սահմանադրական նման կարգավորումների նախատեսումը, այն էլ Սահմանադրական դատարանի արդեն իսկ արտահայտած հակադիր իրավական դիրքորոշումների պայմաններում, խնդրահարույց է և կարող է ձևախեղել քննարկվող ինստիտուտների հիմքում դրված ամբողջ սահմանադրական արժեքանությունը՝ խաթարելով սահմանադրական կայունության գաղափարը:

Ամփոփելով Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

¹⁶ St´u Հունգարիայի Հիմնական օրենքի «Եզրափակիչ և անցումային դրույթներ»-ի 5-րդ հոդված, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2018/10/fundamental_law_of_hungary-7.pdf (վերջին մուտք՝ 18.10.2018):

¹⁷ St´u Հունգարիայի Սահմանադրական դատարանի՝ 22/2012 (V, 11.) որոշում, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2017/11/en_0022_2012.pdf (վերջին մուտք՝ 18.10.2018):

րոշումների զարգացմանն առնչվող վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել.

- Սահմանադրական կայունության կարևորագույն գրավականներից է Սահմանադրական դատարանի գործունեության և իրավական դիրքորոշումների կանխատեսելիությունը:

- Սահմանադրական փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների՝ մեխանիկորեն ուժը կորցնելու վերաբերյալ մոտեցումը տրամաբանական չէ, համարժեք չի արտահայտում նշված դիրքորոշումների սահմանադրական էությունն ու դրա հիմքում ընկած տրամաբանությունը և ձևախեղում է սահմանադրական կայունության, Սահմանադրության զարգացման, Սահմանադրական դատարանի գործունեության կանխատեսելիության և պրակտիկայի շարունակականության գաղափարները:

- Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական հայեցակարգի ձևավորումը ոչ թե մեկանգամյա, այլ անընդհատ ու աստիճանաբար իրականացվող գործընթաց է: Ավելին, նշված հայեցակարգը կարծրացած երևույթ չէ, և հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ կարող է փոխվել, ինչը ենթադրում է Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացում:

- Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը կարող է ենթադրել երկու հնարավոր իրավիճակների առկայություն՝ 1. երբ անհրաժեշտ է հիմնավորապես փոփոխել Սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշումը, 2. երբ անհրաժեշտ է ընդլայնել Սահմանադրական դատարանի՝ նախկինում արտահայտած կոնկրետ իրավական դիրքորոշման ծավալը՝ առանց փոփոխելու վերջինիս նախկին բովանդակությունը:

- Երկու դեպքում էլ քննարկվող հիմնախնդրի արդյունավետ լուծման հիմնական բանալին Սահմանադրական դատարանի պրակտիկայի շարունակականության ու կանխատեսելիության և սահմանադրական հայեցակարգի զարգացման հիմքում ընկած արժեքների միջև յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարակշռություն գտնելն է՝ Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանմամբ: Առաջին դեպքում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները հնարավոր է փոփոխել, եթե առկա է կոնկրետ սահմանադրական անհրաժեշտություն, այն է՝ սահմանադրական համապատասխան նորմի կամ դրա ընկալման փոփոխությունը: Երկրորդ դեպքում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացումը չի սահմանափակվում միայն սահմանադրական նորմի կամ դրա ընկալման փոփոխություններով և կարող է իրացվել սահմանադրական հայեցակարգի զարգացումը ենթադրող անհրաժեշտ ցանկացած այլ իրավիճակում՝

սահպանելով հիմնախնդրին վերաբերող առանցքային և արդեն իսկ ներկայացված չափանիշը:

Բանալի բառեր – սահմանադրական կայունություն, սահմանադրական հայեցակարգ, հրավական դիրքորոշումների զարգացում, պրակտիկայի կանխատեսելիություն և շարունակականություն

АНАИТ МАНАСЯН – *Некоторые вопросы развития правовых позиций Конституционного суда в контексте гарантирования конституционной стабильности.* – В статье утверждается, что после конституционных изменений нелогично механически аннулировать прежние правовые позиции Конституционного суда. Это не выражает суть указанных позиций и искажает идеи конституционной стабильности, предсказуемость деятельности КС и её непрерывность. Позиции Конституционного суда могут развиваться, т.к. формирование конституционной доктрины является собой длительный процесс. Это предполагает две возможные ситуации: когда необходимо, во-первых, фундаментально изменить прежнюю правовую позицию КС и, во-вторых, расширить её объём, не меняя содержания. В обоих случаях ключом к эффективному решению становится баланс между непрерывностью и предсказуемостью практики Конституционного суда и ценностями, лежащими в основе конституционной доктрины.

Ключевые слова: конституционная стабильность, конституционная доктрина, развитие правовых позиций, предсказуемость и непрерывность практики

АНАИТ МАНАСЯН – *Some Issues of the Development of Constitutional Court Legal Positions in the Context of Guaranteeing Constitutional Stability.* – The issues of the development of Constitutional Court legal positions in the context of guaranteeing constitutional stability are discussed in the article presented. The author concludes that the approach regarding the mechanical invalidation of the Constitutional Court previous legal positions after constitutional amendments isn't logical, doesn't equivalently express the constitutional essence of the mentioned positions and distorts the ideas of constitutional stability, constitutional developments, predictability of the activities of the Constitutional Court and continuity of its practice. Constitutional Court legal positions can be developed, as the formation of the constitutional doctrine isn't a one-step, but a continuous process. It presupposes the existence of two possible situations: 1. when there is a necessity to fundamentally change the concrete previous legal position of the Constitutional Court, 2. when there is a necessity to broaden the scope of the previous concrete legal position of the Constitutional Court without changing its previous content. In both cases, the main key for the effective solution of the discussed issue is finding a balance between continuity and predictability of the Constitutional Court practice and values, underlying the development of the constitutional doctrine, in each concrete situation.

Key words: constitutional stability, constitutional doctrine, development of legal positions, predictability and continuity of the practice

Ներկայացվել է՝ 15.01.2019, գրախոսվել է՝ 01.02.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

**ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԼՈՔՉԵՅՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ**

ՆԱՐԵԿ ՇԱՐԱՖՅԱՆ

2017-2018 թվականներին նորությունները պտտվում էին տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում նորանոր ոլորտներ գրավող Բլոքչեյն տեխնոլոգիաների (այսուհետ նաև՝ Բլոքչեյն) շուրջ: Ծրագրային նոր լուծումների շնորհիվ դրանք նպաստեցին մի շարք ոլորտներում միջնորդների ինստիտուտի դերի նվազեցման: Դրանցից ամենանշանակալին և ամենաադմկահարույցը, թերևս, կրիպտոարժույթների շուկայական կապիտալիզացիայի էքսպոնենտալ աճն էր, ինչը դուրս էր դրամավարկային շուկաների կարգավորողների՝ կենտրոնական կամ ազգային բանկերի վերահսկողության շրջանակներից:

Չնայած այն հանգամանքին, որ տեղեկատվական տեխնոլոգիաների այս լուծումը հիմնականում զուգորդվեց կրիպտոարժույթների տատանողականության և դրանց իրավաչափության կամ կարգավորման անհնարինությանն առնչվող հարցերի հետ, Բլոքչեյն տեխնոլոգիաներով տրված լուծումները շատ ավելի բազմազան են, քան միայն արժույթային շուկաների կարգավորումների շրջանցումն է:

Սույն աշխատանքի նպատակն է անձնական տվյալների պաշտպանության ոլորտում Բլոքչեյնի ներդրմամբ առաջացող իրավական խնդիրների, դրանց հնարավոր պատասխանների վերհանումը, վերլուծումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նման իրավական խնդիրների ուսումնասիրությունը: Դրա համար, նախ, անհրաժեշտ է պարզաբանել հողվածում օգտագործվող հասկացությունները:

Բլոքչեյնը տվյալների բազայի պահպանման նոր համակարգ է, որը թույլ է տալիս անձանց, ովքեր միմյանց չեն ճանաչում և չեն վստահում, ստեղծել իրենցից յուրաքանչյուրի վերաբերյալ որոշակի տվյալների (օրինակ՝ իրավունքների կամ պարտավորությունների) ռեգիստր, որը ինքնին կապահովի դրա հավաստիությունը՝ առանց ռեեստրավարի կամ տվյալների արժանահավատությունը ստուգող երրորդ անձի¹: Բլոքչեյնի կիրառության բնագավառներից է, օրինակ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ռեգիստրի ծրագրավորումը²:

¹ Տե՛ս The great chain of being sure about things. (2015, October 31). *The Economist* <https://www.economist.com/news/briefing/21677228-technology-behind-bitcoin-lets-people-who-do-not-know-or-trust-each-other-build-dependable>, մուտք՝ 20.03.2018:

² Տե՛ս https://chromaway.com/papers/Blockchain_Landregistry_Report_2017.pdf, մուտք՝ 22.03.2018:

Ինչպես հայտնի է, այս ոլորտում ռեգիստր վարելու ամենատարածված մեթոդը առայժմ կառավարություններին առընթեր անշարժ գույքի կադաստրի մարմիններում դրա հաշվառումն ու գույքագրումն է:

Բլոքչեյն տեխնոլոգիաները առնչվում են իրավունքի՝ անձնական տվյալների պաշտպանությունը երաշխավորող իրավական ակտերին: Այսինքն՝ Բլոքչեյնի միջոցով կարող են պահպանվել ցանկացած տվյալներ, այդ թվում՝ անձնական, այն իր տվյալների պաշտպանությունը երաշխավորող հատուկ իրավական ռեժիմ ունի:

Չնայած իրավունքի ներդաշնակեցման փորձերին՝ տվյալների պաշտպանության ռեժիմները միշտ չէ, որ համընկնում են տարբեր պետություններում: Այդ իսկ պատճառով հարկ է նախ հիմնավորել անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության կիրառելիությունը Բլոքչեյնի նկատմամբ, և այնուհետև վեր հանել Բլոքչեյնի նկատմամբ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի կիրառումից բխող իրավական խնդիրները:

Նախ անհրաժեշտ է հասկանալ՝ ինչ է Բլոքչեյնը:

«Բլոքչեյն» հասկացությունը առավելապես տեխնիկական է և ոչ թե իրավական: Սակայն 2018 թվականի հունվարի 25-ին Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունը հրապարակել է «Թվային ֆինանսական ակտիվների մասին» օրենքի նախագիծ, որը դեռևս հանրային քննարկումների փուլում է, և որով փորձ է կատարվել պատասխանելու այս տեխնոլոգիայի կիրառման ժամանակ առաջացող մի շարք հարցերի³:

Օրինագծի 2-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը տալիս է «թվային գործարքների ապակենտրոնացված ռեեստրի» սահմանումը, համաձայն որի թվային գործարքների ապակենտրոնացված ռեեստրը թվային այնպիսի գործարքների համակարգված բազա է, որ պահպանվում, միաժամանակ ստեղծվում և թարմացվում է բոլոր կրիչների վրա՝ ռեեստրի բոլոր մասնակիցներին նախապես տրված և բոլոր մասնակիցների բազայի նույնականությունը ապահովող ալգորիթմի հիմքով:

Այս սահմանումը Բլոքչեյնի հիմքում դրված տեխնոլոգիայի կամ նույնական տեխնիկական լուծումների իրավական կողմն է:

Ֆրանսիայի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական օրենսգրքի 223-րդ հոդվածով ևս մասնակիորեն փորձ է արվել սահմանելու Բլոքչեյնի մի տեսակը, համաձայն որի՝ կրիպտոարժույթներով գործարքները պետք է գրանցված լինեն միասնական օգտագործման համար նախատեսված էլեկտրոնային ծրագրով, որը թույլ է տալիս պայմանների, այդ թվում՝ անվտանգության նույնականացում:

Այս սահմանումը հաճախ համարվում է ոչ ամբողջական, քանի որ չի ներառում Բլոքչեյնի այնպիսի առանձնահատկություններ, ինչպի-

³ Ст' у Проект федерального закона РФ «О цифровых финансовых активах» // https://www.minfin.ru/ru/document/?id_4=121810&area_id=4&page_id=2104&popup=Y%20#, մուտք՝ 20.03.2018:

սիք են ապակենտրոնացված կառավարումը և կայունությունը⁴:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս չկան նորմատիվ իրավական ակտեր, որոնք կկարգավորեն Բլոքչեյնի կիրառմանը վերաբերող իրավահարաբերությունները: Դրամավարկային ոլորտը կարգավորող մարմինը, այն է՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, որդեգրել է սպասողական մարտավարություն, ինչը դեռևս արդարացված է, սակայն մոտ ապագայում կանոնակարգումների անհրաժեշտությունը, ենթադրում ենք, կլինի անխուսափելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ սահմանումները բավարար չեն պատկերացնելու համար Բլոքչեյնի էությունը, հարկ ենք համարում որոշակիորեն պարզաբանել այդ մոդելը պրակտիկ տեսանկյունից:

Բլոքչեյնը (անգլերենից՝ «բլոկների շղթա») բլոկներ կոչվող և շարունակաբար աճող այնպիսի գրանցումների ցուցակ է, որոնք միմյանց հետ կապված են և պաշտպանված կրիպտոգրաֆիայի միջոցով: Յուրաքանչյուր բլոկ սովորաբար պարունակում է նախորդ բլոկի կրիպտոգրաֆիկ «հեշ»-ը (տվյալների կոդավորմամբ ստացվող տվյալները նույնականացնող համար), ստեղծման սկիզբը և գործարքի ժամանակը: Բլոքչեյնը արգելափակում է իր մեջ եղած տեղեկատվության ցանկացած մոդիֆիկացիա: Այն բաց, ապակենտրոնացված լեռներ է, որը հնարավորություն է ընձեռում գրանցելու կողմերի միջև գործարքների արժանահավատությունը⁵:

Բլոքչեյնի աշխատանքը ապահովում է յուրաքանչյուր բլոկի՝ ցանցի մասնակիցների կողմից հաստատման մեխանիզմը: Յուրաքանչյուր բլոկ պարունակում է որոշակի գործարքների խմբի մասին կոդավորված տվյալներ: Նախորդ բլոկում կատարվող միջամտությունը փոխում է դրա, ինչպես նաև դրան հաջորդող բլոկների հեշերը, իսկ անհամապատասխանության պատճառով այլ մասնակիցների կողմից դա չհաստատվելու դեպքում՝ մերժվում է:

1. Բլոքչեյնի առնչությունը անձնական տվյալների պաշտպանության իրավունքին

Անհրաժեշտություն է առաջանում հասկանալու անձնական տվյալների պաշտպանության ներպետական և միջազգային ակտերի հնարավոր կիրառելիությունը Բլոքչեյնում, որը, ինչպես արդեն նշվել է, թվային գործարքների ապակենտրոնացված ռեեստր է: Հաշվի առնելով անձնական տվյալների պաշտպանության ոլորտում միջազգային լավագույն փորձի ամփոփման արդյունք հանդիսացող «Ընդհանուր

⁴ Տե՛ս «La Blockchain a sa première définition légale». (2016, 20 mai). *L'Usine Digitale* <https://www.usine-digitale.fr/article/la-blockchain-a-sa-premiere-definition-legale.N392352>, մուտք՝ 20.03.2018:

⁵ Տե՛ս **Marco Iansiti, Karim R. Lakhani.** (2017). The Truth About Blockchain. *Harvard Business Review. January-February 2017 issue*, էջ118-127: <https://hbr.org/2017/01/the-truth-about-blockchain>, մուտք՝ 25.03.2018

տվյալների պաշտպանության կանոնակարգի» (այսուհետ՝ ՀՏՊԿ) դրույթները՝ Բլոքչեյնը կոնիտարկվի այդ փաստաթղթում ամրագրված սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Վերոնշյալ հարցին պատասխանելու համար նախ պետք է ուշադրություն դարձնել «cloud computing»-ի (քլաուդ քոմփյութինգ) ոլորտից ստացված իրավական դասերին և այն բանին, թե ինչպես է այն կիրառելի Բլոքչեյնի նկատմամբ⁶: Cloud computing-ը ընդհանուր եզրույթ է համացանցի միջոցով ծառայություններ մատուցելու համար: Այն հնարավորություն է ընձեռում կազմակերպություններին կոմունալ եղանակով սպառելու հաշվարկային ռեսուրսներ, ինչպիսիք են վիրտուալ մեքենան (VM), պահեստավորումը և այլն, ինչպես էլեկտրաէներգիայի դեպքում՝ ենթակառուցվածքներ ստեղծելու և պահպանելու փոխարեն⁷:

Մասնավորապես, ինչպես cloud computing-ի դեպքում, Բլոքչեյնում ևս չկա բոլոր հարցերին մեկ պատասխան՝ հաշվի առնելով դրա օգտագործման դեպքերի և կառուցվածքների բազմազանությունը: Բլոքչեյնի և cloud computing միջավայրերի մեծ մասի միջև հիմնական տարբերությունն այն է, որ Բլոքչեյն տեխնոլոգիաները չեն հիմնվում պահեստավորման և հաշվարկային ռեսուրսների մեկ մատակարարի վրա: Բլոքչեյնի յուրաքանչյուր օգտատեր կիրառում է իր հաշվարկային ռեսուրսը՝ հավասարը հավասարին (peer-to-peer) սկզբունքով: Ավելին, յուրաքանչյուր օգտատեր իր համակարգչում ունի ապակենտրոնացված լեդջերի իր կրկնօրինակը: Հետևաբար, Բլոքչեյն համակարգի օգտատերը կարող է միաժամանակ լինել այն տվյալների վերահսկողը, որոնք ինքն է ներբեռնում Բլոքչեյն համակարգ, և տվյալներ մշակող՝ Բլոքչեյնի ամբողջական կրկնօրինակը իր համակարգչում պահեստավորելու եղանակով:

Բլոքչեյնի առնչությունը անձնական տվյալների պաշտպանության հետ հանգում է հետևյալ իրավական հարցադրումներին.

1. Արդյո՞ք Բլոքչեյնը մշակում է անձնական տվյալներ:
2. Արդյո՞ք հեշը անձնական տվյալ է, թե՞ անհասցեատեր տվյալ:
3. Ի՞նչ է հանրային բանալին («public key»):
4. Ո՞վ է տվյալներ մշակողը և տվյալներ վերահսկողը Բլոքչեյն տեխնոլոգիաների համատեքստում:

Այս հարցերին պատասխանելով՝ կհասկանանք, որ Բլոքչեյն որոշ ծրագրեր այնքան կատարելագործված են, որ տվյալների կառավարման անհրաժեշտությունը հասցնում է հնարավոր նվազագույնի: Ի հակադրություն դրա՝ որոշ ծրագրերի հատուկ է տվյալների մշակման բարձր ռիսկայնություն, որը պահանջում է տվյալների պաշտպանվածության ազդեցության գնահատում:

⁶ Տե՛ս **Winston Maxwell, John Salmon.** (2017, September). *Hogan Lovells* <https://www.hlengage.com/uploads/downloads/5425GuidetoblockchainV9FORWEB.pdf>, մուսք՝ 26.04.2018:

⁷ Տե՛ս <http://searchcloudcomputing.techtarget.com/definition/cloud-computing>, մուսք՝ 26.04.2018:

Այն հարցը՝ մշակում է Բլոքչեյնը անձնական տվյալներ, թե՞ ոչ, ուղղակիորեն առնչվում է Բլոքչեյնի և ապակենտրոնացված լեդջերների սահմանմանը: Ինչպես արդեն նշվել է, վերջիններս կոնկրետ տեսակի տվյալների բազա են (թեև կողավորված տարբերակով): Այսինքն՝ նախ պետք է հասկանալ, թե ինչ տվյալներ են պահպանվում: Արդեն նշված տվյալներից կասկած են առաջացնում բլոկներում գրառված հեշերը:

«Հոդված 29. Տվյալների պաշտպանության աշխատանքային խումբը»⁸ (այսուհետ նաև՝ Հոդ. 29 ԱԽ) խորհրդակցական մարմին է՝ կազմված ԵՄ յուրաքանչյուր անդամ պետության տվյալների պաշտպանության մարմնի, Տվյալների պաշտպանության եվրոպական վերահսկողի և Եվրոպական հանձնաժողովի մեկական ներկայացուցիչներից: Այն գործում է 1996 թվականից, իսկ կազմը և նպատակը սահմանված են Տվյալների պաշտպանության դիրեկտիվի 29-րդ հոդվածով⁹:

ԱԽ-ի 2014 թ. ընդունած 05/2014 (ԱԽ 216) կարծիքը (այսուհետ նաև՝ Կարծիք) սահմանել է անանունացված (անոնիմացված) և կեղծանունացված (պսևդոնիմացված) տվյալների տարբերությունները¹⁰: Դա կարևոր է, քանի որ անձնական տվյալների պաշտպանության նորմերը կիրառելի չեն անանունացված տվյալների նկատմամբ, քանի որ այդպիսի տվյալները հետադարձ ուժով վերագրելի չեն անհատներին: Այնուամենայնիվ, տվյալների՝ անանունացված համարվելու համար նախատեսված սահմանաչափը շատ բարձր է: Համաձայն վերոնշյալ Կարծիքի՝ անանունացումը մշակել է անձնական տվյալների այնպիսի մեխանիզմ, որը կոչված է կանխելու անհատի նույնականացումը:

Տվյալներ վերահսկողները պետք է հաշվի առնեն ցանկացած միջոց, որը ողջամտորեն կարող է նույնականացման հնարավորություն ընձեռել (թե՛ վերահսկողի և թե՛ երրորդ անձի կողմից):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալների հեշավորումը Բլոքչեյնում թույլ է տալիս միմյանց կապել տարբեր գրառումներ, որոնցում օգտագործվում է նույն public key-ը՝ հեշավորումը պարզապես կորակվի տվյալների կեղծանունացման և ոչ թե անանունացման տեխնիկա:

Այս բարձր ստանդարտը կշարունակի գործել նաև «Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի» ներքո¹¹: Համաձայն ԸՏՊԿ-ի 4-րդ հոդվածի 5-րդ կետի՝ «կեղծանունացումը նշանակում է անձնական տվյալների մշակում այնպիսի եղանակով, որ անձնական

⁸ «Տվյալների պաշտպանության մասին» ԵՄ 95/46/ԵՀ հռչակագրի 29-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս http://ec.europa.eu/newsroom/article29/news.cfm?item_type=1358, մուտք՝ 01.05.2018:

¹⁰ Տե՛ս Opinion 05/2014 on Anonymisation Techniques, Adopted on 10 April 2014 by Article 29 Data Protection Working Party, 0829/14/EN: https://cnpd.public.lu/content/dam/cnpd/fr/publications/groupe-art29/wp216_en.pdf, մուտք՝ 01.05.2018:

¹¹ Տե՛ս **Gabe Malloff**. (2016, February 12). Top 10 operational impacts of the GDPR: Part 8 – Pseudonymisation. *International Association of Privacy Professionals*: <https://iapp.org/news/a/top-10-operational-impacts-of-the-gdpr-part-8-pseudonymization/>, մուտք՝ 01.05.2018:

տվյալները առանց լրացուցիչ տեղեկություն օգտագործելու այլևս վերագրելի չլինեն անձնական տվյալների հատուկ սուբյեկտին այն պայմանով, որ այդպիսի տեղեկությունը պահվում է առանձին, և անձնական տվյալների՝ նույնականացված կամ նույնականացման ենթակա ֆիզիկական անձին անվերագրելիությունը ապահովելու համար պետք է իրականացվեն տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ»:

Վերոշարադրյալից բխում է, որ հեշավորված տվյալները ևս կարող են անձնական տվյալներ լինել, և, հետևաբար, Բլոքչեյնը կարող է ընդգրկվել անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ նորմերի կարգավորման առարկայում:

ԸՏՊԿ-ն սահմանում է նաև նոր հասկացություն, որին փաստաթղթում տրված է «անձնական տվյալների պաշտպանություն ըստ կառուցվածքի» անվանումը («data protection by design»): Վերջինս սահմանված է Կանոնակարգի 25-րդ հոդվածով. «1. Հաշվի առնելով մշակման (անձնական տվյալների - Ն. Շ.) զարգացածության մակարդակը, կիրառական նշանակությունը և դրա բնույթը, շրջանակը, համատեքստը և նպատակները, ինչպես նաև մշակմամբ առաջացող ֆիզիկական անձանց իրավունքների և ազատությունների խախտման տարբեր հավանականության և ազդեցության ռիսկերը՝ վերահսկողը պարտավոր է թե՛ մշակման եղանակները որոշելիս, թե՛ մշակելիս արդյունավետորեն ներդնել տեխնիկական և կազմակերպչական համապատասխան միջոցներ (ինչպես կեղծանունացումը)՝ նախատեսված անձնական տվյալների պաշտպանության սկզբունքների պահպանման համար, որոնցից է տվյալների օպտիմալացումը, և մշակման գործընթացում ներդնել անհրաժեշտ երաշխիքներ սույն Կանոնակարգի պահանջների պահպանման նպատակով ու պաշտպանել տվյալների սուբյեկտների իրավունքները:

2. Վերահսկողը պարտավոր է ներդնել տեխնիկական և կազմակերպչական համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ ի սկզբանե մշակվեն միայն հատուկ նպատակի համար անհրաժեշտ անձնական տվյալները: Այդ պարտականությունը վերաբերում է հավաքված անձնական տվյալների քանակին, դրանց մշակման ծավալին, պահպանման ժամկետին և դրանց հասանելիությանը: Նման միջոցները մասնավորապես պետք է ապահովեն, որ անձնական տվյալները առանց անհատի միջամտության հասանելի չլինեն անսահմանափակ թվով անձանց»:

Համաձայն «անձնական տվյալների պաշտպանություն ըստ կառուցվածքի» մոդելի՝ Բլոքչեյն տեխնոլոգիաների հիման վրա մշակվող ցանկացած ծրագիր ևս պետք է համապատասխանեցվի այս պահանջներին՝ օգտատերերին հնարավորություն ընձեռելով օգտվելու իրենց անձնական տվյալների պաշտպանության իրավունքից հենց ծրագրին հատուկ լուծումների միջոցով:

Այսպիսով, Բլոքչեյն տեխնոլոգիաները ԸՏՊԿ-ի իմաստով կատա-

րում են տվյալների կեղծանունացում, քանի որ այդ կողավորված տվյալները համապատասխան ջանքի ներդրման դեպքում կարող են հետադարձ ճանապարհով վերագրվել անհատներին¹²: Մակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք ԸՏՊԿ-ով երաշխավորված իրավունքները հնարավոր է ապահովել Բլոքչեյնի դեպքում:

2. Անձնական տվյալների պաշտպանության խնդիրները Բլոքչեյնում

2.1. Անձնական տվյալներ վերահսկող և մշակող

Արդեն վերլուծեցինք «անձնական տվյալների պաշտպանությունը ըստ կառուցվածքի» մոդելը, սակայն պատասխան չտրվեց այն հարցին, թե ով է Բլոքչեյն տեխնոլոգիաների դեպքում նման պարտականություն կրողը (տվյալներ վերահսկողը): Մովորաբար, երբ վերլուծվում են անձնական տվյալների պաշտպանության նորմերին համապատասխանելիության հարցերը, առաջին քայլը տարբեր կողմերի իրավական կարգավիճակը հասկանալն է:

Անհրաժեշտ է պատասխանել երկու հարցի.

1. Ո՞վ է անձնական տվյալներ վերահսկողը (նա, ով որոշում է անձնական տվյալների մշակման նպատակներն ու եղանակները և ունի առաջնային պատասխանատվություն համակարգերը անձնական տվյալների պաշտպանության նորմերին համապատասխան լինելու համար):

2. Ո՞վ է անձնական տվյալներ մշակողը (նա, ով գործում է վերահսկողի անունից):

Այս հարցերը հատկապես խնդրահարույց են ապակենտրոնացված լեղջերների դեպքում, ինչպիսին է Բլոքչեյնը: Մեկից ավելի անձինք կարող են որակվել որպես կոնկրետ մշակման տեսակի համար անձնական տվյալներ վերահսկող: Այդպիսով, Բլոքչեյն ցանցի անձնական տվյալների պաշտպանության օրենսդրական պահանջները պահպանելու համար պատասխանատվություն կարող են կրել մեկից ավելի անձինք: Թե որ մասնակիցը որ դրույթների համար կլինի պատասխանատու, կախված կլինի անձնական տվյալների համատեղ վերահսկման ձևից: Անհրաժեշտություն կլինի մասնակիցների միջև կնքել համապատասխան պայմանագրեր:

ԸՏՊԿ-ի ներքո պատասխանատվություն կրում են ոչ միայն վերահսկողները, այլև անձնական տվյալներ մշակողները¹³: Դրանք գործում են անձնական տվյալներ վերահսկողի անունից:

Քանի որ համապատասխան պահանջները գործում են կախված տվյալ անձի՝ վերահսկող կամ մշակող լինելու հանգամանքից, կարևոր է հստակ որոշելը Բլոքչեյն ցանցի մասնակիցների իրավական կարգավի-

¹² Տե՛ս <http://www.pdpjournals.com/docs/88197.pdf>, մուտք՝ 02.05.2018:

¹³ Օրինակ՝ 28-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

ճակները, ինչը շատ բարդ է՝ հաշվի առնելով, որ Բլոքչեյնը կարող է ընդգրկել նման իրավագործություններով օժտված բազում մասնակիցների:

Որոշ Բլոքչեյն տեխնոլոգիաներ կարելի է համեմատել ապակենտրոնացված cloud computing համակարգերի հետ, որտեղ համակարգի օպերատորը անձնական տվյալներ մշակող է¹⁴, իսկ տվյալներ ներբեռնողները անձնական տվյալներ վերահսկողներ են:

Չնայած վերոշարադրյալին՝ Բլոքչեյն մի շարք համակարգերում չկա միանձնյա օպերատոր կամ ադմինիստրատոր. այն կառավարում են բոլոր մասնակիցները peer-to-peer միջավայրում: Մա նշանակում է, որ նման Բլոքչեյնի յուրաքանչյուր մասնակից, փաստորեն, անձնական տվյալներ վերահսկող է իր և անձնական տվյալներ մշակող՝ այլ անձանց համար:

Կարելի է եզրակացնել, որ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը մշակվել է այն կանխավարկածով, որ գոյություն են ունենալու կենտրոնացված ծառայություններ, սակայն Բլոքչեյնի դեպքում այդպիսիք կարող են նաև չլինել¹⁵:

Այսինքն՝ անհրաժեշտություն է առաջանում համապատասխանեցնելու ՀՏՊԿ-ն (հետևաբար՝ նաև դրան համապատասխանեցված ներպետական օրենսդրությունները) նաև ապակենտրոնացված լեղջերներին կամ դատական նախադեպերով մեկնաբանելու դրա դրույթների կիրառելիությունը նոր տեխնոլոգիաների դեպքում, որոնք չնայած երբեմն կարող են ապահովել անհատների անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակ¹⁶, սակայն չեն համապատասխանում իրավական նորմերի պահանջներին և ձևակերպումներին: Անձնական տվյալներ վերահսկողի և մշակողի հիմնահարցը այդ անհամապատասխանություններից մեկն է, որը խնդիր է առաջացնում պատասխանատվությունը և պատասխանատու անձանց որոշելիս:

Ակնհայտ է, որ անձնական տվյալների պաշտպանության այդօրինակ խիստ նորմերը, որոնք ռիսկի տակ են դնում ԵՄ մասնակցությունը Բլոքչեյն տեխնոլոգիաների զարգացումներին, չեն համապատասխանեցված արդի պահանջներին և հստակեցման ու պարզաբանումների կարիք ունեն:

¹⁴ Տե՛ս **Mark Webber**. (2016). The GDPR's impact on the cloud service provider as a processor. *Privacy & Data Protection Journal*, 16 (4), 11-14: <http://www.fieldfisher.com/media/3993765/the-gdprs-impact-on-the-cloud-service-provider-as-a-processor-mark-webber-privacy-data-protection.pdf>, մուտք՝ 24.04.2018:

¹⁵ Տե՛ս **David Meyer**. (2018, February 27). Blockchain technology is on a collision course with EU privacy law. *International Association of Privacy Professionals*: <https://iapp.org/news/a/blockchain-technology-is-on-a-collision-course-with-eu-privacy-law/>, մուտք՝ 24.04.2018:

¹⁶ Տե՛ս **Josh Hall**. (2018, March 21). How Blockchain could help us take back control of our privacy. *The Guardian* <https://www.theguardian.com/commentisfree/2018/mar/21/blockchain-privacy-data-protection-cambridge-analytica>, մուտք՝ 24.04.2018, **Roberta Filippone**. (2017, August). Blockchain and individuals' control over personal data in European data protection law <http://arno.uvt.nl/show.cgi?fid=143638>, մուտք՝ 24.04.2018:

2.2. «Մոռացվելու» իրավունք

Մի շարք մասնագետներ կարծում են, որ հանրային Բլոքչեյնների անշրջելիությունը և թափանցիկությունը նշանակում են անձնական տվյալների պահպանման հարցում դրանց աննպատակահարմարություն¹⁷:

ԸՏՊԿ-ի 17 հոդվածը սահմանում է անհատների իրավունքը՝ անձնական տվյալներ վերահսկողներից պահանջելու իրենց վերաբերող տվյալների ոչնչացում¹⁸ («մոռացվելու» իրավունք): Այս իրավունքը գործում է որոշակի դեպքերում, սակայն հենց համակարգի ծրագրային լուծումը ինքնին պետք է բավարարի արդեն պարզաբանված «անձնական տվյալների պաշտպանություն ըստ կառուցվածքի» հայեցակարգին՝ հնարավորություն նախատեսելով դրանում առկա տվյալները փոփոխելու կամ վերացնելու: Սակայն Բլոքչեյնը հենց իր հայեցակարգով անշրջելի է, և այնտեղ եղած տվյալները հնարավոր չէ փոփոխել կամ ջնջել (որոշ եզակի բացառություններով, օրինակ՝ fork-երի դեպքում)¹⁹:

Եթե կենտրոնացված համակարգերի պարագայում «մոռացվելու» իրավունքի իրականացումը բավականին խնդրահարույց է, ապա Բլոքչեյնների համար գրեթե անհնար է: Այս հարցին որոշակիորեն անդրադարձ է կատարվել Եվրոպական դատարանի 2017 թվականի մարտի 9-ի C-398/15 Մաննի գործով, որով դատարանը եզրակացնում է, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրականացման հարցում միջամտությունը անհամաչափ չէ, եթե այն վերաբերում է կազմակերպության ռեգիստրում պահվող անձնական տվյալների սահմանափակ քանակին: Այս որոշումը հավասարակշռում է կազմակերպությունների և անհատների շահերը:

Բլոքչեյնի արժանահավատությունը համակարգի անշրջելիության և վերահսկող երրորդ անձի բացակայությունն է, ինչպես նաև երբեմն լեղջերի հրապարակայնությունն ու հավաստիությունը: Այսինքն՝ Բլոքչեյնում սովորաբար չկա կենտրոնական գործող անձ, որից հնարավոր է պահանջել անձնական տվյալների ոչնչացում, իսկ հենց բլոկներում եղած հեշը, արդեն իսկ տրված պարզաբանման համաձայն, կարող է համարվել անհատին նույնականացնելու հնարավորություն տվող կեղծանունացված անձնական տվյալ:

Այսպիսով, ԸՏՊԿ-ն դեռևս չի պարզաբանում նաև այն հարցը, թե արդյոք Բլոքչեյն տեխնոլոգիաների միջոցով տվյալների հարաբերական անանունացումը, տվյալներին հասանելիության սահմանափա-

¹⁷ St' u **Korenhof P., Koops B. J.** (2013), Gender Identity and Privacy: Could a Right To Be Forgotten Help Andrew Agnes Online?, in TILT Law & Technology Working Paper № 3/2013.

¹⁸ St' u Right to Erasure (2017, February 16), *The GDPR Guy* <https://thegdprguy.com/right-to-erasure/>, մուտք՝ 24.03.2018

¹⁹ St' u «Hard Fork.» *Investopedia*, <https://www.investopedia.com/terms/h/hard-fork.asp>, մուտք՝ 24.03.2018

կումները (օրինակ՝ սմարթ պայմանագրերի միջոցով)²⁰ կորակվեն որպես «մոռացվելու» իրավունքի պատշաճ իրականացում, թե Բլոքչեյնը հենց իր կառուցվածքով հակասում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, և պետք է ձեռնարկվեն միջոցներ անձնական տվյալների մուտքը համակարգ կանխելու ուղղությամբ դեռևս համակարգը մշակելու փուլում, այսինքն՝ մինչև դրա գործարկումը:

Պետք է նշել նաև, որ ՀՀ օրենսդրությունը ևս պարունակում է ԸՏՊԿ-ից վերցված սկզբունքներ, այդ թվում՝ սույն աշխատանքում արծարծվածները, ինչը Բլոքչեյն համակարգերի դեպքում արդեն առաջացնում է քննարկված անորոշությունները, և պարզ չէ այն հարցի պատասխանը՝ ի վերջո Բլոքչեյնը համապատասխանում է անձնական տվյալների պաշտպանության իրավունքին, թե՛ ոչ:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բազմաթիվ մասնագետներ արդեն իսկ Բլոքչեյնը համարում են 21-րդ դարի ամենահեղափոխական տեխնիկական լուծումը²¹, որի զարգացման և տարբեր ծառայությունների մատուցման ոլորտներում ներդնելու համար հատկացվում են ֆինանսական և մարդկային մեծ ռեսուրսներ՝ պետք է փաստել դրա պրակտիկ անհրաժեշտությունը արդի հասարակական հարաբերությունների արքսելերացման և ծառայությունների մատուցման բնագավառը նոր թափով զարգացնելու հարցում:

Ինչպես այլ հարցերում, Բլոքչեյն տեխնոլոգիաների դեպքում ևս իրավագիտությունը պետք է կատարի հասարակության, պետության ու անհատների շահերը և իրավունքները սպասարկողի դեր: Այդ իսկ պատճառով առաջարկվում է ապակենտրոնացված լեղջերների իրավական կարգավորմանը հատկացնել պատշաճ ուշադրություն, որը հանգում է հետևյալ լուծումներից մեկի կամ մի քանիսի միաժամանակյա կիրառմանը.

1. Օրենսդրությամբ կարգավորել անձնական տվյալների պաշտպանության ապակենտրոնացված լեղջերներին վերաբերող և սույն աշխատանքում արծարծված խնդիրները:

2. Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների (միջազգային և ներպետական)՝ ապակենտրոնացված լեղջերների հարցում ռազմավարությունը մշակել և հասանելի դարձնել հանրությանը՝ սահմանելով՝

ա) ովքեր են անձնական տվյալներ մշակողներն ու վերահսկողներ-

²⁰ Տե՛ս **John Salmon, Winston Maxwell.** (2018, January 12). Blockchain and the right to erasure. Lexology <https://www.lexology.com/library/detail.aspx?g=918d13f7-92c5-4ef8-bfd1-fbf5f0a648b8>, մուսք՝ 24.03.2018:

²¹ Տե՛ս **AJ Agrawal.** (2018, January). Why the blockchain revolution will accelerate in 2018. TNW <https://thenextweb.com/contributors/2017/12/13/blockchain-revolution-will-accelerate-2018/>, մուսք՝ 24.03.2018, **Jan Seffinga, Lyndon Lyons, Andreas Bachmann.** (2017). The Blockchain (R)evolution – The Swiss Perspective. *Deloitte*, <https://www2.deloitte.com/content/dam/Deloitte/ch/Documents/innovation/ch-en-innovation-blockchain-revolution.pdf>, մուսք՝ 24.03.2018:

ըրև խախտումների առկայության դեպքում ինչպես են կհսում պատասխանատվությունը,

բ) «մոռացվելու» իրավունքի ի՞նչ այլընտրանքներ են ընդունելի այդ մարմինների համար:

Բանալի բառեր - *Բլոքչեյն, հեշ, անձնական տվյալների պաշտպանություն, ԸՏՊԿ, անձնական տվյալների մշակում, տվյալներ վերահսկող*

НАРЕК ШАРАФЯН – Необходимость защиты данных в блокчейн-технологиях. – Новые тенденции регулирования инновационных технологий блокчейн порождают необходимость защищать их данные. В статье исследуются возможные расхождения между сегодняшним законодательством и технологиями, а также неурегулированные правовые вопросы, касающиеся децентрализованных регистров. Кроме того, такие понятия в блокчейн-технологиях, как «управляющий данными» и «обработчик данных», объясняются через определение их ролей и границ ответственности. И наконец, в статье ставится вопрос, применимо ли в блокчейн-технологиях право быть забытым.

Ключевые слова: *блокчейн, хеш, защита данных, ОРЗД, обработка данных, контролирующий данные*

NAREK SHARAFYAN – Personal Data Protection in the Blockchain Technologies. – In the frames of this paper, the author discusses the need for data protection in the new and innovative Blockchain technologies in the context of European and international new regulatory tendencies.

The author tries to examine the possible discrepancies of existing legislation and technologies, as well as the legal issues on decentralized ledgers which are not yet covered. In addition, this article explains the concepts of “data controller” and “data processor” in Blockchain technologies, by identifying their roles and the boundaries of their responsibility. Finally, the author tries to discuss the applicability of the right to be forgotten in Blockchain technologies.

Key words: *Blockchain, hash, data protection, GDPR, data processing, data processor, data controller*

Ներկայացվել է՝ 15.02.2019, գրախոսվել է՝ 04.03.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՈՒ ԿԻՐԱՌՈՒՄԸ (միջազգային մասնավոր-իրավական հիմնախնդիրներ)

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ

21-րդ դարը բնութագրող հիմնական գործընթացներից առանձնապես են երկուսը՝ գլոբալիզացիան և ինտեգրացիան: Գլոբալիզացիայի պայմաններում համաշխարհային հանրության «իմը և քոնը» ըմբռնումը իր տեղը աստիճանաբար զիջում է «մերը» գիտակցությանը: Դա պայմանավորված է մարդկության առջև ծառայող բնական և հումանիտար բնույթի հիմնախնդիրներով, որոնց լուծումը վեր է յուրաքանչյուր կոնկրետ պետության կամ ազգի հնարավորություններից, ուստի և այստեղ անհրաժեշտ է ջանքերի և հնարավորությունների համախմբում, իսկ ամենից առաջ՝ դրա անհրաժեշտության գիտակցում: Գլոբալիզացիան օգնության ձեռք է թույլ զարգացած ազգերին ու պետություններին՝ հետ չմնալու համաշխարհային քաղաքակրթության զարգացումներից: Նշանակում է՝ 21-րդ դարում մարդկության գերիմդիրը գլոբալիզացիայի ընդեռած հնարավորությունների օգտագործումն է հանուն համընդհանուր զարգացման: Այս գիտակցումն իր արտացոլումն է գտել մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում: ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածում սահմանվում է, որ համաշխարհային հանրության միավորման հիմքում ընկած նպատակներից մեկն էլ «համագործակցելն է՝ տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական բնույթի միջազգային պրոբլեմները հաղթահարելու համար»: Ի զարգացումն ՄԱԿ-ի կանոնադրության ՄԱԿ-ի թիվ 3281 բանաձևով ընդունված «Պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների խարտիայում» սահմանվում է. «Միջազգային համագործակցությունը համարվում է բոլոր պետությունների միասնական նպատակն ու ընդհանուր պարտականությունը»¹:

Գլոբալիզացիայի գործընթացներից դուրս չէ նաև իրավունքի բնագավառը: Գլոբալացվող իրավունքի լավագույն օրինակ են այնպիսի ճյուղի ձևավորումը և զարգացումը, ինչպիսին է միջազգային մասնավոր իրավունքը:

Վերջինս կարգավորում է բնույթով առանձնահատուկ հարաբե-

¹ <http://www.un.org/russian/document/gadocs/convres/r29-3281.pdf>

րություններ, որոնք ծանրաբեռնված են օտարերկրյա տարրով (եթե կամ հարաբերության սուբյեկտն է օտարերկրյա, կամ հարաբերության օբյեկտն է գտնվում օտար պետության տարածքում, կամ էլ իրավաբանական փաստն է տեղի ունեցել օտար պետության տարածքում), որի պարագայում հարաբերությունն առնչվում է մեկից ավելի պետությունների իրավական համակարգերին, որոնցից պետք է ընտրվի որևէ մեկը՝ տվյալ հարաբերությունը կարգավորելու համար: Տարբեր պետությունների իրավական համակարգերի բախման տիրույթում հայտնված հարաբերության իրավական կարգավորումը բարդագույն խնդիր է, որի լուծման համար հնարավոր երկու ուղի կա՝ կոլիզիոն և նյութական ունիֆիկացիոն: Առաջինի դեպքում միջազգային մասնավոր հարաբերությունը կարգավորվում է ընտրված պետության իրավական համակարգի շրջանակներում (ազգային կարգավորում), իսկ նյութական ունիֆիկացիոն ճանապարհով կարգավորելիս նախապատվությունը տրվում է միջազգային պայմանագրերի կամ ձևավորված միջազգային առևտրային սովորույթներին (միջազգային կարգավորում):

Միջազգային մասնավոր հարաբերությունների թե՛ ազգային և թե՛ միջազգային իրավական կարգավորումներում հարցի շուրջ դարերի ընթացքում ձևավորվել են բազում իրավական տեսություններ, հայեցակարգեր, դպրոցներ, սակայն առ այսօր իրավական շատ հարցեր մնում են չլուծված և բուռն բանավեճերի առարկա են:

Միջազգային մասնավոր իրավունքի առջև ծառայած խնդիրներից մեկն էլ չճանաչված պետության իրավունքի կիրառման պրոբլեմն է, որը հետզհետե իրեն ավելի ու ավելի է զգացնել տալիս՝ աշխարհում չճանաչված պետությունների թվի աճի և միջազգային մասնավոր հարաբերություններում դրանց մասնակցության ակտիվացմանը զուգահեռ:

Նախ հակիրճ բնութագրենք, թե ինչ ասել է չճանաչված պետություն, ինչ առնչություններ ունի այն միջազգային մասնավոր շրջանառության հետ, որից հետո կփորձենք պարզաբանել ստեղծված իրադրություններից դուրս գալու հնարավոր ուղիները:

Ժամանակակից աշխարհում արդեն կան ավելի քան 200 «չճանաչված պետություններ»: Հետխորհրդային տարածքում ձևավորվել են վեց չճանաչված պետություններ՝ Աբխազիայի Հանրապետություն, Հարավային Օսիայի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետություն, Դոնեցկի Ժողովրդական Հանրապետություն և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետություն, որոնք բավական ակտիվ ներգրավված են տարածաշրջանային միջազգային մասնավոր, ներառյալ միջազգային առևտրային շրջանառության մեջ²: Իհարկե, չճանաչված պետությունները միայն հետ-

² Տե՛ս **Маркедонов С.** Де-факто государства постсоветского пространства: выборы и демократизация // "Вестник Евразии", 2008, էջ 76-98:

խորհրդային երևույթ չեն. այդպիսիք կան աշխարհի մյուս բոլոր տարածաշրջաններում, և դրանց բոլորի խնդիրները միջազգային մասնավոր շրջանառությանը մասնակցելիս նույնն են:

Միջազգային մասնավոր շրջանառությանը չճանաչված պետությունների մասնակցության հիմնական խոչընդոտը դրանց իրավասուբյեկտության խնդիրն է, որի առնչությամբ առկա են տարբեր մոտեցումներ, որոնք երբեմն նույնիսկ հակադիր են ու իրարամերժ:

Տեսաբանների մի մասի համոզմամբ՝ պետության իրավասուբյեկտության համար պետության ճանաչված լինելն ունի կոնստիտուտիվ նշանակություն: Այս տեսության կողմնակիցներ են Լ. Օպենհեյմը, Գ. Լաունտերպախտը, Դ. Անցիլոտտին, Մ. Բաստիդը, Ս. Պատելը, Գ. Կելզեն և ուրիշներ:

Լ. Օպենհեյմը նշում էր, որ «պետության ճանաչումն իր բնույթով կոնստիտուտիվ է. ճանաչումը քաղաքական կազմավորման համար իրավունքներ և պարտականություններ ծագելու հիմք է»³:

Դ. Անցիլոտտիի կարծիքով՝ «միջազգային իրավասուբյեկտությունն իրական և կոնկրետ է դառնում ճանաչման հետ միաժամանակ, և չի կարող որևէ իրավահարաբերություն առաջանալ որևէ պետության հետ, որը դեռևս չի ճանաչվել»⁴:

Կոնստիտուտիվ տեսությանը լրջորեն հակադրվում է դեկլարատիվ տեսությունը, որի կողմնակիցներից են Ն. Կորկունովը, Դ. Ֆելդմանը, Լ. Մոջորյանը, Ֆ. Մարտենսը, Կ. Բեկյաշևը և ուրիշներ:

Ֆ. Մարտենսը նշում էր. «Պետությունը ծնվում և գործում է ինքնուրույն, և ճանաչմամբ ընդամենը արձանագրվում է նրա գոյությունը»⁵:

Լ. Մոջորյանն իրավացիորեն գտնում էր, որ «ճանաչումը չի ստեղծում միջազգային իրավունքի նոր սուբյեկտ»⁶:

Ն. Կորկունովն արտահայտում էր այն տեսակետը, որ պետությունը հենց միայն այնքանով, որքանով գոյություն ունի, իշխում է և կառավարում:

Կոնստիտուտիվ տեսությունը խստորեն քննադատում է Կ. Բեկյաշևը՝ գտնելով, որ «համաձայն այդ տեսության, եթե չկա քաղաքական կազմավորման՝ պետության ճանաչում, ուրեմն չկա նաև այդ սուբյեկտը: Նման մոտեցումը չճանաչված պետության համար կարող է հղի լինել քաղաքական, տնտեսական, ռազմական, դիվանագիտական բնույթի հեռու գնացող հետևանքներով: Կոնստիտուտիվ տեսությունն անհամատեղելի է միջազգային իրավունքի հետ: Այդ տեսությունը չճանաչված պետությանը բացահայտորեն դնում է կախման մեջ հին պե-

³ **Оппенгейм Л.** Международное право. Т.1, полутом 1. М. 1948, с. 136-137.

⁴ **Анцилотти Д.** Курс международного права. М., 1961, с. 164-165.

⁵ **Мартенс Ф. Ф.** Современное международное право цивилизованных народов. Т. 1. М., 1996, с. 184.

⁶ Մեջբերումն ըստ **Бекяшев К. А.** Международное публичное право. М., 2009, էջ 210:

տությունների ակումբի անդամների քմահաճությունից: Պետական նոր կազմավորումն ունի ճանաչվելու իրավունք, որը բխում է միջազգային իրավունքի այնպիսի հանրաճանաչ սկզբունքներից, ինչպիսիք են հավասարության և փոխադարձ օգտակարության, սուվերենության հանդեպ հարգանքի, տարածքային ամբողջականության և ներքին գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

Ճանաչելը կամ չճանաչելը չի ազդում նորաստեղծ պետության գոյության վրա, ճանաչելն ունի միայն դեկլարատիվ նշանակություն, և պետությունը ճանաչելը թողնում է միայն տվյալ պետության օրենսդրության իրավաբանական ուժն ընդունելու իրավաբանական հետևանք»⁷:

Դեկլարատիվ տեսությունն աստիճանաբար ավելի ու ավելի է կողմնակիցներ հավաքում միջազգային իրավունքի հայեցակարգում: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ տվյալ տեսությունն արդեն իր տեղն է գտնում նաև իրավակարգավորիչ փաստաթղթերում: Նախ վկայակոչենք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.), որի 2-րդ հոդվածում նշվում է. «Յուրաքանչյուր ոք օգտվում է սույն հռչակագրով հռչակված իրավունքներից և ազատություններից՝ անկախ ռասսայական պատկանելությունից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, դասային կամ այլ պատկանելությունից:

Բացի այդ, չպետք է որևէ տարբերություն դրվի այն հիմքով, թե ինչպիսի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակ ունի պետությունը կամ տարածքը, որին պատկանում է տվյալ անձը՝ անկախ այդ պետության կամ տարածքի՝ ենթակա, ոչ ինքնավար կամ ինքնիշխանության որևէ այլ սահմանափակում ունենալու հանգամանքից»⁸:

Ամերիկյան պետությունների կազմակերպության կանոնադրության 9-րդ հոդվածում ձևակերպումը շատ հստակ է. «Պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների կողմից այդ պետությունը ճանաչելու հանգամանքից: Մինչև այլ պետությունների կողմից ճանաչվելը պետությունն իրավունք ունի պայքարելու իր անկախության և ամբողջականության, անվտանգության և բարգավաճման համար»: Իհարկե, նույն այդ կազմակերպության կանոնադրության 13-րդ հոդվածը հավելում է. «Ճանաչումը նշանակում է, որ ճանաչող պետությունը նոր պետությանը դիտարկում է արդեն որպես իրավաբանական սուբյեկտ՝ այստեղից բխող բոլոր իրավունքներով և պարտականություններով, որոնք թե՛ մեկի և թե՛ մյուսի համար սահմանվում են միջազգային իրավունքի նորմերով»⁹:

Կարելի է առանձնացնել երրորդ փոխզիջումային տեսությունը, համաձայն որի՝ ճանաչումը պետության իրավասուբյեկտությունը գե-

⁷ Նույն տեղում, էջ 208-210:

⁸ «Действующее международное право». В 3-х томах. Т. 2. М., 1999, с. 6.

⁹ Նույն տեղում, էջ 6:

ներացնող պարտադիր պայման չէ, սակայն պետության ճանաչված չլինելը կարող է դե ֆակտո գրոյացնել չճանաչված պետության իրավասուբյեկտային հնարավորությունները: Այստեղ կարելի է վկայակոչել Ի. Ի. Լուկաշուկի մոտեցումը, որ, «այնուամենայնիվ, ճանաչումն անհրաժեշտություն է պետության համար, որպեսզի դրանով հանդերձ այլ պետություններում ճանաչվի նոր պետության օրենսդրական, վարչական և դատական ակտերի լեգիտիմությունը»¹⁰:

Վ. Տոլստիխը, տուրք տալով փոխզիջումային տարբերակին, գրում է, որ «չճանաչված պետությունները չեն կարող անդամակցել միջազգային կազմակերպություններին, դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակել ճանաչված պետությունների հետ, միանալ միջազգային պայմանագրերի մեծ մասին, դիմել միջազգային դատարաններ: Սակայն չճանաչված պետությունների մասնակցությամբ միջազգային հարաբերություններ, այնուամենայնիվ, կարող են լինել: Մասնավորապես, չճանաչված պետությունները կարող են ճանաչված պետությունների հետ փոխանակել ներկայացուցչություններ, որոնք, սակայն, չունեն դիվանագիտական կարգավիճակ, հումանիտար, ինչպես նաև իրավական օգնության հարցերով կարող են պետությունների հետ կնքել միջազգային պայմանագրեր»¹¹:

Ա. Աբաշիձեն և Օ. Գլիկմանը նշում են. «Պրակտիկան ցույց է տալիս, որ պետությունը ծագում և գոյատևում է անկախ այլ պետություններից ճանաչված լինելու հանգամանքից: Մակայն պետությունը ճանաչելու յուրաքանչյուր ակտի մեջ դրսևորվում են դրա կոնստիտուտիվ և դեկլարատիվ տարրերը»¹²:

Մեր գնահատմամբ պետության սուբյեկտությունը հենց նրա գոյության փաստն է, ոչ թե նրա ճանաչված լինել-չլինելը: Պետության ճանաչված լինելը պետության սուբյեկտության համար ոչ թե բացարձակ բաղադրիչ է, այլ ցանկալի, որը նրան միջազգային համագործակցության մեջ մտնելու և համաշխարհային հանրությանն ինտեգրվելու լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում:

Հասկանալի է, որ այս բանավեճը կարող է անվերջ լինել, ընդ որում՝ բոլոր կողմերն էլ իսկապես ունեն իրենց «կողմ» և «դեմ» փաստարկները: Գիտությունն անսահման է, այստեղ բնական են կարծիքների և մոտեցումների բազմազանությունը, գաղափարների մրցակցությունը, և միշտ չէ, որ հնարավոր է տեսական բանավեճերում միասնական հայտարարի գալ: Տեսական բանավեճերը կարող են անվերջ շարունակվել, մենք, սակայն, պետք է հաշվի նստենք օբյեկտիվ փաստի

¹⁰ Лукашук И. И. Международное право. Общая часть. М.: "Волтерс Клувер", 2005, с. 180.

¹¹ Толстых В. Л. Курс международного права. Учебник. М.: "Волтерс Клувер", 2010, с. 295-297.

¹² Абашидзе А. Х., Гликман О. В. Международное право: учебник. М., ИД "Юрайт", 2011, с. 145.

հետ, որ չճանաչված պետությունները կան, գոյություն ունեն, այդպիսիք միջազգային ինտեգրացիոն գործընթացների մասնակից են, ակտիվորեն ներգրավված են միջազգային մասնավոր շրջանառության մեջ, հետևաբար անհրաժեշտ է տեսական բանավեճերին զուգահեռ՝ նաև գործնական լուծումներ առաջարկել՝ չճանաչված պետությունների միջազգային մասնավոր շրջանառության ուղղությամբ:

Միջազգային մասնավոր ներառյալ միջազգային առևտրային շրջանառությունում չճանաչված պետությունների վերաբերյալ իրավական խնդիրները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից

1. Կիրառելի՞ է, արդյոք, չճանաչված պետության իրավունքը, երբ վերջինիս իրավունքին կատարվում է կոլիզիոն հղում:

2. Արդյոք պե՞տք է ճանաչվեն անձանց քաղաքացիական իրավունքների իրականացմանն ուղղված այն պաշտոնական փաստաթղթերը, որոնք տվել են չճանաչված պետության իրավասու մարմինները: Այստեղ ներառվում են նաև չճանաչված պետության դատարանների որոշումների ճանաչմանը և կատարմանը վերաբերող հարցերը:

Անդրադառնանք այս երկու ուղղություններին առանձին-առանձին:

1. Կիրառելի՞ է, արդյոք, չճանաչված պետության իրավունքը, երբ վերջինիս իրավունքին արվում է կոլիզիոն հղում: Հայտնի է, որ կոլիզիոն նորմը կարող է հղում կատարել օտարերկրյա իրավունքին, և այդ իրավունքը կարող է լինել հենց չճանաչված պետության իրավունքը: Օրինակ՝ միջազգային առքուվաճառքի պայմանագրի նկատմամբ կիրառվում է *Lex venditoris*-ի (վաճառողի վայրի օրենքի) սկզբունքը, և կարող է պարզվել, որ վաճառողը գտնվում է կամ բնակվում է չճանաչված պետությունում: Դատարանն իրավունք կունենա՝ տվյալ պարագայում կիրառելու չճանաչված պետության իրավունքը: Ազգային կոլիզիոն նորմերը որևէ տարբերակում չեն դնում՝ պետությունը ճանաչվա՞ծ է, թե՞ ոչ. կիրառվում է այն իրավունքը, որին հղում է կատարվում: Չճանաչված պետության իրավունքի կիրառումից հրաժարվելը կարող է տեղի ունենալ միջազգային մասնավոր իրավունքի ընդհանուր հիմքերով, օրինակ՝ հանրային կարգի վերապահման հիմքով, սակայն պարզ է, որ հանրային կարգի վերապահումն ուղղված չէ հենց միայն չճանաչված պետությունների իրավունքի կիրառմանը, հետևաբար, եթե այդ հիմքով չկիրառվի չճանաչված պետության իրավունքը, ապա դա ուղղակիորեն կապված չի լինի պետության ճանաչված լինել-չլինելու հանգամանքի հետ: Նույնիսկ այն դեպքերում, երբ մտահոգություն առաջ գա չճանաչված պետության իրավունքի կիրառման հարցում, դատարանը կարող է չճանաչված պետության իրավունքը դիտարկել որպես *Lex causae* (առավել սերտ վայրի օրենք) և կիրառել:

2. Չճանաչված պետությունների հիմնախնդիրն իրեն հատկապես զգացնել է տալիս բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում կիրառելու չճանաչված պետության օրենսդրությունն օ-

տարերկրյա գործընկերների հետ հարաբերություններում, կամ երբ պետք է ընդունվեն չճանաչված պետության իրավասու մարմինների տված պաշտոնական փաստաթղթերը, այդ թվում՝ քաղաքացիական կացության ակտերը: Արդյոք այդ փաստաթղթերը լեգիտիմ կհամարվե՞ն, և կարելի՞ է արդյոք դրանց հիման վրա իրավաբանական բնույթի գործողություններ կատարել: Օրինակ՝ չճանաչված պետության տարածքում գրանցված իրավաբանական անձինք ցանկանում են ներդրումներ կատարել այլ պետությունում՝ նոր իրավաբանական անձանց հիմնադրում կամ առանձնացված ստորաբաժանումներ ստեղծելու ձևով, և այդ նպատակով ընդունող պետության գրանցող պետական մարմին են ներկայացնում իրենց հիմնադիր փաստաթղթերը, որոնք տրվել են չճանաչված պետության կողմից: Այս պարագայում ընդունող պետությունը արդյոք պետք է ներկայացված փաստաթղթերն ընդունի՞ որպես պաշտոնական փաստաթղթեր, թե՞ ոչ: Մեկ ուրիշ օրինակ. չճանաչված պետության նոտարական մարմնի տված լիազորագիրը կարո՞ղ է արդյոք հիմք ընդունվել մեկ այլ պետությունում՝ դրա հիման վրա իրավաբանական բնույթի գործողություններ կատարելու համար, և այսպես շարունակ: Դրությունը շատ ավելի է բարդանում, երբ չճանաչված պետության դատական որոշումը պետք է ի կատար ածվի մեկ այլ պետությունում, և ընդունող պետության համար դառնում է լուրջ խնդիր, թե ինչպես է ճանաչելու և կատարելու չճանաչված պետության դատական ակտը, որի համար, որպես կանոն, պահանջվում է միջազգային պայմանագրի առակայություն, իսկ չճանաչված պետության հետ հնարավոր չէ միջազգային պայմանագիր կնքել: Վերջին պարագայում իրավական խնդիրները կարող են լրջորեն խոչընդոտել միջազգային մասնավոր, ներառյալ առևտրային շահեր, որոնք պետք է պաշտպանվեին այդ դատական ակտով, որը պետք է հրատապորեն ճանաչվեր և կատարվեր:

Նման մտահոգությունները համաշխարհային հանրությանը զբաղեցնում են արդեն երկար ժամանակ: Իրավունքի գիտությունը և դատական պրակտիկան ուղիներ են որոնում ելքեր առաջարկելու համար: Համաշխարհային հանրությունը վաղուց համոզվել է, որ պետության չճանաչումը չի կարող հիմք լինել նրա կողմից ընդունված պաշտոնական փաստաթղթերն ընդունելու հարցում, քանի որ հակառակ պարագայում մենք ավելի շատ խնդիրներ կստեղծենք, քան կլուծենք:

Հոլանդացի իրավագետ Հյուգո Գրոցիոսը նշում էր. «Ուզուրպատորի կառավարման ակտերը, որոնք նա հրապարակում է, կարող են պարտադիր ուժ ունենալ ոչ թե իրավունքի հիման վրա, քանի որ նման իրավունք գոյություն չունի, այլ միայն շնորհիվ այն հանգամանքի, որ ժողովրդի համար նախապատվելի է այդ ակտերի պարտադիր ուժը, քան թե լիակատար անիշխանությունը և օրենքի ու դատարանի լրիվ

բացակայությունը»¹³: Հյուգո Գրոցիոսի առաջ քաշած գաղափարը հետագայում դարձավ դոկտրինալ մեկնակետ, որից ելնելով էլ պետությունները սկսեցին կիրառել չճանաչված պետությունների կողմից տրված պաշտոնական փաստաթղթերը: Պատմությանը հայտնի են մի շարք դատական գործեր, երբ դատարանները կիրառել են չճանաչված պետությունների կողմից ընդունված ակտերը կամ տրված փաստաթղթերը: Այսպես, հայտնի է 1933 թ. «Salimoff & Co. v. Standard oil of N.Y.» դատական գործով Նյու Յորքի դատարանի մոտեցումը, երբ վերջինս հրաժարվեց անվավեր ճանաչել նավթահանքերի ազգայնացման մասին խորհրդային կառավարության դեկրետը, թեև այդ նավթահանքերի նախկին սեփականատերերը դատարանին դիմել էին այդ խնդրանքով: Դատարանը հստակ հայտարարեց. «Ճանաչումը պետություն չի ստեղծում: Ճանաչումը պետությանը դե ֆակտո շնորհում է միջազգային կարգավիճակ: Դատարանները կարող են չճանաչել խորհրդային կառավարությունը, քանի դեռ խորհրդային կառավարությունը չի ճանաչվել դե յուրե, քանի դեռ պետական դեպարտամենտը պաշտոնապես կարծիք չի հայտնել այդ կապակցությամբ: Դրանով հանդերձ, դատարանները կարող են հավաստել, որ այդ կառավարությունն ապահովում է ներքին կարգուկանոն և խաղաղություն, ապահովում է ազգային պաշտպանություն և բարեկեցություն, հաստատուն կապ ունի մեր և այլ երկրների կառավարությունների հետ: Եվ հրաժարվել ճանաչել խորհրդային կառավարությունը, նշանակում է ֆիկցիային հաղորդել իրողություն, որին, սակայն, այդ կառավարությունն արժանի չէ»¹⁴:

1965 թ. «Re James» սնանկության գործով դատավոր Սքերմանը, նկատի ունենալով Հարավային Ռոդեզիայի անկախության միակողմանի հռչակման փաստը, նշում է հետևյալը. «Ես կարծում եմ, որ համապատասխան գործերով մեր դատարանները ճանաչում են դատական իշխանության ակտերի վավերականությունը, նույնիսկ եթե այդ դատարանները լինեն անօրինական նշանակված, կամ եթե այդ ակտերը կայացվում են անօրինական կառավարության անունից»¹⁵:

1978 թ. «Hesperides Hotels Ltd v. Aegean Turkish Holidays Ltd» գործով, որը վերաբերում էր Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության կողմից հյուրանոցների կալանքին, դատավոր Դենինգը հստակ տեսակետ արտահայտեց. «Եթե ես պետք է ընտրություն կատարեմ այդ երկու՝ մեկը մյուսին հակասող դոկտրինաների միջև, ես առանց երկմտելու կհաստատեմ, որ դատարանները պետք է ճանաչեն և կատարեն այն կազմավորման օրենքները և ակտերը, որոնք արդյունավետ վերահսկողություն ունեն իրենց տարածքում, նույնիսկ եթե այդ

¹³ Гроций Г. О праве войны и мира. М., 1994, с. 172.

¹⁴ <https://casetext.com/case/salimoff-co-v-standard-oil-co-of-new-york>

¹⁵ Сквозников А. Н. Применение права непризнанных государственных образований // "Вестник Самарской государственной академии". Серия «Право», 2013, № 1(30), с. 21-30.

կազմավորումների կառավարությունը դեռևս դե յուրե կամ դե ֆակտո չի ճանաչվել Միացյալ Թագավորության կառավարության կողմից»¹⁶:

Տարբեր երկրների դատարանների կողմից քննված գործերով համանման դիրքորոշումները կարելի է երկար շարունակել, սակայն բերված օրինակներն արդեն իսկ վկայում են, որ առանձին երկրների դատական պրակտիկան հաստատապես ընթանում է այն ուղղությամբ, որ չճանաչված պետության իրավասու մարմինների տված իրավաստեղծ, իրավափոփոխող, իրավադադարեցնող փաստաթղթերն իրավական ուժ ունեն, դրանց հիման վրա պետք է կատարվեն իրավաբանական բնույթի գործողություններ, և դատարանն իրեն չպետք է կաշկանդի այն հանգամանքով, որ այդպիսիք դուրս են եկել չճանաչված պետությունից:

Նշված և համանման դատական գործերով արտահայտված տեսակետները ճանապարհ են հարթում համաշխարհային մակարդակով դրական վերաբերմունք և համապատասխան կայուն համոզմունքներ ձևավորելու ուղղությամբ: Բացի առանձին պետությունների դատական գործերից, հայտնի են նաև վերապետական ատյանների համապատասխան տեսակետներ: Այսպես, հակառակ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի № 276 (1970) բանաձևի՝ Նամիբիայում Հարավային Աֆրիկայի ներկայության իրավաբանական հետևանքների շուրջ խորհրդատվական եզրակացությունում ՄԱԿ-ի Միջազգային դատարանը նշում է, որ «Հարավային Աֆրիկայի կողմից Նամիբիայի ինքնիշխանությունը չճանաչելու հանգամանքը չի կարող Նամիբիայի բնակչությանը գրկել միջազգային համագործակցությունից բխող հնարավորություններից: Մասնավորապես, Հարավային Աֆրիկայի կառավարությունը չի կարող անվավեր ճանաչել Նամիբիայի քաղաքացիների քաղաքացիական կացությունը (ծնունդ, մահ, ամուսնություն, ամուսնալուծություն և այլն) հավաստող պաշտոնական փաստաթղթերը»¹⁷:

ՄԱԿ-ի Միջազգային դատարանի վերոնշյալ տեսակետն իր հերթին ուղեցույց դարձավ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) համար, որը ուղղակիորեն հղում կատարելով Նամիբիայի գործով ՄԱԿ-ի Միջազգային դատարանի դիրքորոշմանը, 1996 թ. դեկտեմբերի 18-ի «Լոիզիդոս ընդդեմ Թուրքիայի» գործով արձանագրել է, որ «միջազգային իրավունքը ճանաչում է չճանաչված պետության տված քաղաքացիական կացության ակտերի լեգիտիմությունը»¹⁸:

ՄԻԵԴ-ը մեկ այլ «Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի» (10 մայիսի 2001 թ.) գործով արձանագրել է հետևյալը. «Այդ տարածքում ապրող մարդկանց կյանքը շարունակվում է: Եվ այդ կյանքն անհրաժեշտ է դարձնել հնարավորինս տանելի և դյուրին: Այդ մարդկանց կյանքը չի կարող

¹⁶ <http://swarb.co.uk/hesperides-hotels-ltd-and-another-v-aegean-turkish-holidays-ltd-and-another-ca-1978/>

¹⁷ Толстых В. Л., նշվ. աշխ., էջ 427:

¹⁸ http://european-court.ru/uploads/ECHR_Loizidou_v_Turkey_18_12_1996.pdf

անտեսվել երրորդ պետությունների ու նրանց դատարանների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից: Հակառակը մտածելը կնշանակեր հիշյալ տարածքում բնակվող անձանց զրկել միջազգային ենթատեքստով քննարկվող մարդու իրավունքներից, իսկ դա իր հերթին կնշանակեր զրկել այդ մարդկանց գոյության համար անհրաժեշտ նվազագույն իրավունքներից»¹⁹:

Այսպիսով, առանձին պետությունների ներպետական դատական պրակտիկան և միջազգային վերպետական կառույցները միասնական են այն հարցում, որ չճանաչված պետության տված՝ մասնավոր անձանց վերաբերյալ փաստաթղթերը լեգիտիմ են, որոնք պետք է ճանաչվեն, և որոնց հիման վրա պետք է կատարվեն իրավաբանական բնույթի գործողություններ: Հայտնի է, որ 2007 թ. Ռուսաստանի դաշնային նոտարական պալատը պաշտոնապես դիմել է ՌԴ արտաքին գործերի նախարարություն խնդրելով պարզաբանել, թե արդյոք ՌԴ նոտարները համապատասխան նոտարական գործողություններ կատարելու համար իրավունք ունեն դե յուրե ընդունել ՌԴ կողմից չճանաչված պետության տված պաշտոնական փաստաթղթերը: ՌԴ արտաքին գործերի նախարարությունը, հենվելով ձևավորված միջազգային պրակտիկայի վրա, պաշտոնապես տվել է հետևյալ պարզաբանումը. «Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը գտնում է, որ միջազգային իրավունքը չի արգելում պետություններին ընդունելու չճանաչված պետությունների իրավասու մարմինների կողմից տրված առանձին իրավաբանական ակտերի վավերությունը»²⁰:

Միջազգային պրակտիկայի հիման վրա նման պաշտոնական պարզաբանման նպատակով Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնը 2010 թ. փետրվարի 1-ին դիմել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն, խնդրելով պարզաբանել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական մոտեցումը, թե «արդյոք Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ընդունել Հայաստանի Հանրապետության կողմից չճանաչված պետության իրավասու մարմինների կողմից տրված պաշտոնական փաստաթղթերը և դրանց հիման վրա կատարել իրավաբանական բնույթի անհրաժեշտ գործողություններ»: Ի պատասխան նշված դիմումի՝ ՀՀ արտգործնախարարությունը 2010 թ. N 18-1/1/05090 գրությամբ պաշտոնապես պատասխանել է. «Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կողմից չճանաչված պետության իրավասու մարմինների կողմից տրված պաշտոնական փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր չեն ընդունել»:

¹⁹ http://european-court.ru/uploads/ECHR_Loizidou_v_Turkey_18_12_1996.pdf

²⁰ http://old.notariat.ru/press_2491_23.aspx.htm

Կասկածից վեր է, որ նման պաշտոնական պարզաբանումները ներպետական իրավակիրառ պրակտիկայում հարթում են հնարավոր տարակարծությունները, սակայն ՀՀ արտգործնախարարության այդ պաշտոնական պարզաբանման բովանդակությունը խոր մտահոգությունների տեղիք է տալիս ինչպես դոկտրինալ, այնպես էլ իրավակիրառ տեսանկյունից: Եթե իսկապես այդ ճանապարհով ընթանա հայաստանյան իրավակիրառ պրակտիկան, ապա ոչ միայն կհակադրվենք օտարերկրյա և միջազգային իրավակիրառ պրակտիկային, այլև միջազգային մասնավոր շփման տիրույթում կունենանք ինտեգրացիոն լուրջ խնդիրներ:

Սակայն գոհունակությամբ պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական բարեփոխումների շնորհիվ ամրագրվել են իրավական մեխանիզմներ, որոնք նոր էջ են բացում չճանաչված պետությունների դատական ակտերի ճանաչման և կատարման ուղղությամբ, որով էապես մեղմացվում է մեր նշած խնդրահարույց իրավիճակը: Այսպես, 2018 թ. ապրիլի 9-ից գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով առաջին անգամ նախատեսվել է փոխադարձության սկզբունք օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարելու թույլատրելու հարցում: Այսպես՝ օրենսգրքի 346 հոդվածում սահմանվում է. «Օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը ճանաչվում են, իսկ կատարում պահանջող դատական ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի ճանաչումը և կատարումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա»: Հասկանալի է, որ չճանաչված պետության դատական ակտերը ճանաչելու և կատարումը թույլատրելու հարցում միջազգային պայմանագրեր կնքելը թեև հնարավոր է, սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ դա հազվադեպ է տեղի ունենում, ուստի այստեղ հարցը լուծելու հիմնական տարբերակը դառնում է փոխադարձության ինստիտուտը:

Նույն օրենսգրքով նախատեսվում է. «Եթե օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը կախված են փոխադարձությունից, ապա փոխադարձությունը համարվում է գոյություն ունեցող, քանի դեռ չի ապացուցվել հակառակը» (346 հոդվածի 5-րդ կետ): Դա նշանակում է, որ ՀՀ օրենսդրությամբ հատուկ չի պահանջվում փոխադարձության առկայության ապացույց, այստեղ նախատեսվում է փոխադարձության կանխավարկած: Մա զգալիորեն դյուրացնում է միջազգային մասնավոր շրջանառությունը պետությունների, ներառյալ չճանաչված պետությունների հետ համագործակցային տիրույթում:

Հայաստանի օրենսդիրն ավելի հեռուն է գնացել և նույնիսկ առանձին գործերով ընդհանրապես չի սահմանել փոխադարձության

ակզբունքը: Այսպես, սահմանվել է. «Հայաստանի Հանրապետությունում առանց միջազգային պայմանագրի կամ փոխադարձության առկայության ճանաչվում են՝

1) անձանց իրավական վիճակի վերաբերյալ դատական ակտերը,

2) օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջև կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը,

4) օրենքով նախատեսված դեպքերում՝ օտարերկրյա այլ դատական ակտեր» (ՀՀ քաղ. դատ. օր. 346 հոդվածի 6-րդ կետ):

Բոլոր պետությունների, ներառյալ չճանաչված պետությունների դատական ակտերը փոխադարձության հենքով մեխանիկորեն ճանաչելով՝ ՀՀ օրենսդիրը փաստորեն որևէ բացառություն չի նախատեսում, մինչդեռ դա անհրաժեշտություն է ազգային իրավական համակարգը պաշտպանելու տեսանկյունից: Իրավաճանաչողության համար նշենք, որ նման բացառություններ նախատեսվում են տարբեր պետությունների օրենքներով:

Արձանագրելով, որ ՀՀ օրենսդրությունում փոխադարձության ինստիտուտի ներդրման հեղինակները, դրական քայլ կատարելով հանդերձ, չեն հոգացել հնարավոր ռիսկերը բացառությունների միջոցով չեզոքացնելու մասին: Հույս ենք հայտնում, որ օրենսդրական կատարելագործման հետագա փուլերում կշտկվի այդ վիճակը, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ևս կնախատեսվի փոխադարձության ինստիտուտը բացառություններով ուղեկցելու հնարավորությունը:

Բանալի բառեր – չճանաչված պետություն, կոնստիտուտիվ, դեկլարատիվ, փոխադարձություն, կոլիզիոն նորմ, միջազգային իրավասուբյեկտություն, պաշտոնական փաստաթղթեր, բացառություններ

АРМЕН АЙКЯНЦ – Признание и применение права и официальных документов непризнанного государства (международные частноправовые проблемы). – Число непризнанных государств растёт, в настоящее время их насчитывается около двухсот; на постсоветском пространстве возникло шесть таких государств. Непризнанные государства активно вовлекаются в интеграционные процессы, с ними развиваются экономические, гуманитарные, культурные связи. Но имеют место некоторые трудности, в том числе правового характера. Основной правовой проблемой является международная правосубъектность этих государств. В статье подробно анализируются конститутивная, декларативная и компромиссная теории признания, причём акцент ставится на декларативной теории.

Ключевые слова: *непризнанное государство, конститутивный, декларативный, взаимность, коллизионная норма, международная правосубъектность, официальные документы, исключения*

ARMEN HAYKYANTS – *Recognition and Application of the Law and Official Documents of Unrecognized States (International Private-Law Problems)*. – The number of unrecognized states is growing: currently, their number is close to two hundred. Only in the post-Soviet space, six unrecognized states were formed. Unrecognized states are actively involved in integration processes. Moreover, economic, humanitarian, and cultural ties are developing with them, but there are still some problems along the way, including those of legal nature. The main legal problem refers to the international legal personality of unrecognized states. The constitutive, declarative and compromise theories are analyzed in detail in the paper presented with a special emphasis on the declarative theory.

Key words: *unrecognized state, constitutive, declarative, reciprocity, conflict norm, international legal personality, official documents, exceptions*

Ներկայացվել է՝ 11.02.2019, գրախոսվել է՝ 18.02.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

**ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԻՐՈ ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 180-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է՝ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է», իսկ 189-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ է նաև միջհամայնքային միավորումը: Բնական է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի կատեգորիան չի կարող սահմանափակվել միայն այդ անձանցով: ՀՀ օրենսդրության մեջ դրա ամրագրումը պետք է հանգեցնի նաև դրանց տեսակների առավել ամբողջական սահմանմանը, որպիսիք, ըստ մեզ, պետք է համարվեն պետությունը, մունիցիպալ կազմավորումները, ՀՀ կենտրոնական բանկը, հիմնարկները (պետության կամ համայնքի հիմնադրած), ոչ առևտրային կազմակերպությունները (պետական ոչ առևտրային կազմակերպություններ, պետական հիմնադրամներ, ինքնակարգավորվող կազմակերպություններ (մասնագիտական միություններ) և այլն):

Այս կազմակերպությունները (բացառությամբ հիմնարկների) ՀՀ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ են և մասնակցում են քաղաքացիական շրջանառությանը ոչ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ (բացառությամբ համայնքի): Սակայն, հաշվի առնելով այն, որ շրջանառության մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ իրավաբանական անձանց վերաբերող գլխում փոփոխություններ կատարելու մասին հայեցակարգը¹, որտեղ առաջարկվող փոփոխություններից է իրավաբանական անձանց՝ հանրայինի և մասնավորի դասակարգումը, անհրաժեշտ է քննարկման առարկա դարձել հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես նոր կատեգորիայի պատասխանատվության առանձնահատկությունները, քանի որ, ի տարբերություն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց, նրանք ունեն մի շարք յուրահատկություններ:

Հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտարկվող կազմակերպությունների քաղաքացիաիրավական գույքային պատասխա-

¹ Տե՛ս «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ», գլուխ 5՝ իրավաբանական անձինք, հեղ. Վ. Ավետիսյան, Դ. Մերոբյան, Եր., 2014, էլեկտրոնային ռեսուրս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_Iravabanakan_andinq.pdf (վերջին մուտք՝ 21.02.2019):

նատվության առանձնահատկությունները կքննարկենք՝ հաշվի առնելով ներկայիս կարգավորումները (երբ այս կազմավորումները օրենքի իմաստով չեն համարվում հանրային իրավունքի իրավաբանական անձեր), և կպարզենք, թե գործող կարգավորումները որքանով են բխում հանրային իրավունքի իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկություններից:

Նախ և առաջ նշենք, որ գույքային շրջանառության մասնակցին քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը պայմանավորված է նրա իրավասուբյեկտությամբ², իսկ դրա իրացման անհրաժեշտ պայման է սեփականության իրավունքը (գույքային առանձնացվածությունը)³: Պատասխանատվության մեխանիզմը կիրառելի կլինի, իսկ տուժողի գույքային շահերը կբավարարվեն միայն այն դեպքում, երբ իրավախախտը գույք ունենա, որի վրա կարող է բռնագանձում տարածվել: Դրա մասին են վկայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) մի շարք դրույթներ⁴: Հետևաբար, հանրային իրավունքի իրավաբանական անձանց պատասխանատվության առանձնահատկությունները վեր հանելու համար որոշ դեպքերում անհրաժեշտ է զուգահեռաբար վերլուծել նաև նրանց սեփականության իրավունքը:

Օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքն իր պարտավորություններով պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով: Այս ընդհանուր կանոնից բացառությունների սահմանումը պայմանավորված է որոշակի անձանց քաղաքացիաիրավական իրավասուբյեկտությամբ, որի հիմքը, ի տարբերություն իրավաբանական անձանց մեծ մասի, ոչ թե սեփականության իրավունքն է, այլ սահմանափակ իրային՝ լրիվ տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման իրավունքները: Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև համայնքի անունից իրենց գործողություններով գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ են ձեռք բերում ու իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ինչպես նաև իրենց ամրակցված գույքի սեփականատեր չեն, որի պատճառով էլ պետությունը և համայնքը պատասխանատվություն են կրում իրենց մարմինների կամ պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների համար: Ուստի Օրենսգրքի 1063-րդ հոդվածը սահմանում է, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական

² Տե՛ս **В. Д. Рудакова**. Гражданско-правовой статус публичных юридических лиц. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2014, էջ 196:

³ Տե՛ս **Грибанов В. П.** Юридические лица. М., 1961, էջ 8, **Тихомиров М. Ю.** Юридические лица: учебно-практическое пособие. М., 2003, էջ 5-7:

⁴ Տե՛ս «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (05.05.1998 թ.)», հոդվածներ 60, 130:

ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Օրենսգիրքը պատճառված վնասի հատուցման պարտականություն է դնում պետության վրա նաև այն դեպքում, երբ վնասը պատճառվել է հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության կամ դատարանի ապօրինի գործողություններով (հոդվ. 1064):

Ինչ վերաբերում է պետության կամ համայնքի հիմնադրած իրավաբանական անձանց պարտավորություններով պետության կամ համայնքի պատասխանատվությանը, ապա պետք է նշել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավաբանական անձի հիմնադիրը (մասնակիցը) պատասխանատու չէ իրավաբանական անձի, իսկ իրավաբանական անձը՝ իր հիմնադրի (մասնակցի) պարտավորությունների համար՝ բացառությամբ Օրենսգրքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի (հոդված 60, մաս 2): Ներկայումս նման բացառություններ են սահմանված լիակատար ընկերակցությունների (հոդված 83), բաժնետիրական ընկերությունների («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մաս), ինչպես նաև տնտեսական ընկերությունների համար («Տնտեսական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս): Սակայն նման բացառությունների սահմանումը չի հակասում գույքային ինքնուրույն պատասխանատվություն կրելու էությանը, քանի որ անգամ այս դեպքերում պատասխանատվությունը կրում է իրավաբանական անձը, իսկ հիմնադիրների պատասխանատվությունը սուբսիդիար է կամ պայմանավորված է նրանց թերացումներով (օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների դեպքում՝ ավանդն ամբողջությամբ չվճարելը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց նկատմամբ նույնպես որպես կանոն տարածվում են մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց վերաբերող նորմերը, և նրանք քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցում են այլ սուբյեկտների հետ հավասար հիմունքներով⁵, պետք է նշել, որ պետությունը կամ համայնքը իրենց հիմնադրած հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով նույնպես չեն կրում պատասխանատվություն, որն ընդհանուր առմամբ

⁵ Տե՛ս, օրինակ, «Гражданский кодекс Республики Молдова», հոդված 192, էլեկտրոնային ռեսուրս <http://lex.justice.md/ru/325085/>, «Гражданский кодекс Грузии», հոդված 24, մաս 3, էլեկտրոնային ռեսուրս <https://matsne.gov.ge/ru/document/download/31702/75/ru/pdf> (վերջին մուտք՝ 03.03.2019):

պայմանավորված է իրավաբանական անձի այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են նրա գույքային առանձնացվածության և ինքնուրույն գույքային պատասխանատվություն կրելու հատկանիշները: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունից արդեն իսկ բխում է ինքնուրույն գույքային պատասխանատվություն կրելու հնարավորությունը, որը նախատեսված է նաև արտասահմանյան մի շարք երկրների օրենսդրությունների մեջ: Օրինակ, Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 89-րդ հոդվածը նախատեսում է, որ 31-րդ պարագրաֆի դրույթները (ըստ որոնց՝ ասոցիացիան պատասխանատու է երրորդ անձանց պատճառված վնասի համար) տարածվում են հանրային իրավունքի կորպորացիաների, հիմնադրամների և հանրային հիմնարկների նկատմամբ՝ հաշվի առելով նրանց առանձնահատկությունները: Բրազիլիայի քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածը սահմանում է, որ ներքին հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն իրենց այն գործակալների գործողությունների համար, որոնք վնաս կպատճառեն երրորդ անձանց⁶:

Ընդհանուր կանոնին համապատասխանող կարգավորումներ են նախատեսված «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում (հոլվածներ 3, 7), «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 8), ինչպես նաև «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 1): Սակայն, Օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն, հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում այն ստեղծած իրավաբանական անձը. այսինքն՝ պետական հիմնարկի դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունը, համայնքային հիմնարկի դեպքում՝ համայնքը: Պետության կամ համայնքի փաստացի պատասխանատվությունը իր հիմնադրած հիմնարկների պարտավորությունների համար պայմանավորված է նրանով, որ հիմնարկներին ներկայումս տրված չէ իրավաբանական անձի կարգավիճակ, և նրանց գույքային հիմքը ոչ թե սեփականության իրավունքն է, այլ սահմանափակ իրային իրավունքները (օպերատիվ կառավարման իրավունք և լրիվ տնտեսավարման իրավունք): Ա. Իվանովը օպերատիվ կառավարման իրավունքի հիմնական հակասությունը տեսնում է այն բանում, որ տնտեսական տեսանկյունից գույքը, որը տրված է պետական ձեռնարկություններին և հիմնարկներին, նրանց համար համարվում է սեփական, իսկ գույքի նկատմամբ իրավունքը մոտ է սեփականության իրավունքին այն ժամանակ, երբ այդ գույքը քննարկվող սուբյեկտների համար իրավունքի տեսանկյունից համարվում է ուրիշինը⁷:

⁶ Տե՛ս «German Civil Code», էլեկտրոնային ռեսուրս https://www.gesetze-im-internet.de/englisch_bgb/englisch_bgb.html#p0263, «Codigo Civil Brasileiro» էլեկտրոնային ռեսուրս http://www.planalto.gov.br/ccivil_03/LEIS/2002/L10406.htm (վերջին մուտք՝ 02.02.2019):

⁷ Տե՛ս **Иванов А. А.** Право собственности и товарно-денежные отношения. Автореф. дис. ... канд. юрид. наук. Л., 1991, էջ 16:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետության կամ համայնքի հիմնադրած հիմնարկները դիտում ենք որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, ուստի նրանց իրավասուբյեկտությունից պետք է բխի նաև իրենց ամրակցված գույքի նկատմամբ սեփականության իրավունք ունենալը, որը բնորոշ է զարգացած իրավակարգերին: Ինչպես նշել է Վ. Դ. Ռուդակովան, պատասխանատվության լիարժեք մեխանիզմը պետք է հիմնվի քաղաքացիական շրջանառության մասնակցի գույքային առանձնացվածության վրա, որի հիմք կարող է լինել միայն սեփականության իրավունքը⁸: Չի կարելի թույլ տալ, որ մեկ ինքնուրույն սուբյեկտը ամբողջ ծավալով պատասխանատվություն կրի մեկ այլ ինքնուրույն սուբյեկտի պարտավորությունների համար:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ մեր կողմից հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտվող կազմակերպությունների մեծ մասի համար արդեն իսկ սահմանված է ինքնուրույն գույքային պատասխանատվություն կրելու հնարավորություն:

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) դատական ակտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց գույքի անբավարարության դեպքում կարող է վրա հասնել հիմնադրի սուբսիդիար պատասխանատվությունը, որը պարտատերերին տալիս է լրացուցիչ երաշխիքներ:

Համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ պետությունը և համայնքը՝ որպես հանրային իշխանության հիմնական կրողներ, պատասխանատու են նաև իրենց հիմնադրած իրավաբանական անձանց (հանրային և մասնավոր) պարտավորությունների համար: Ընդ որում՝ ՄԻԵԴ-ը ուշադրություն չի դարձնում այն հանգամանքին, որ, ըստ ազգային օրենսդրության, պետությունը կամ համայնքը սուբսիդիար պատասխանատվություն չեն կրում իրենց հիմնադրած իրավաբանական անձանց պարտավորությունների համար⁹:

Եվրոպական դատարանը *Kunashko v. Russia* գործով նշել է, որ *երբ պարտապանը մասնավոր անձ կամ ընկերություն է, ընդհանուր կանոնի համաձայն՝ պետությունը անմիջականորեն պատասխանատու չէ անհատների կամ մասնավոր ընկերությունների պարտքերի համար, և Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները սահմանափակվում են պարտատիրոջը անհրաժեշտ իրավական աջակցություն ցուցաբերելով, օրինակ՝ սնանկացման ընթացակարգերի միջոցով*¹⁰: Մեկ

⁸ Տե՛ս **В. Д. Рудакова**, նշվ. աշխ., էջ 199:

⁹ Տե՛ս, օրինակ, *Khachatryan v. Armenia*, 31761/04, ՄԻԵԴ 01.12.2009 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["31761/04"\],"document_collectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-95905"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{); (վերջին մուտք՝ 29.02.2019):

¹⁰ Տե՛ս *Kunashko v. Russia*, 36337/03, ՄԻԵԴ 17/12/2009 թվականի վճիռը §§ 38-49, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["36337/03"\],"document_collectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-96367"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{); (վերջին մուտք՝ 27.02.2019):

այլ գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ *պետությունը չի կարող ազատել իրեն պատասխանատվությունից՝ փոխանցելով իր լիազորությունները մասնավոր անձանց կամ անհատներին*¹¹:

Որոշելու համար, թե պետությունը արդյոք պատասխանատու կարող է լինել իր հիմնադրած իրավաբանական անձանց պարտավորությունների համար, ՄԻԵԴ-ը առանձնացնում է երկու կատեգորիա՝ «պետական մարմիններ» (“public authority”) և «պետական կազմակերպություններ» (“governmental organisation”): ՄԻԵԴ-ը սահմանում է, որ պետական մարմինների պարտավորությունների համար պետության պատասխանատվության պարտականությունը ակնհայտ է, այլ է հարցը պետական կազմակերպությունների դեպքում, որոնք ձևական առումով «պետական մարմիններ» չեն¹²:

Radio France and Others v. France (extracts) գործով Եվրոպական դատարանը նշել է որ՝ «պետական կազմակերպություն» կատեգորիան ներառում է իրավաբանական անձանց, որոնք մասնակցում են պետական լիազորությունների իրականացմանը կամ իրականացնում են հանրային գործառույթներ պետության հսկողության ներքո: Որպեսզի որոշակիացվի, թե իրավաբանական անձը, որը տարբերվում է տարածքային իշխանությունից, համարվում է պետական կազմակերպություն, թե ոչ, պետք է հաշվի առնել նրա իրավական կարգավիճակը և անհրաժեշտության դեպքում՝ նրա կարգավիճակից բխող իրավունքները, նրա գործունեության բնույթը և ոլորտը, ինչպես նաև հանրային իշխանություններից անկախության աստիճանը»¹³:

Միևնույն ժամանակ ՄԻԵԴ դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք ինքնաբերաբար պետական կազմակերպություններ չեն, և յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկման առարկա դառնա համապատասխան իրավաբանական անձի մոտ «պետական կազմակերպությունների» հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը¹⁴:

¹¹ Տե՛ս Costello-Roberts v. the United Kingdom, 13134/87, ՄԻԵԴ 25.03.1993 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":\["Costello%20Roberts%20v.%20the%20United%20Kingdom"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER","CHAMBER"\],"itemid":\["001-57804"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{) (վերջին մուտք՝ 27.02.2019):

¹² Տե՛ս Liseytseva and Maslov v. Russia, 39483/05 և 40527/10, ՄԻԵԴ 09.10.2014 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"tabview":\["document"\],"itemid":\["001-146774"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{) (վերջին մուտք՝ 27.02.2019):

¹³ Radio France and Others v. France [Extracts], 53984/00, ՄԻԵԴ 23/09/2003 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"tabview":\["document"\],"itemid":\["001-67328"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{) (վերջին մուտք՝ 27.02.2019):

¹⁴ Տե՛ս Consejo General de Colegios Oficiales de Economistas de España v. Spain, 26114/95 և 26455/95, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի 28.06.1995 թվականի որոշում, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["26114/95"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{), The Holy Monasteries v. Greece, ՄԻԵԴ 09.12.1994 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":\["The%20Holy%20Monasteries%20v.%20Greece"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{) (վերջին մուտք՝ 28.02.2019):

Պետական կազմակերպությունների պարտավորություններով պետության պատասխանատվությունը սահմանելու համար ՄԻԵԴ-ը հիմք է ընդունում երկու չափանիշ՝ *իրավաբանական անձի ինստիտուցիոնալ և գործառնության անկախությունը*: Իսկ պարզելու համար, թե արդյոք կազմակերպությունը ունի այդպիսի անկախություն, ՄԻԵԴ-ը, որպես կանոն, հաշվի է առնում հետևյալ հանգամանքները, որոնցից ոչ մեկը առանձին վերցրած որոշիչ չէ.

1. **կազմակերպության իրավական կարգավիճակը**. կազմակերպությունը գործում է հանրային¹⁵, թե՛ մասնավոր իրավունքի ներքո, կամ արդյոք կազմակերպությունը պետական մարմին է,

2. **կազմակերպության գործունեության բնույթը և ոլորտը**. կազմակերպությունը իրականացնում է հանրային գործառնությունե՛ր, թե՛ սովորական առևտրային գործունեություն, արդյոք ք գործունեություն է իրականացնում մենաշնորհային կամ պետական խիստ կարգավորման ոլորտում,

3. **կազմակերպության ինստիտուցիոնալ անկախությունը (պետական սեփականության չափը)**. ինչպիսի¹⁶ է կազմակերպության ֆինանսավորման աղբյուրը, որքա՞ն է իշխանության մարմինների մասնակցությունը դրա կանոնադրական կապիտալի մեջ, արդյոք ք կազմակերպությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից, արդյոք ք պետությունը կարող է գույքը փոխանցել այլ կազմակերպության,

4. **կազմակերպության գործառնության անկախությունը (պետության կողմից հսկողության և վերահսկողության չափը)**. արդյոք պետությո՞ւնն է հիմնադրում, լուծարում և վերակազմակերպում ընկերությունը, արդյոք պետությո՞ւնն է ղեկավարում կամ վերահսկում տվյալ ընկերությունը, ինչպե՞ս է իրականացվում կազմակերպության ղեկավարումը (արդյոք կառավարման մարմինները նշանակվում են պետության¹⁷ կողմից), որքանո՞վ են կառավարման մարմինները անկախ իրենց գործունեության մեջ, կազմակերպությունը հաշվետո՞ւ է արդյոք պետական մարմնին, արդյոք պետությունը հաստատո՞ւմ է ընկերության կնքած գործարքները, արդյոք պետության¹⁸ ն է փոխանցվում տվյալ ընկերության ղեկավարումը, երբ ընկերությունը սնանկ է ճանաչվում, լուծարման դեպքում արդյոք պետության¹⁹ ն է անցնում գույքը¹⁵:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ *հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխա-*

¹⁵ Sté u Lisianskiy v. Ukraine, 17899/02, ՄԻԵԴ 04.04.2006 թվականի վճիռը, էլեկտրոնային ռեսուրս [\(վերջին մուտք՝ 21.02.2019\):](https://hudoc.echr.coe.int/eng#{)

նատվություն, իսկ Եվրոպական դատարանի պրակտիկան առաջնորդվում է այն բանով, որ պետությունը, ինչպես նաև համայնքը պատասխանատու են իրենց հիմնադրած պետական կազմակերպություն համարվող հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորությունների համար, եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ անկախությունը:

Բանալի բառեր - *պետական մարմիններ, իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձ, հանրային իրավունքի իրավաբանական անձանց պատասխանատվություն*

СИРО АМИРХАНИЯН – Гражданско-правовая ответственность юридических лиц публичного права. – Законодательство РА де-факто устанавливает структуру юридических лиц публичного права, включая в их число общины и межобщинные союзы. Однако в статье утверждается, что виды юридических лиц публичного права не ограничиваются этим; к их числу принадлежат также государство, муниципальные образования, Центральный банк, публичные учреждения и некоммерческие организации. Статья посвящена исследованию гражданско-правовой ответственности юридических лиц публичного права на основе армянского, зарубежного и прецедентного права ЕСПЧ.

Ключевые слова: *государственные органы, юридическое лицо, юридическое лицо публичного права, ответственность юридических лиц публичного права*

SIRO AMIRKHANYAN – Civil Liability of Legal Entities of Public Law. – Legislation of RA de facto establishes the structure of legal entities of public law, indicating that communities and inter-communal unions are legal entities of public law. However, the author finds that the types of legal entities of public law are not limited to this and include municipal institutions, the Central Bank of Armenia, public institutions and non-profit organizations. The article is devoted to the study of civil liability of legal entities of public law on the basis of Armenian, foreign law, as well as case law of the ECHR.

Key words: *state bodies, legal entity, legal entity of public law, liability of legal entities of public law*

Ներկայացվել է՝ 20.03.2019, գրախոսվել է՝ 27.03.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Փորձագիտական գործունեության նպատակը վարույթն իրականացնող մարմնին որոշակի փաստական տվյալներով ապահովելն է, որոնք որոշակի պահանջների բավարարման դեպքում ճանաչվում են որպես ապացույցներ և դրվում գործով կայացվող այս կամ այն որոշման հիմքում: Այս տեսանկյունից փորձագիտական գործունեությունը սերտորեն կապված է ապացուցման գործընթացի, այն է՝ գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելու, ստուգելու և գնահատելու հետ, որն իրականացվում է հատուկ գիտելիքների կիրառմամբ՝ փորձագիտական եզրակացություն տալու միջոցով:

Փորձագիտական հետազոտության ընթացքն ու արդյունքներն ամրագրվում են փորձագետի եզրակացության մեջ: Այս իմաստով հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետև՝ Նախագիծ) ապացույց է համարվում ոչ միայն փորձագետի եզրակացությունը, այլ նաև փորձագետի կարծիքը և փորձագետի ցուցմունքը (*Նախագիծի 86-րդ հոդված*), ինչը կապված է փորձագետի՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի դատավարական վիճակի որոշակի փոփոխության հետ:

Անշուշտ, գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ ՀՀ ՔԴՕ) իրավակարգավորումների պարագայում մասնագետի կարծիքը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Նշված հարցին անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան), որը, մասնավորապես վերլուծելով ՀՀ ՔԴՕ-ի համապատասխան նորմերը, արձանագրել է. «*Այսպիսով, փորձագետի եզրակացությունն իրենից ներկայացնում է գրավոր շարադրված հետևություններ, որտեղ փորձագետը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված հետազոտությունների հիման վրա պատասխանում է վարույթն իրականացնող մարմնի առաջադրած հարցերին:*

Ինչ վերաբերում է մասնագետին, ապա վերջինս հետազոտություններ չի իրականացնում և եզրակացություն չի տալիս, այլ որևէ

բնագավառում իր ունեցած հստություններով և գիտելիքներով աջակցում է վարույթն իրականացնող մարմնին այս կամ այն քննչական կամ այլ դատավարական գործողությունը կատարելիս: Այլ խոսքով՝ վերջինիս կողմից տրվող կարծիքը ոչ թե հետազոտության արդյունք է, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների կամ փորձի վրա հիմնված դիրքորոշում: Ուստի պատահական չէ, որ օրենքով մասնագետի կարծիքը չի դիտվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, և այն չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը: Այն վարույթն իրականացնող մարմնի համար կարող է ունենալ ուղղորդող, խորհրդատվական նշանակություն»¹:

Փորձաքննության արդյունք հանդիսացող փորձագիտական եզրակացությունը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ, գնահատում է վարույթն իրականացնող մարմինը՝ առաջնորդվելով ապացույցների գնահատման ընդհանուր կանոններով և հաշվի առնելով ապացույցի այս տեսակի առանձնահատկությունները:

ՀՀ ՔԴՕ 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից»:

Հարկ է նշել, որ «ապացույցի գնահատում» հասկացության և դրա բովանդակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, Ռ. Ս. Բելկինն ապացույցների գնահատումը բնութագրում է որպես մտավոր տրամաբանական գործընթաց, որն ուղղված է որոշելու ապացույցների թույլատրելիությունն ու վերաբերելիությունը, դրանց միջև կապի առկայությունը և այդ կապի բնույթը, ապացույցների նշանակությունն ու ճշմարտության բացահայտման գործում դրանց օգտագործման հնարավորությունները²:

Մեկ այլ սահմանման համաձայն՝ փորձագետի եզրակացության գնահատումը ենթադրում է որոշակի գործով վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզմունքի ձևավորում՝ եզրակացության գիտական հիմնավորվածության և արժանահավատության, ինչպես նաև դրանում արված հետևությունների ապացուցողական նշանակության վերաբերյալ³:

Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքները՝ փորձագետի եզրակացության գնահատումը կարելի է սահմանել որպես հետաքննության մարմնի, քննիչի, դատարանի կամ դատախազի մտավոր տրամաբանական գործունեություն, որով գնահատող սուբյեկտի մեջ ձևավորվում է ներքին համոզմունք եզրակացության թույլատրելիության, վերաբերելիության, արժանա-

¹ Արտեմ Արմենի Հարությունյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թ. նոյեմբերի 1-ի ՍԴ3/0226/01/14 որոշման 16 և 16.1-րդ կետերը:

² Տե՛ս **Белкин Р. С.** Собрание, исследование и оценка доказательств. М., 1966, էջ 65:

³ Տե՛ս «Судебно-почерковедческая экспертиза». М., 1971, էջ 314:

հավատության, գիտական հիմնավորվածության վերաբերյալ, որոնց հիման վրա հետևություններ են արվում գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման համար փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստական տվյալների դերի և նշանակության մասին:

Փորձագետի եզրակացության գնահատման հարցում հատկապես կարևոր նշանակություն ունի գնահատող սուբյեկտի մեջ ներքին համոզմունքի ձևավորումը: Մասնագիտական գրականության մեջ ներքին համոզմունքը դիտվում է որպես ապացույցների գնահատման մեթոդ, հնարք, սկզբունք, որպես գնահատման չափանիշ կամ արդյունք⁴: Ընդ որում՝ այս կամ այն անհայտ փաստը փորձագետը պարզում է իրեն հայտնի այլ փաստերի հետազոտությամբ՝ իր ներքին համոզմունքին համապատասխան⁵: Վարույթն իրականացնող մարմինն իր հերթին ներքին համոզման է գալիս փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու վերաբերյալ:

Այս տեսանկյունից հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանը *Ա. Ավագյանի և Վ. Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13* որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմամբ վարույթն իրականացնող մարմինների ներքին համոզմունքը դիտում է որպես «ապացույցների բավարարության» որոշման չափանիշ:

Այնուհետև, վերը նշված մոտեցման համատեքստում *Արայիկ Խաչատրյանի գործով 2015 թվականի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14* որոշման մեջ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապացույցի առանձին տեսակը՝ փորձագետի եզրակացությունը, գնահատելու խնդրին: Նշված գործով Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը հանգում է այն բանին, որ.

«(...) փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմինը, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: (...) փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Մինևույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապա-

⁴ Մանրամասն տե՛ս **Новик В. В.** Криминалистические аспекты доказывания по уголовным делам: проблемы теории и практики. СПб., 2005, էջ 354-365:

⁵ Տե՛ս **Соколовский З. М.** Оценка заключений криминалистической экспертизы письма. М., 1959, էջ 13:

տասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը: (...)»⁶:

Պետք է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ փորձագետի եզրակացության գնահատման վերաբերյալ օգտագործվում են տարբեր եզրույթներ. մի դեպքում խոսվում է եզրակացության գնահատման «տարրերի»⁷, մեկ այլ դեպքում՝ գնահատման «չափանիշներ»⁸, երրորդ դեպքում՝ փորձագետի եզրակացության գնահատման «տեսակետների»⁹ (կողմերի) մասին: Ընդ որում, երբեմն նշված եզրույթները միաժամանակ օգտագործվում են փորձագետի եզրակացության գնահատման ենթակա միևնույն հատկանիշը մատնանշելու համար:

Կարծում ենք՝ այս հասկացությունները, չնայած իրենց սերտ կապին, էականորեն տարբերվում են: Ուստի անհրաժեշտ է դրանք որոշակիորեն տարանջատել միմյանցից, հստակեցնել յուրաքանչյուրի բովանդակությունը:

Փորձագետի եզրակացության գնահատման «տարրերը», մեր կարծիքով, եզրակացության՝ գնահատման ենթակա այն հատկանիշները կամ կողմերն են, որոնց միաժամանակյա առկայությունը պարտադիր է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու համար: Այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության կորստին:

Փորձագետի եզրակացության գնահատման «չափանիշները» գիտությամբ և պրակտիկայով մշակված այն կողմնորոշիչներն են, որոնց վրա հիմնվելով վարույթն իրականացնող մարմինը ձևավորում է ներքին համոզմունք փորձագետի եզրակացության այս կամ այն տարրի

⁶ Հիմք ընդունելով այս իրավական վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուժողի՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերն ընկալելու և դրանք վերարտադրելու ունակությունը պարզելու համար նշանակված դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության եզրակացության մեջ առկա են անհատականություններ, հակասություններ, իսկ ստորադաս դատարանները դրանք վերացնելուն ուղղված միջոցներ չեն ձեռնարկել, ուստի որոշել է բեկանել ստորադաս դատարանների դատական ակտերը և գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության ձեռնարկելու համար նաև օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ (փորձագետի հարցաքննություն կամ լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության նշանակում)՝ որոշմամբ արձանագրված հակասությունները վերացնելու համար (*մանրամասն տե՛ս* «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ», հատոր 3-րդ, Եր., 2016, էջ 316-317):

⁷ Տե՛ս **Сахнова Т. В.** Судебная экспертиза. М., 2000, էջ 253-254:

⁸ Տե՛ս **Притузова В. А.** Оценка заключения криминалистической экспертизы вышестоящим судом. М., 1960, էջ 8:

⁹ Տե՛ս **Новик В. В.**, նշվ. աշխ., էջ 365-376:

առկայության կամ բացակայության մասին: Այլ կերպ ասած՝ եզրակացության գնահատման չափանիշները ծառայում են դրա տարրերի գնահատման նպատակին և փորձագետի եզրակացության գնահատման ենթակա տարրերի առկայության կամ բացակայության որոշման պայմաններ են:

Մասնագիտական գրականության մեջ, ինչպես նշեցինք, շատ դեպքերում փորձագետի եզրակացության գնահատման տարրերն ու չափանիշները չեն տարանջատվում. ներկայացվում են միասնաբար թվարկմամբ: Այսպես, Ե. Ի. Գալյաշինան փորձագետի եզրակացության գնահատման գործընթացում առանձնացնում է գնահատման ենթակա հետևյալ տարրերը.

- *փորձաքննությունն նշանակելու և կատարելու դատավարական կարգը,*

- *փորձագետի եզրակացությունը կազմելու ճշտությունը և դրա մեջ օրենքով նախատեսված բոլոր ռեկվիզիտների առկայությունը,*

- *փորձագետի ձեռնհասությունը,*

- *գործի էլքով փորձագետի շահագրգռվածությունը,*

- *հետազոտության ներկայացված օբյեկտների ձեռքբերման և պահպանման դատավարական կարգի պահպանումը,*

- *փորձագետի եզրակացության արժանահավատությունը, դրանում շարադրված հետևությունների գիտական հիմնավորվածությունը, պատճառաբանվածությունը, հետևությունների համապատասխանությունը կատարված հետազոտություններին, կիրառված մեթոդիկաների արժանահավատությունը և մեթոդների հիմնավորվածությունը,*

- *գիտական հիմնավորվածության ստուգումը, որը ենթադրում է հետևությունների տրամաբանական կապը կատարված հետազոտությունների հետ,*

- *փորձագետին ներկայացված նյութերի ամբողջականությունը¹⁰:*

Այլ հեղինակներ փորձագետի եզրակացության գնահատումը բաժանում են երկու փոխկապակցված մասերի՝

ա) փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության, պատճառաբանվածության, նրա հետևությունների մանրամասն, բազմակողմանի և օբյեկտիվ ստուգումը,

բ) փորձագետի եզրակացության մեջ շարադրված փաստերի ապացուցողական նշանակության որոշումը, գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ դրանց կապի և հարաբերության պարզումը¹¹:

Մեր կարծիքով անհրաժեշտ է տարանջատել փորձագետի եզրակացության գնահատման ենթակա տարրերը և յուրաքանչյուր տարրի համար առանձնացնել դրա գնահատման համապատասխան չափա-

¹⁰ Տե՛ս Գալյաշինա Ե. Ի. Назначение, производство и оценка заключения судебной экспертизы // http://www.rusexpert.ru/books/cena_slova3/029.htm (20.04.2010):

¹¹ Տե՛ս «Судебно-почерковедческая экспертиза», էջ 314:

նիշները: Այս տեսակետից փորձագետի եզրակացության գնահատումը, կարծում ենք, ներառում է գնահատման ենթակա երեք հիմնական տարրերի ամբողջություն՝

ա) փորձաքննությունը նախապատրաստելու, նշանակելու և կատարելու դատավարական կարգի պահպանման (եզրակացության որպես սպացույցի թույլատրելիության) գնահատումը,

բ) եզրակացության արժանահավատության և գիտական հիմնավորվածության գնահատումը,

գ) եզրակացության մեջ շարադրված փաստերի՝ որպես սպացույցների վերաբերելիության, եզրակացության դերի և նշանակության գնահատումը գործով ձեռք բերված այլ սպացույցների շարքում:

Այս տարրերից յուրաքանչյուրն ունի դրա բովանդակությունը կազմող որոշակի չափանիշների համակարգ, որոնց գնահատմամբ որոշվում են փորձագետի եզրակացության վերը թվարկված տարրերի բովանդակությունը, դրանց առկայությունը կամ բացակայությունը և, ի վերջո, դրանց ապացուցողական նշանակությունն ու գործով կայացվող որոշման հիմքում դնելու հարցը: Ընդ որում, այդ տարրերը սերտորեն փոխկապակցված և փոխապայմանավորված են, և դրանցից մեկի գնահատման արդյունքներն ազդում են մյուսի գնահատման արդյունքների վրա:

Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՄԻԵԴ) պրակտիկայում փորձագետի եզրակացության գիտական հիմնավորվածության և դրա գնահատման միջազգային իրավական երաշխիքը դիտվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետի՝ արդար դատաքննության իրավունքի շրջանակներում: Այդ կետի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներում¹² հատուկ նշել է, որ անկողմնակալ փորձագետի գիտականորեն հիմնավորված փորձագիտական եզրակացությունը յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի մաս է¹³:

Հանցագործությունների քննության գործընթացում փորձագետի եզրակացության դերն ու նշանակությունը որոշելու համար անհրա-

¹² Տե՛ս, օրինակ, Brandstetter v. Austria, 28 August 1991; Eskelinen and others v. Finland, 8 August 2006; Kamasinski v. Austria, 19 December 1989 գործերով Եվրոպական դատարանի վճիռները, ինչպես նաև «Կրեուզն ընդդեմ Լեհաստանի» գործով վճիռը 19.06.2001 թ. (Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Վճիռների ժողովածու, խմբ. Դ. Ավետիսյան, Եր., 2006, էջ 9-36):

¹³ Մանրամասն տե՛ս նաև **Դ. Մելքոնյան**, Ապացույցների թույլատրելիության եվրոպական չափանիշները, «Պետություն և իրավունք», № 4 (42), 2008, էջ 14-19:

ժեշտ է քննարկել դրա՝ *գնահատման ենթակա տարրերի և չափանիշների բովանդակությունը և դրանց նշանակությունը*:

Ինչպես արդեն նշել ենք, փորձագետի եզրակացության՝ գնահատման ենթակա առաջին տարրը *փորձաքննությունը նախապատրաստելու, նշանակելու և կատարելու դատավարական կարգի պահպանման (եզրակացության թույլատրելիության)* գնահատումն է: Այն, ըստ էության, բխում է ապացույցների թույլատրելիության օրենսդրական ընդհանուր պահանջից, մասնավորապես՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթից, որն արգելում է հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումը:

Ապացույցի ձեռքբերման դատավարական կարգի պահպանվածության՝ փորձագետի եզրակացության թույլատրելիության տեսանկյունից ստուգվում է, թե արդյո՞ք փորձագետ է նշանակվել համապատասխան բնագավառում ձեռնհաս և գործով չշահագրգռված անձը (*ՀՀ ՔՂՕ 85-րդ հոդվածի 1-ին մաս*), չկա՞ն արդյոք փորձագետին բացարկ հայտնելու հիմքեր (*ՀՀ ՔՂՕ 97-րդ հոդված*), պահպանվե՞լ է փորձաքննությունն նշանակելու և կատարելու դատավարական կարգը (*ՀՀ ՔՂՕ 243-252-րդ հոդվածներ*), փորձագետին բացատրվե՞լ են նրա իրավունքներն ու պարտականությունները, փորձագետը նախազգուշացվե՞լ է եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու կամ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին (*ՀՀ ՔՂՕ 248-րդ հոդվածի 2-րդ մաս, 249-րդ հոդվածի 2-րդ մաս*), փորձագետի եզրակացության կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանու՞մ են արդյոք ՀՀ ՔՂՕ-ով սահմանված պահանջներին (*ՀՀ ՔՂՕ 250-րդ հոդվածի 2-րդ մաս*) և այլն: Այս և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ դրույթները փորձագետի եզրակացության թույլատրելիության գնահատման հիմքերն են, և դրանք չպահպանելը հանգեցնում է փորձագետի եզրակացությունը գործով որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությանը:

Փորձագետի եզրակացության թույլատրելիությունը գնահատելիս պետք է ստուգել նաև, թե փորձագիտական հետազոտության ներկայացված օբյեկտները, համեմատական նմուշները կամ այլ նյութերը ձեռք բերելիս պահպանվել են արդյոք քրեադատավարական օրենսդրության պահանջները, և այդ նմուշները կարող են արդյոք գործով օգտագործվել որպես թույլատրելի ապացույցներ: Խոսքը մասնավորապես, վերաբերում է «թունավորված ծառի պտուղների մասին» հայտնի կանոնին, որի համաձայն՝ օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության դեպքում պետք է անթույլատրելի ճանաչել ոչ միայն տվյալ քննչական գործողության արձանագրությունը, այլև դրա ընթացքում ձեռք բերված բոլոր նյութերն ու դրանց հետազոտման արդյունք-

ները¹⁴: Օրինակ՝ անթույլատրելի պետք է ճանաչել ոչ միայն օրենքի խախտմամբ կատարված խուզարկության կամ առգրավման արձանագրությունը և դրանով ձեռք բերված իրեղեն ապացույցները, այլ նաև դրանց փորձագիտական հետազոտությամբ փորձագետի տված եզրակացությունը: Կամ՝ անթույլատրելի է ոչ միայն բռնությամբ, սպառնալիքով կամ խաբեությամբ (*ՀՀ ՔՂՕ 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ*) համեմատական հետազոտության համար ձեռք բերված նմուշների, այլ նաև դրանց կապակցությամբ փորձագետի տված եզրակացության օգտագործումը որպես ապացույց և այլն:

Ճիշտ է, «թունավորված ծառի պտուղների մասին» կանոնը չի ամրագրվել ՀՀ ՔՂՕ-ում, սակայն պրակտիկայում այն լայնորեն կիրառվում է: Օրինակ՝ Վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում, կասկածի տակ դնելով դատաքիմիական փորձաքննության եզրակացության արժանահավատությունը, նշում է. *«Ինչ վերաբերում է փորձագետի կողմից անձամբ ավտոմեքենայից վերցված մանրաթելի նմուշին, որը նույնացվել է տուժողի հագուստի մանրաթելերի հետ, ապա պետք է քննարկման առարկա դարձվի այն հարցը, թե ավտոմեքենայից նմուշ վերցնելիս արդյոք պահպանվել են ՀՀ ՔՂՕ 253-256-րդ հոդվածներով նախատեսված հետազոտման համար նմուշներ ստանալու վերաբերյալ օրենսդրության պահանջները և ըստ այդմ որոշել փորձաքննության եզրակացության այդ մասը մեղադրող ապացույց դիտելու կամ չդիտելու հարցը»¹⁵:*

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեադատավարական օրենքի էական խախտմամբ կատարված քննչական գործողությունից բխող ապացույցների թույլատրելիության հարցին, վերը վկայակոչված *Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ որոշման* մեջ ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ «օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի» ներքո անհրաժեշտ է հասկանալ նաև այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել թեկուզ առանց օրենքի խախտման, սակայն օրենքի խախտմամբ կատարված քննչական կամ դատավարական գործողությամբ կամ այն ապացույցների հիման վրա, որոնք ձեռք էին բերվել օրենքի խախտմամբ կամ անթույլատրելի ապացույցի հետ զտնվում են պատճառահետևանքային կապի մեջ: Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը հաստատել է ՀՀ ներպետական իրավունքում «թունավոր ծառի պտուղների» կանոնի առկայությունը¹⁶:

¹⁴ Մանրամասն տե՛ս **Դ. Մեյրոնյան**, Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը, «Իրավագիտության հարցեր», № 4, 2005, էջ 47-55, **Հ. Դուկասյան**, Ապացույցներն անթույլատրելի ճանաչելու դատավարական կարգն ու հետևանքները «Պետություն և իրավունք», № 1 (15), 2002, էջ 42-53:

¹⁵ «ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական և զինվորական գործերով պալատի որոշումների ժողովածու», հ. 3, Եր., 2001, էջ 195:

¹⁶ Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արմեն Սեյրանի Սարգսյանի վերաբերյալ 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔԲԴ/0295/01/08 որոշման 15-17-րդ կետերը:

Նշված կանոնն իր կիրառությունն է գտել նաև ՀՀ դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը *Մ. Օհանյանի գործով* դատավճռում «ՀՀ վճռաբեկ դատարանի Ա. Սարգսյանի վերաբերյալ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով *Մ. Օհանյանի վերաբերյալ քրեական գործով ամբաստանյալի մեղադրանքի հիմքում դրված Տոբսիկոքիմիական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները՝ գտել է, որ դրանք անթույլատրելի են, քանի որ հիմնված են օրենքի խախտմամբ կատարված քննչական գործողության և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի վրա:*

Դատարանը, մասնավորապես, հիմք ընդունելով այն փաստը, որ սույն քրեական գործով ամբաստանյալ Մ. Օհանյանից և վկա Ա. Մուրադյանից մագի և մեզի նմուշները ստացվել և փորձաքննությունները նշանակվել են օրենքի ակնհայտ և կոպիտ խախտումներով, մասնավորապես՝ կատարվել է ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, նմուշներ վերցնելու մասին որոշումները կայացվել, այնուհետև փորձանմուշները վերցվել և արձանագրությունները կազմվել են քրեական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների ակնհայտ և կոպիտ խախտումներով, որոնց ուժով նմուշներ վերցնելու արձանագրությունը և դրա հիման վրա ստացված նմուշներն անթույլատրելի են, ուստի թունավոր ծառի պտուղների սկզբունքով անթույլատրելի են նաև Տոբսիկոքիմիական փորձաքննությունների թիվ 14-2255 և 14-2258 եզրակացությունները, քանի որ բացի այն, որ դրանց կատարման իրավական հիմքը հանդիսացող որոշումը կայացրել է ոչ պատշաճ սուբյեկտը, այլև՝ դրանց բովանդակությունն անմիջականորեն բխում է օրենքի խախտմամբ կատարված նմուշներ ստանալու արձանագրություններից և փորձաքննություն նշանակելու մասին որոշումներից, այսինքն՝ այդ ապացույցները գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ»¹⁷:

Ուշագրավ է նաև այն, որ քննարկվող քրեական գործով փորձագետի եզրակացությունը դատարանն արդարացիորեն գնահատել է փորձագիտական հետազոտման ներկայացված օբյեկտների՝ նմուշների ձեռքբերման հավաստիության տեսանկյունից՝ արձանագրելով, որ անթույլատրելի է ճանաչում փորձագետի եզրակացությունը «...նաև այն տեսանկյունից, որ փորձանմուշները վերցվել և փորձաքննությունները նշանակվել են քրեադատավարական օրենքի պահանջների **էական խախտումներով:** (...)¹⁸»:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը *Արայիկ Օնիկի Խաչատրյանի գործով* որոշման մեջ, վերլուծելով ՀՀ ՔԴՕ 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի, 108-րդ հոդվածի, 250-րդ հոդվածի 2-րդ մասի,

¹⁷ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2015 թ. հոկտեմբերի 21-ի ԱԸԱԴ1/0010/01/15 դատավճիռը (կետ 1.3.):

¹⁸ Նույն տեղում (կետ 1.2.):

25-րդ հոդվածի պահանջները, արձանագրում է.

«(...) Այսպես, փորձագետի եզրակացությունը արժանահավատության տեսանկյունից գնահատելիս վարույթ իրականացնող մարմիններ, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնի օրենքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջների պահպանվածությունը: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-252-րդ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ փորձագետի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված, բավարար չափով հստակ և լրիվ: Այլ խոսքով փորձագետի եզրակացությունում կատարված հետազոտությունների ողջ ընթացքն ու արդյունքները պետք է շարադրվեն ամբողջական և հնարավորին չափ մանրամասն, կատարված հետազոտությունների և հետևությունների միջև պետք է առկա լինի տրամաբանական կապ, բացառվեն իմաստային հակասությունները: Միայն այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա հասկանալ հետազոտության էությունը և պատշաճ գնահատել դրա արդյունքները: Միննույն ժամանակ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում նշված պահանջներին, օրենսդիրը, հիմք ընդունելով փորձագետի եզրակացության՝ որպես որոշակի հանգամանքներ հաստատելու համար թույլատրելի ապացույցի անփոխարինելիությունը, վարույթն իրականացնող մարմնին օժտել է այդ պահանջների պահպանումն ապահովելու այնպիսի լծակներով, ինչպիսիք են լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակելը, փորձագետին հարցաքննելը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ փորձագետի եզրակացությունը չի համապատասխանում հիմնավորվածության, բավարար չափով հստակության կամ լրիվության պահանջներին, այն չի կարող գնահատվել որպես արժանահավատ ապացույց, քանի դեռ օրենքով սահմանված միջոցներով չեն վերացվել այդ խախտումները»¹⁹:

Այսպիսով, կարող ենք հավաստել, որ, ի տարբերություն ապացույցի մյուս տեսակների, փորձագետի եզրակացության պատշաճ և լիարժեք գնահատումը ենթադրում է վերլուծել այն դրա հիմքերի ամբողջականության ու արժանահավատության տեսանկյունից, այլ կերպ փորձագետի եզրակացության գնահատման գործընթացը նպատակահարմար է դիտարկել դրա **իրավական** (փորձաքննություն նշանակելու մասին որոշման, փորձանմուշներ վերցնելու մասին արձանագրության) և **փաստական** (նմուշների ու օբյեկտների հավաստիության, պատշաճության, համապատասխանության) հիմքերի հարաբերակցության ու միասնականության մեջ:

¹⁹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Օսիկի Խաչատրյանի 2015 թվականի մարտի 27-ի ԿԴ1/0006/01/14 որոշման 15-17-րդ կետերը:

Բանալի բառեր – փորձաքննություն, փորձագետ, մասնագետ, հատուկ գիտելիք, ասպարույց, գնահատում, քրեական դատավարություն, քրեական գործ

ВАГЕ ЕНГИБАРЯН – Особенности доказательственного значения заключения эксперта в уголовном процессе. – В статье анализируются уголовно-правовые и научные основы оценки и использования заключения эксперта в уголовном процессе. С опорой на уголовно-правовое регулирование УПК РА подчёркнуты особенности норм, относящихся к заключениям эксперта. Проанализированы различные подходы учёных, правоприменительные примеры и тенденция Кассационного суда РА по развитию прецедентной практики. В отличие от других видов доказательств оценка заключения эксперта предполагает изучение его достоверности; иначе говоря, целесообразно учитывать в совокупности и целостности правовые и фактические основы конкретного заключения.

Ключевые слова: экспертиза, эксперт, специалист, специальные знания, доказательство, оценка, уголовный процесс, уголовное дело

VAHE YENGIBARYAN – Peculiarities of Evidentiary Value of Expert's Conclusion in Criminal Procedure. – The criminal procedural and scientific bases of assessment and use of expert's conclusion in the criminal procedure are discussed in the paper presented. The author presents legal regulations of RA Code of Criminal Procedure concerning proofs evaluation and, based on that, underlines peculiarities of these norms in regard to the expert's conclusion. Various approaches of scientists and RA law-enforcement practice have been analyzed from this point of view.

The author represents legal approaches of the RA Court of Cassation, as well as examples from other judicial acts related to the topic covered, and shows the trend of RA Court of Cassation case-law development.

As a conclusion, the author states that, unlike other types of proofs, a proper and comprehensive assessment of an expert's opinion implies its study and analysis from the point of view of the integrity and credibility of the foundations, in other words – the process of an expert opinion assessment should be carried out paying attention to the totality and integrity of the legal (decision on expertise commission, protocol on obtaining samples) and actual (authenticity, compliance of samples and objects) bases.

Key words: expertise, expert, specialist, special knowledge, evidence, assessment, criminal procedure, criminal case

Ներկայացվել է՝ 07.03.2019, գրախոսվել է՝ 04.04.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

**ՀԵՏԱԽՈՒՉՄԱՆ ՄԵՋ ԳՏԼՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼԸ
ՈՐՊԵՍ ՀԵՌԱԿԱ (ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ)
ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՄԵՐԳԵՑ ՄԱՐԱԲՅԱՆ

Անձի անձնական ազատության իրավունքը կարող է սահմանափակվել բացառապես այնպիսի ընթացակարգին համապատասխան, որը պաշտպանում է նրան կամայականությունից և անօրինականությունից: Քրեական դատավարության զարգացման ընթացքում նման ընթացակարգի հիմք է ծառայել habeas corpus (լատ. «Թեկուզ դու ունես մարմին») ինստիտուտը: Պատմականորեն habeas corpus ընթացակարգն անձին ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգ է, որը յուրաքանչյուր անձի երաշխավորում է դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքը, որպեսզի դատարանը ստուգի ազատությունից զրկելու օրինականությունն ու հիմնավորվածությունը:

Հենց habeas corpus-ի սկզբունքների վրա է կառուցված, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասի այն պահանջը, որ եթե սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի¹ հիմքով ազատությունից զրկված անձի վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին, ապա նա անհապաղ ազատ է արձակվում:

Habeas corpus սկզբունքն ընկած է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ձերբակալված անձ սույն հոդվածի 1 (գ) կետի² դրույթներին համապատասխան անհապաղ տարվում է

¹ Ըստ այդ կետի՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝ անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ այն կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:

² Ըստ այդ կետի՝ ոչ ոք չի կարող ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝ անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն

դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական գործառնություններ իրականացնել, և իրավունք ունի դատաքննության ենթարկվելու խելամիտ ժամկետում կամ ազատվել մինչև դատը երաշխիք տրամադրելով:

Պետք է նկատել, որ թեև Սահմանադրության և Կոնվենցիայի վերոնշյալ ձևակերպումներում առկա են էական տարբերություններ, սակայն էության մեջ երկուսն էլ պահանջում են, որ պետությունը ճյուղային օրենսդրությամբ սահմանի հատուկ ընթացակարգ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին՝ քրեական հետապնդման մարմինների միջնորդությունները քննարկելու և լուծելու համար, ընդ որում՝ այնպիսի կարևոր երաշխիքի ապահովմամբ, ինչպիսին մեղադրյալի՝ դատարանում լսված լինելու կամ իր նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդության քննարկման դատական նիստին պարտադիր մասնակցելու իրավունքն է³: Սակայն ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը, հակառակ սահմանադրության և միջազգային չափանիշների, չի սահմանում կալանավորման մասին միջնորդությունների քննարկման դատական նիստին մեղադրյալի պարտադիր մասնակցության կամ դատարանում լսված լինելու իրավունքի ապահովման իմպերատիվ պահանջ, այլ հակառակը՝ որոշ դեպքերում թույլատրում է նրա նկատմամբ կալանավորում կիրառելու հարցի քննարկում և լուծում՝ առանց մեղադրյալի մասնակցության: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի և 285-րդ հոդվածի 2-րդ մասի համալիր վերլուծությունից հետևում է, որ մեղադրյալի նկատմամբ նրա բացակայությամբ կարող է կալանավորման վերաբերյալ միջնորդությունը քննարկվել, երբ

1) ազատության մեջ է և պատշաճ կարգով ծանուցված լինելով՝ չի ներկայանում դատական նիստին,

2) գտնվում է հետախուզման մեջ:

Առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ քրեական դատավարության օրենսգրքում որևէ դրույթ չկա այն մասին, որ, այնուամենայնիվ, եթե դատարանի որոշումից հետո մեղադրյալը հայտնաբերվում և հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, այսինքն՝ դատարանի որոշման հիման վրա վերցվում է արգելանքի, ապա ինչ կարգով պետք է ապահովվի ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասում և ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ անձի՝ դատարանի առաջ կանգնելու և դատարանի կողմ-

դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

³ Այս իրավունքի խախտման պատճառաբանությամբ էր, որ ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածը // տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2018 թվականի հունիսի 26-ի ՍԴՈ-1421 որոշումը:

մից լաված լինելու իրավունքի իրացումը: Այս հանգամանքը վկայում է, որ քրեադատավարական օրենսդրության նման կանոնակարգումներն ուղղակի հակասում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և ՄԻԵԿ 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը և մասնավորապես 285-րդ հոդվածի 2-րդ մասը ու 259-րդ հոդվածի 3-րդ մասը ՄԻԵԿ-ի և դրա հիման վրա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարան) ձևավորած չափանիշներին հակասելու կամ չհամապատասխանելու հանգամանքը հաստատել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը Տ. Վահրադյանի վերաբերյալ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ԼԴ/0197/06/08 որոշմամբ, որում մասնավորապես արձանագրել է. «(...) [Օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասի և 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում ամրագրված դրույթները] հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: (...)» (կետ 30):

Վճռաբեկ դատարանի այս որոշման վերլուծությունից պարզ է դառնում, որ դատարանի նման հետևությունները հիմնված են Եվրոպական դատարանի կողմից ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթներին տարբեր գործերով տրված մեկնաբանությունների վրա:

Այսպես.

Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառմանը, նշել է, որ այդ կետը չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն այն պահանջից, որ անձը ձերբակալվելիս կամ կալանավորվելիս պետք է բերվի դատավորի կամ այլ պաշտոնյայի մոտ (Ladent v. Poland, 2008 թ., գանգատ № 11036/03, կետ 75): Դա նշանակում է, որ կալանավորման հարցի քննարկմանը մեղադրյալի մասնակցությունն ազատությունից զրկելու օրինականության ապահովման հիմնական երաշխիքներից է, որը չի կարող սահմանափակվել ոչ մի դեպքում (*այս հանգամանքը հաստատել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը Տ. Վահրադյանի վերաբերյալ գործով որոշման մեջ, տե՛ս կետ 26*):

Առավել ուշագրավ է Եվրոպական դատարանի *Գարաբանն ընդդեմ Ռուսաստանի* գործով վճիռը, որում Դատարանը փոքր-ինչ այլ կերպ է մեկնաբանել 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, քան *Լադենտն ընդդեմ Լեհաստանի* գործով, սակայն դրանում տվել է այնպիսի մեկնաբանություններ, որոնցով, ըստ էության, զարգացրել է նախկին դիրքորոշումը: Եվրոպական դատարանը մասնավորապես նշել է. «Անձին կալանքի տակ վերցնելը հեռակա կարգով (կամ նրա բացակայությամբ), երբ նա թաքնվում է արդարադատությունից, հատկապես երբ

նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում, չի հակասում Կոնվենցիայի դրույթներին», սակայն դրանից հետո վերապահում է անում և հստակ արձանագրում. «Երբ 2003 թվականի փետրվարի 1-ին դիմումատուն վերադարձվել էր Թուրքմենստանից և արգելանքի վերցվել Ռուսաստանի Դաշնության տարածքում, ապա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով պետք է անհապաղ տարվեր դատավորի մոտ, մինչդեռ դիմումատունն մինչև 2003 թվականի մարտի 19-ը, այսինքն՝ մեկ ամիս 19 օրվա ընթացքում չեն ներկայացրել դատավորին: Այդ ձգձգումը չի կարող դիտարկվել որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խստագույն պահանջներին համապատասխան» (Garabaev v. Russia, 2007 թ., բողոք № 38411/02, կետ 101):

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշմամբ ոչ միայն արձանագրել է, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ՀՀ քրեադատավարական օրենսդրության կանոնակարգումները հակասում են Եվրոպական չափանիշներին, այլև իրացնելով իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության իր սահմանադրական լիազորությունը՝ սահմանել է այդ հակասությունը վերացնելուն ուղղված հստակ իրավական դիրքորոշում՝ դրանով իսկ երաշխավորելով նաև անձի՝ դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանի որոշման մեջ մասնավորապես ամրագրված է հետևյալը. «(...) Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը: ... Հետևաբար՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ: (...):»:

Թե՛ Եվրոպական դատարանի, թե՛ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներից ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով և ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրա-

վունքի տեսանկյունից էականն այն չէ, որ անձը դատարանի առաջ կանգնի ի սկզբանե կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի միջնորդությունը քննարկելուց հետո, հատկապես որ կարող է գտնվել միջազգային հետախուզման մեջ, այլ էական է այն, որ անձն ազատությունից փաստացի զրկվելու դեպքում 72 ժամվա ընթացքում տարվի դատավորի մոտ՝ անկախ այն բանից, որ դա փաստացի հիմնված է դատարանի նախապես տված որոշման վրա:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի կողմից ազատությունից զրկված անձին «անհապաղ» դատավորի մոտ տանելու պահանջը «72 ժամվա» ժամանակահատվածին նույնացնելուն՝ պետք է արձանագրել, որ այն պայմանավորված է ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված այն պահանջներով, որ առանց դատարանի որոշման անձը կարող է ձերբակալման հետևանքով անազատության մեջ մնալ մինչև 72 ժամ, որը լրանալուց հետո, եթե դատարանը որոշում չի կայացնում անձին կալանավորելու վերաբերյալ, նա պետք է անհապաղ ազատ արձակվի⁴:

Թեև այս մոտեցումը ձևական-իրավաբանական առումով հակասում է ՀՀ Սահմանադրությանը և քրեադատավարական օրենսդրությանը, քանի որ 72 ժամը վերաբերում է առանց դատարանի որոշման անձին ազատությունից զրկելու առավելագույն ժամկետին, ընդ որում՝ ձերբակալման հիմքով ազատությունից զրկելուն, իսկ քննարկվող իրավիճակում առկա է դատարանի որոշում անձին ազատությունից զրկելու մասին, այն էլ՝ կալանավորման հիմքով, սակայն էականն այստեղ այն է, որ Վճռաբեկ դատարանը կարևորել է ոչ թե հարցի ձևական-իրավաբանական կամ քրեադատավարական կողմը, այլ Սահմանադրությամբ և ՄԻԵԿ-ով ամրագրված ու երաշխավորված՝ դատարանի առաջ կանգնելու և դատարանում լսված լինելու անձի իրավունքը:

Պետք է նաև արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի որոշման հետևանքով ձևավորվել է այնպիսի իրավակիրառ պրակտիկա, երբ առանց մեղադրյալի մասնակցության դատարանում քննարկվում է նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը, և եթե դատարանը բավարարում է քննիչի միջնորդությունը, ապա հետագայում, երբ անձին հայտնաբերում և արգելանքի են վերցնում, քննիչը 72 ժամվա ընթացքում կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան՝ կալանավորման հարցը կրկնակի քննարկելու հա-

⁴ Այս առումով ուշագրավ է մասնավորապես ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Հ. Գյուրջյանի վերաբերյալ 2010 թվականի մայիսի 4-ի ԵԷԴ/0004/06/09 որոշմամբ ձևավորած իրավական դիրքորոշումը, որում Դատարանը, վերահաստատելով Ս. Վահրադյանի մասին որոշմամբ ձևավորած մոտեցումը, ամրագրեց, որ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանավորման որոշումը վերահաստատելու մասին միջնորդությունը պետք է ներկայացվի դատարան 72 ժամվա ընթացքում՝ հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությամբ և քրեադատավարական օրենսդրությամբ առանց դատարանի առաջ կանգնելու անձը չի կարող անազատության մեջ մնալ 72 ժամից ավելի:

մար: Ի դեպ, այս կարգը գործում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը հետախուզվում է, իսկ եթե ազատության մեջ է և լինելով պատշաճ ծանուցված՝ չի ներկայանում դատական նիստին, ապա նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում կրկնակի քննարկման պրակտիկա դեռևս չի ձևավորվել:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ եզակի դեպքերում է միայն, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին նախաքննության մարմինների միջնորդությունները դատարանները մերժում են. հիմնականում դրանք բավարարվում են, ընդ որում՝ ինքնին հետախուզում հայտարարելու հիմք հանդիսացած հանգամանքներն էլ դրվում են խափանման միջոց կալանավորում կիրառելու հիմքում: Ուստի ձևավորվել է այնպիսի պրակտիկա, երբ որևէ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն ներկայացնելուն նախորդում է՝

ա) նրան նախաքննության մարմին հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ուղարկումը, որը տարբեր պատճառներով անձը չի ստանում, օրինակ՝ տանը չլինելու, այլ հասցեում բնակվելու և այլ պատճառներով,

բ) դրան անմիջապես հետևում է այդ անձին բերման ենթարկելու մասին որոշման կայացում, որը հաճախ չի կատարվում՝ մի դեպքում այն պատճառով, որ անձի բնակարանի դուռը փակ է լինում, տանը չի լինում, մեկ այլ դեպքում՝ ոստիկանությունը դիտավորյալ չի կատարում, թեև նրանց հայտնի է լինում անձի գտնվելու տեղը. դա հաճախ պատճառաբանվում է աշխատանքային բարձր արդյունավետություն (դրական ցուցանիշ) ցույց տալու անհրաժեշտությամբ, մասնավորապես այն, որ հետախուզում հայտարարելու դեպքում արդեն իսկ հետախուզվող է հայտնաբերվում,

գ) դրանից հետո քննիչը հայտարարում է հետախուզում և, որպես կանոն, միջնորդություն է ներկայացնում դատարան կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, որը դատարանը բավարարում է:

Այլ կերպ ասած՝ հաճախ հետախուզում հայտարարելու արհեստական հիմքեր են ստեղծվում, այնուհետև ձևական հետախուզում է հայտարարվում, որից հետո կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան, որն էլ բավարարում է այն և որոշում կայացնում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, քանի որ հետախուզում հայտարարելու փաստն ինքնին բավարար է անձի ոչ պատշաճ վարքագծի մասին հետևություն անելու համար, որը բարձրացնում է կալանավորում կիրառելու հավանականությունը:

Կարևոր է նաև նկատել, որ գործող քրեադատավարական օրենսդրությամբ որևէ իմպերատիվ կանոն նախատեսված չէ, որ հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ պետք է անձի նկատմամբ

կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն ներկայացվի դատարան. ըստ 259-րդ հոդվածի 3-րդ մասի՝ քննիչին տրված է նման միջնորդություն ներկայացնելու իրավունք, ոչ թե պարտականություն, այսինքն՝ այն թողնված է քննիչի հայեցողությանը, որը, սակայն, գործնականում հաճախ չարաշահվում է:

Այլ կերպ ասած՝ հենց օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հայեցողական լիազորության մեջ է թաքնված այն «չարիքի արմատը», որը գործնականում հանգեցնում է չարաշահումների և կամայականությունների: **Հետևաբար, իրավաչափ հարց է ծագում, թե որ դեպքում պետք է պարտադիր լինի հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ կալանավորում կիրառելը:** Մենք այն կարծիքին ենք, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորում կիրառելու հարցի քննարկումը միայն այն դեպքում կարող է իրավաչափ լինել, երբ նրա նկատմամբ միջազգային (միջպետական) հետախուզում է հայտարարված, իսկ ներպետական (տեղական) հետախուզում հայտարարված լինելու կամ ազատության մեջ գտնվելու դեպքում, պատշաճ ծանուցված լինելով՝ դատական նիստին չներկայանալու պարագայում նրա նկատմամբ կալանավորման հարցի քննարկում չպետք է իրականացվի առանց նրա մասնակցության կամ հեռակա կարգով: Այդ դեպքում հարցը կարող է ունենալ այլ լուծում, որին դեռ կանդիդատանք. այստեղ փաստենք, որ բացառապես միջազգային հետախուզում հայտարարելու հիմքով առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ մեր դիրքորոշումը նախևառաջ պայմանավորված է ՀՀ վավերացրած միջազգային իրավական ակտերի և մասնավորապես՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թ. Մինսկի և 07.10.2002 թ. Քիշնևի կոնվենցիաների (այսուհետ՝ Մինսկի և Քիշնևի կոնվենցիա), ինչպես նաև 13.12.1957 թվականի «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Հանձնման մասին կոնվենցիա) պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հետախուզման մեջ գտնվող անձի հանձնման մասին պահանջը կարող է իրականացվել, եթե առկա է կալանավորման մասին դատարանի որոշումը (*Մինսկի կոնվենցիայի 58-րդ հոդված, Քիշնևի կոնվենցիայի 67-րդ հոդված, Հանձնման մասին կոնվենցիայի հոդված 1, հոդված 12-ի մաս 2-րդ, կետ «ա», հոդված 16-ի, մաս 2-րդ և այլն*): Ավելին՝ Քիշնևի կոնվենցիայի 69-րդ հոդվածը սահմանում է, որ հետախուզում իրականացնելու մասին խնդրանքին ևս պետք է կցված լինի կալանավորման մասին իրավասու արդարադատության մարմնի որոշումը, հակառակ դեպքում ոչ միայն հանձնումը, այլև հետախուզումը չեն կարող իրականացվել (*Մինսկի կոնվենցիան*

նման իրավակարգավորում չունի): Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ Քիշնևի կոնվենցիայի 70-րդ հոդվածում խոսվում է նաև միջազգային (միջպետական) հետախուզման և այդ հիմքով կալանավորման ու հանձնման հարցերի մասին, որոնք սկզբունքային նշանակություն ունեն սույն իրավական վերլուծության համատեքստում:

Այսպիսով, միջազգային չափանիշների տեսանկյունից՝ միջազգային (միջպետական) հետախուզում հայտարարելու դեպքում առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը իրավաչափ է և պայմանավորված է առնվազն ՀՀ վավերացրած՝ Մինսկի, Քիշնևի և Հանձնման մասին կոնվենցիաների պահանջների կատարման անհրաժեշտությամբ, քանի որ առանց կալանավորման մասին իրավասու մարմնի որոշման հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի միջազգային հետախուզում, կալանավորում և հանձնում հայցող պետությանը: Հետևաբար, սա այն եզրակի դեպքն է, որը թույլ է տալիս անձի նկատմամբ կալանավորման հարց քննարկել նրա բացակայությամբ: Ի դեպ, հենց այս հանգամանքով էր պայմանավորված Եվրոպական դատարանի *Գարաբանն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության* գործով վճռում ձևավորած մոտեցումը, որով դատարանը հնարավոր է համարում առանց մեղադրյալի նրան կալանավորելը, սակայն պայմանով, որ նրա ի հայտ գալու դեպքում անհապաղ տարվի դատավորի մոտ: Նշված գործի փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հենց Մինսկի կոնվենցիայի պահանջներին համապատասխան է Գարաբանի նկատմամբ առանց նրա մասնակցության կիրառվել խափանման միջոց կալանավորումը, սակայն երբ նա հանձնվել է ՌԴ իրավասու մարմիններին, ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան անհապաղ չի տարվել դատարան, որը և ՄԻԵԴ-ի համար հիմք է հանդիսացել խախտում արձանագրելու:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ոչ միայն ՄԻԵԿ և քրեադատավարական օրենսդրության հակասությունն է լուծել, այլև տարբեր միջազգային պայմանագրերի (ՄԻԵԿ, Մինսկի և Քիշնևի կոնվենցիաներ և այլն):

Կարևոր է նաև նշել, որ թեև ՀՀ վճռաբեկ դատարանը տեղայնացրեց Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշը, սակայն խնդիրն այն է, որ չտարանջատեց հետախուզման տեսակը, ուստի ստացվեց այնպես, որ, ըստ ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումների, էական չէ, թե անձի նկատմամբ հայտարարված է միջազգային, թե՞ ներպետական հետախուզում. նրա նկատմամբ կալանավորման հարցը քննարկվում է նրա բացակայությամբ, և եթե դատարանը բավարարում է քննիչի միջնորդությունը և կիրառում է կալանավորումը, ապա նրա ի հայտ գալու դեպքում քննիչը կրկին միջնորդություն է ներկայացնում դատարան՝ կալանավորման հարցը վերստին քննարկելու համար:

Կարծում ենք՝ նման պրակտիկան ոչ միայն իրավաչափ չէ և ըստ էության քրեադատավարական օրենսդրությունը շրջանցելու միջոց է, այլև ավելորդ ծանրաբեռնվում են և կրկնակի աշխատանք են կատարում թե՛ նախաքննության մարմինները, թե՛ դատարանները, ավելին՝ հաճախ վտանգվում են անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Հետևաբար գտնում ենք, որ այն պետք է ենթարկել որոշակի սահմանափակումների և կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ անձը գտնվում է **միջազգային (միջպետական) հետախուզման մեջ**, քանի որ մնացած բոլոր դեպքերում քրեադատավարական օրենսդրությունն ունի այնպիսի կառուցակարգ, որը ճիշտ մեկնաբանելու և կիրառելու դեպքում կարող է բացառել առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքերը և լուծել ներպետական հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ նրա ներկայությունն ապահովելու հարցերը: Այլ կերպ ասած՝ ներպետական (տեղական) հետախուզման դեպքում առկա է քրեադատավարական այլ կառուցակարգ, որը կարող է լիարժեք փոխարինել հեռակա կալանավորմանը. խոսքը մասնավորապես վերաբերում է մեղադրյալին հետախուզելու և ձերբակալելու ինստիտուտներին:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածում, որը կարգավորում է մեղադրյալի հետախուզման հետ կապված հարաբերությունները, ամրագրված է.

1. Քննիչի կողմից մեղադրյալի հետախուզում կարող է հայտարարվել ինչպես գործով նախաքննության կատարման ժամանակ, այնպես էլ քրեական գործով վարույթը կասեցնելու հետ միաժամանակ:

2. Եթե մեղադրյալի գտնվելու վայրը պարզ չէ, կամ մեղադրյալը թաքնվում է քննությունից, քննիչը՝ իր որոշմամբ, հետախուզում կատարելը հանձնարարում է հետաքննության մարմիններին:

3. Մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելն է: (...):»:

Այս նորմերի համակարգային մեկնաբանությունից և վերլուծությունից պարզ է դառնում, որ եթե մեղադրյալի գտնվելու տեղը պարզ չէ, կամ մեղադրյալը թաքնվում է քննությունից, ապա քննիչն իրավունք ունի նրա նկատմամբ հայտարարելու հետախուզում: Ընդ որում՝ առավել կարևոր է հենց «մեղադրյալի հետախուզում» հասկացության մեկնաբանությունը, որը ենթադրում է իրար հաջորդող հետևյալ երեք գործողությունների կատարում՝

1) մեղադրյալի գտնվելու տեղի բացահայտումը (այսինքն՝ մեղադրյալին հայտնաբերելը),

2) մեղադրյալին ձերբակալելը,

3) վարույթն իրականացնող մարմնի տրամադրությանը հանձնելը:

Այսինքն՝ ըստ Օրենսգրքի 259-րդ հոդվածի՝ հետախուզումը ներառում է նաև **հետախուզվող մեղադրյալին ձերբակալելը**, որը թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ քրեադատավարական օրենսդրությամբ կարող է տևել մինչև 72 ժամ, ինչը նշանակում է, որ առանց հեռակա կալանավորման հնարավոր է հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերել, **ձերբակալել** և ընդհանուր կարգով՝ մինչև 72 ժամը լրանալը միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելու, եթե նախաքննության մարմինը դրա անհրաժեշտությունը կտեսնի: Այսինքն՝ այն, ինչ ներկայումս դատական պրակտիկայում իրականացվում է կալանավորման մասին կրկնակի միջնորդություններ ներկայացնելու միջոցով, կարող է արվել առավել պարզ ձևով և առանց ավելորդ քաշքշուկների ու կրկնակի աշխատանք կատարելու:

Պետք է նկատի ունենալ, որ քննարկվող հարցը միանշանակ մոտեցում չունի տեսության մեջ, քանի որ կան հեղինակներ, որոնք ևս գտնում են, որ առանց մեղադրյալի մասնակցության խափանման միջոց կալանավորման հարցի քննարկումն ուղղակի հակասում է ՄԻԵԿ չափանիշներին⁵, ուստի առաջարկում են օրենսդրական համապատասխան փոփոխություններ կատարել և նախատեսել հնարավորություն՝ քննությունից թաքնվող մեղադրյալների նկատմամբ հեռակա կարգով կիրառելու կալանավորման մասին որոշում, իսկ երբ նրանք կհայտնաբերվեն, ապա 48 ժամվա ընթացքում կրկին կանգնեն այն դատարանի առաջ, որը կայացրել է հեռակա կալանավորման մասին որոշումը՝ միաժամանակ գտնելով, որ նրանք կարող են նաև բողոքարկել այդ որոշումը⁶: Որոշ հեղինակների կարծիքով էլ որևէ հակասություն չկա, քանի որ, ըստ նրանց, Կոնվենցիան պարտավորեցնում է լսել մեղադրյալին միայն այն դեպքում, երբ նա ներկայանում է դատարան և պնդում է, որ իրեն լսեն: Բայց եթե մեղադրյալը թաքնվում է կամ չի ներկայանում վարույթն իրականացնող մարմնին, ապա Կոնվենցիան որևէ արգելք չի նախատեսում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու առումով:

Այս տեսակետը պնդող հեղինակները, չհամաձայնելով ՌԴ քրեական դատավարության օրենսդրությամբ ամրագրված այն կանոնին, որը հնարավորություն է տալիս առանց մեղադրյալի կալանավորման հարց քննարկելու բացառապես այն դեպքում, երբ նա գտնվում է միջազգային հետախուզման մեջ, նշում են, որ ՌԴ օրենսդիրը պարզապես նպատակահարմար է գտել ապահովագրել իրեն և սահմանափակվել է միայն միջազգային հետախուզման մեջ գտնվող մեղադրյալ-

⁵ Տե՛ս **Гаврилов Б. Я.** Современное досудебное производство и меры по его деформализации // "Вестник Восточно-сибирского института МВД России", 2016, 1 (76), էջ 9-19:

⁶ Տե՛ս **Гаврилов Б. Я.** О некоторых проблемных вопросах совершенствования УПК РФ // "Проблемы предварительного следствия и дознания". Сб. научных трудов. М., 2006, էջ 7-8:

ների նկատմամբ կալանավորման հարցերը առանց նրանց մասնակցության քննարկելու կանոնակարգում սահմանելով, իսկ այն պատճառաբանությունները, թե նման օրենսդրական լուծումը պայմանավորված է Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներով, այս հեղինակների կարծիքով՝ իրավաչափ չէ, քանի որ դրանում որևէ նորմ նախատեսված չէ ներպետական հետախուզման մասին⁷:

Այս մոտեցման կողմնակիցներից Օ. Յոկոլովան գտնում է, որ հարցի լուծման առավել արդյունավետ տարբերակ է, երբ օրենքով հնարավորություն տրվի մեղադրյալի նկատմամբ հեռակա կարգով կալանք կիրառելու և միաժամանակ հետախուզում հայտարարելու, որից հետո կալանքը իրականում կիրառելու դեպքում այդ անձին հնարավորություն տրվի երեք օրվա ընթացքում բողոքարկելու այն փաստացի արգելանքի վերցնելու պահից: Ուշագրավ է նաև այս հեղինակի այն պնդումը, որ անհրաժեշտ է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 5-րդ մասից բացառել «միջազգային» բառը, որպեսզի հնարավոր լինի կալանավորման հարցը քննարկել առանց անձի մասնակցության ցանկացած հետախուզման դեպքում⁸:

Չհամաձայնելով այս մոտեցումներին՝ նշենք, որ առանց մեղադրյալի մասնակցության նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու և հետագայում, երբ անձը հայտնվում է վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ, նրան դատարան չներկայացնելու հանգամանքը որպես ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում արձանագրել է Եվրոպական դատարանը հենց ՌԴ դեմ կայացրած Գարաբանի գործով վճռում: Իհարկե, Եվրոպական դատարանը նշել է, որ որևէ խնդիր չկա, երբ անձի նկատմամբ հեռակա կարգով որոշում է կայացվում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, սակայն Դատարանը խնդիր է տեսնում այն առումով, որ անձի հայտնաբերման դեպքում նա անհապաղ չի տարվում դատարան՝ լսված լինելու և դատավորի առաջ կանգնելու: ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պահանջն ապահովելու համար: Հետևաբար, հակասություն չլինելու մասին բոլոր պնդումներն անհիմն են:

Ինչ վերաբերում է այն պնդումներին, որ մեղադրյալը կարող է բողոքարկել հեռակա կալանավորման մասին որոշումը և ըստ այդմ իրացնել իր՝ դատարանի առաջ կանգնելու իրավունքը, ապա այն հիմնավոր չէ, քանի որ ազատությունից զրկելու իրավաչափության վիճարկումը անձի համար երաշխավորված է ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 4-րդ մասով, մինչդեռ դատարանի առաջ կանգնելու և լսված լինելու իրավունքը՝ 5-րդ հոդվածի 3-րդ մասով: Ասվածից կարող ենք եզրակացնել,

⁷ Տե՛ս **Цоколова О. И.** Теория и практика задержания, ареста и содержания под стражей в уголовном процессе. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. М., 2007, էջ 337-342:

⁸ Տե՛ս նույն տեղը:

որ այն դեպքում, երբ մեղադրյալը գտնվում է հետախուզման մեջ, և նրա նկատմամբ կալանավորում կիրառելու մասին միջնորդություն է ներկայացվում դատարան, ապա քննիչը պետք է դատարան ներկայացնի լրացուցիչ նյութեր և հիմնավորումներ առ այն, որ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում: Իսկ եթե նման նյութեր չեն ներկայացվում և չի հիմնավորվում, որ մեղադրյալը գտնվում է միջազգային հետախուզման մեջ, ապա դատարանը պետք է որոշում կայացնի քննիչի միջնորդությունը մերժելու մասին, որը, սակայն, չպետք է կալանավորման հարցը կրկին քննարկելու խոչընդոտ հանդիսանա⁹: Այն դեպքում, երբ հայտարարվում է ներպետական հետախուզում, ապա առանց կալանավորման մասին որոշման հնարավոր է լուծել անձին բացահայտելու և ձերբակալելու հարցը, ավելին՝ ըստ անհրաժեշտության՝ քննիչն իրավունք ունի նաև հետախուզում հայտարարելու հետ միաժամանակ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի կարգով ձերբակալելու մասին որոշում կայացնել¹⁰: Դա նշանակում է, որ ներպետական հետախուզման դեպքում անհրաժեշտություն չկա առանց անձի քննարկելու նրա նկատմամբ կալանավորում կիրառելու հարցը, իսկ նրան հայտնաբերելու դեպքում՝ ներկայացնելու դատարան՝ կրկին քննարկելու կալանավորման հարցը, ինչպես սահմանել է ՀՀ վճռաբեկ դատարանը Ս. Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ: Մեր կողմից առաջարկվող այս մոտեցումն առնվազն բացառելու է արհեստական հետախուզումները և կրկնակի կալանավորման միջնորդությունների քննարկումը՝ դրանով իսկ որոշակիորեն նվազեցնելով նախաքննության մարմինների և դատարանների ծանրաբեռնվածությունը:

Գործում ենք՝ նպատակահարմար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել, որ կալանավորման վերաբերյալ միջնորդությունները կարող են քննարկվել առանց մեղադրյալի բացառապես այն դեպքում, եթե նրա նկատմամբ հայտարարված է միջազգային հետախուզում: Դրա համար անհրաժեշտ է նաև օրենքում սահմանել «միջազգային» և «տեղական հետախուզում» հասկացությունները, դրանք

⁹ Գտնում ենք, որ այս դեպքում չի կարող կիրառվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված այն կանոնը, որ տվյալ խափանման միջոցն ընտրելու նպատակով հարուցված միջնորդությունը դատավորի կողմից մերժելու մասին որոշումից հետո նույն գործով նույն անձին կալանավորելու միջնորդությամբ կրկին դատարան դիմելը հնարավոր է միայն կալանավորումը հիմնավորող նոր հանգամանքների ի հայտ գալու դեպքում, քանի որ միջազգային հետախուզում հայտարարելու դեպքում կալանավորման կիրառումը, ըստ էության, պարտադիր է, այլընտրանք չունի: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի իրականացնել ինչպես հետախուզումը, այնպես էլ անձին ձերբակալելը, կալանավորելը և հանձնելը:

¹⁰ Այս հիմքով ձերբակալման մասին որոշում է կայացվում, եթե քրեական գործով հավաքված ապացույցները հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կատարել է քրեական օրենքով չթույլատրված արարք, ընդ որում նա գտնվում է այլ տեղանքում, կամ նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

հայտարարելու հիմքերը, պայմանները, ժամկետները, մեղադրյալի նկատմամբ կիրառման ենթակա քրեադատավարական հարկադրանքի միջոցների տեսակները և այլն:

Հաճախ պրակտիկ աշխատողները հարց են բարձրացնում, թե արդյոք ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ս. Վահրադյանի վերաբերյալ որոշմամբ ձևավորված դիրքորոշումները պետք է տարածվեն նաև դատական քննության փուլում գտնվող գործով քննությունից թաքնվող ամբաստանյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու և կալանավորման մասին որոշում կայացնելու դեպքում, երբ նա հայտնաբերվում է:

Թեև ՄԻԵԿ 5-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ բացառություն չի սահմանում, սակայն կարծում ենք, որ դատական քննության փուլում գտնվող գործերով իրավիճակն այլ է, քանի որ այս փուլում կիրառված կալանավորումների դեպքում վարույթն իրականացնում է դատարանը, և հենց ինքն էլ կայացնում է կալանավորման մասին որոշում, ուստի Վճռաբեկ դատարանի ձևավորած դիրքորոշումը չի կարող միանշանակ կիրառվել: Այս դեպքում չկա այն պաշտոնատար անձը, որն ունի պարտականություն դատարանի վարույթում գտնվող քրեական գործով կալանավորված անձին ներկայացնելու դատարան. դատարանի որոշումը կատարող ՀՀ ոստիկանության և համապատասխան քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները, հայտնաբերելով հետախուզման մեջ գտնվող ամբաստանյալին, պարզապես պարտավոր են նրան տեղավորել կալանավորվածներին պահելու վայրում և այդ մասին գրավոր իրազեկել դատարանին, որպեսզի վերջինը վերսկսի քրեական գործի կասեցված վարույթը (եթե կասեցրել է) և նիստ նշանակի, որում արդեն կքննարկի նաև կալանավորում կիրառելու հարցը: Մակայն, մեր կարծիքով, այս դեպքում չի կարող կիրառելի լինել դատարանի առաջ կանգնելու՝ Սահմանադրությամբ ամրագրված 72 ժամվա ռեժիմը, քանի որ քրեական դատավարությունում այն վերաբերում է մինչդատական վարույթում ձերբակալման հիմքով ազատությունից զրկելուն, որը դատական քննության փուլում չի կիրառվում, ինչը նշանակում է, որ դատարանի վրա չի կարող պարտականություն դրվել 72 ժամվա ընթացքում ապահովել անձի լաված լինելու իրավունքը: Այն կարող է նաև տեխնիկական խնդիրներ առաջացնել՝ մասնավորապես նիստ նշանակելու, այդ մասին դատավարության կողմերին ծանուցելու և այլնի հետ կապված, որպիսին նախաքննության փուլում առկա չէ: Պետք է նաև նկատի ունենալ այն հանգամանքը, որ դատական քննության փուլում գտնվող գործով անձի կարգավիճակն այլ է, վարույթն այլ սկզբունքների և կանոնների վրա է հիմնված (հրապարակայնություն, անմիջականություն, կողմերի մասնակցություն և այլն), քան նախաքննության փուլում, ուստի այդ առանձնահատկություններով պայմանավորված՝ անձը, դատական քննության փուլում դիմելով փախուստի կամ թաքնվելով քննությունից, ինքն է իրեն զրկում օրենքով իրեն տրված ե-

րաշխիքներից, որոնք նախատեսված են մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով անձին ազատությունից զրկելու օրինականության ապահովման համար:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է այս հարցը ևս իրավական կարգավորման ենթարկել և հստակ ամրագրել, որ ամբաստանյալի հայտնաբերման դեպքում, երբ դատարանը տեղեկացվում է այդ մասին, դատական նիստը պետք է նշանակվի ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Ինչ վերաբերում է ամբաստանյալին, ապա նա կարող է բողոքարկել դատարանի որոշումը վերադաս դատարան և այդ կերպ իրացնել իր լաված լինելու իրավունքը, քանի որ նա այն դատարանի կողմից է կալանավորվել, որը նաև նիստ է իրականացնում, և նույն դատարանի առաջ կանգնելը կալանավորման վերահաստատման տեսանկյունից իրավաչափ չէ:

Բանալի բառեր – *հետախուզում, ձերբակալում, կալանավորում, լսվելու իրավունք, դատարանի առաջ կանգնելու իրավունք*

СЕРГЕЙ МАРАБЯН – *Задержание обвиняемого, находящегося в розыске, в качестве альтернативы заочному (при отсутствии обвиняемого) аресту в уголовном процессе РА.* – В статье изложена та точка зрения, что судебные заседания без участия обвиняемого по поводу содержания под стражей в качестве меры пресечения могут считаться законными, лишь если обвиняемый объявлен в международный розыск. Выражается согласие с правовыми позициями Кассационного суда, но с поправкой, что во избежание злоупотреблений и произвола сфера его действий должна быть ограничена. Что касается объявления розыска внутри страны, то человек может быть задержан, но не арестован. Это не только исключит произвольное объявление в розыск, но и увеличит объём работы судов.

Ключевые слова: *розыск, арест, содержание под стражей, право быть выслушанным, право предстать перед судом*

SERGEY MARABYAN – *The Arrest of the Wanted Defendant as an Alternative to Detention (in the Absence of the Defendant) in the Criminal Proceedings.* – Within the scope of this article, the author has raised the issues of imposing detention as a preventive measure without the involvement of the defendant in the proceedings and concluded that without the defendant's participation, the hearings on the detention may be considered legitimate only when the international reconnaissance has been declared. In this respect, the author agrees with the legal positions of the Court of Cassation, but he believes that its scope should be limited, as it often causes abuses and arbitrariness.

The author thinks that, in the case of domestic reconnaissance, arrest but not detention may be imposed on a person. This will not only exclude the practice of arbitrary and artificial declaration of reconnaissance, but also the doubling of the courts' workload.

Key words: *reconnaissance, arrest, detention, the right to be heard, the right to stand trial*

Ներկայացվել է՝ 11.02.2019, գրախոսվել է՝ 21.02.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

**ՔՆՆՄԱՆ՝ ՈՐՊԵՍ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՑԱՆ, ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Քրեական գործով ճշմարտության բացահայտմանն ուղղված քննչական գործողություններից է քննումը, որն իրականացվում է մարդու մարմնի վրա հատուկ նշաններ, հանցագործության հետքեր և մարմնական վնասվածքներ հայտնաբերելու համար: Քրեական դատավարության օրենսդրության մեջ վերջին տարիներին կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնք ուղղված են նախաքննության արդյունավետության բարձրացմանը, սակայն քննումը կարգավորող նորմում որևէ էական փոփոխություն չկատարվեց, թեև պետք է խոստովանել, որ քննության կազմակերպման և իրականացման առումով՝ առկա են օրենսդրական լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ:

Մասնագիտական գրականության մեջ քննման իրավական բնույթի վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Այսպես, հեղինակների մի մասի կարծիքով՝ քննումը զննության տարատեսակ է, որն ունի յուրահատուկ օրյեկտ, այն է՝ կենդանի մարդու մարմինը¹: Հեղինակների երկրորդ խումբը քննումը փորձաքննության տարատեսակ է համարում²: Երրորդ խմբի կարծիքով՝ քննումը ինքնուրույն քննչական գործողություն է³:

Անկախ տեսական գրականության մեջ տեղ գտած տարբեր մոտեցումներից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում քննումը դիտվում է որպես ինքնուրույն քննչական գործողություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քննիչն իրավունք ունի կատարել կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի քննում՝ նրանց մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու համար, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն»:

Հիշյալ քննչական գործողության օրենսդրական ձևակերպումից հետևում է, որ այն դատավարական համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց (կասկածյալ, մեղադրյալ, վկա, տուժող) մարմնի վրա

¹ Տե՛ս **Торбин Ю. Г.** Освидетельствование как способ собирания доказательств на стадии предварительного расследования. М: "Юрлитинформ", 2005, էջ 13:

² Տե՛ս **Снеткова В. А.** Руководство для следователей. М., 1998, էջ 278-280:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս», Եր., 2010, էջ 143:

հանցագործության հետքեր կամ հատուկ նշաններ հայտնաբերելու նպատակով կատարվող տեսողական ուսումնասիրություն է: Ընդ որում, քննում կարող է կատարվել, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:

Ճիշտ է, օրենսդիրը փորձել է հնարավորինս մանրակրկիտ կարգավորել քննարկվող քննչական գործողության նպատակները և իրականացման դատավարական կարգին վերաբերող հարցերը, սակայն գործնականում նշված քննչական գործողության կատարման ընթացքում հանդիպում ենք իրավիճակների, որոնց լուծումները քրեադատավարական օրենքով կարգավորված չեն: Ուստի սույն հոդվածի շրջանակում հետազոտության առարկա կդառնան առավելապես այն հարցերը, որոնց կարգավորումները, մեր կարծիքով, քրեադատավարական օրենքում նախատեսված չեն կամ կարգավորված են թերի:

Յուրաքանչյուր քննչական գործողություն, այդ թվում նաև քննումը ունի իր նպատակները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220 հոդվածի բովանդակությունից հետևում է, որ քննման նպատակը մարդու մարմնի վրա *հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայության հայտնաբերումն է*, պայմանով՝ եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 179 հոդվածի 1-ին մասում, ի թիվս այլնի, որպես քննման նպատակ նախատեսված են նաև անձի մոտ *մարմնական վնասվածքների, խնամության առկայության պարզումը և տեղեկությունների ստացումը, որոնք ուղղված են վկայի ցուցմունքների հավաստիությունը ստուգելուն*:

Թեև քրեադատավարական օրենքով որպես քննման նպատակ սահմանված է անձի մարմնի վրա հատուկ նշանների առկայության հայտնաբերումը, սակայն օրենսդիրը չի բացահայտել *«հատուկ նշաններ»* եզրույթի բովանդակությունը:

Գրականության մեջ նշվում է, որ հատուկ նշաններ են համարվում անձի հետևյալ անհատական հատկանիշները՝ խալերը, դաջվածքները, հետվիրահատական սպիները, ինչպես նաև մասնագիտական նշանները, որոնք բնութագրում են անձի գործունեության տեսակը (մասնագիտական հատկանիշները)⁴:

Բացի այդ, Յու. Տորբինի կարծիքով՝ հատուկ նշանները, որոնք կարող են պարզվել քննման ընթացքում, կարող են լինել նաև անձի այլ հատկանիշներ (խոսք, ձայն, շարժում, միմիկա, հատուկ կառուցվածք)⁵: Կարծում ենք, որ անձի ֆունկցիոնալ հատկանիշները կարող են լինել ոչ

⁴ Տե՛ս **Потапова А. Г.** Освидетельствование в уголовном судопроизводстве России. Автореферат дисс. ... канд. юрид. наук. Челябинск, 2007, էջ 12:

⁵ Տե՛ս **Торбин Ю. Г.** Освидетельствование в свете нового Уголовно-процессуального кодекса Российской Федерации // "Государство и право". 2003, № 8., էջ 58:

թե քննման, այլ ճանաչման օբյեկտ, հետևաբար դրանք չեն կարող քննման միջոցով պարզվել:

Քննում կարող է իրականացվել մարդու մարմնի վրա հանցագործության հետքեր հայտնաբերելու նպատակով: «Հանցագործության հետքեր» ասելով պետք է հասկանալ հանցավոր գործունեության ցանկացած նյութական հետևանք, և որպես այդպիսիք կարող են լինել՝ վերքերը, արյունը, սերմնահեղուկը, քերծվածքները, տարբեր միկրոմասնիկները:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ի տարբերություն ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի, որպես քննման նպատակ նախատեսված չէ այն մարմնական վնասվածքների հայտնաբերումը, որոնք չեն առաջացել հանցագործության հետևանքով: Այս տեսանկյունից Ա. Վ. Սմիրնովը և Կ. Բ. Կալինովսկին նշում են, որ մարմնական վնասվածքի հայտնաբերումը քննման ինքնուրույն առարկա չէ, քանի որ գործով մարմնական վնասվածքները հանդես են գալիս հատուկ նշանների (օրինակ՝ բացակայում է մեղադրյալի ձեռքի մատներից մեկը) կամ հանցագործության հետքերի տեսքով (օրինակ՝ տուժողի վնասվածքները)⁶: Նշված մոտեցումը պաշտպանում է նաև Ա. Ռ. Բելկինը⁷:

Կարծում ենք, որ ներկայացված մոտեցումներն ընդունելի չեն կարող համարվել, քանի որ քննման ընթացքում կարող են հայտնաբերվել նաև այնպիսի մարմնական վնասվածքներ, որոնք չեն կարող լինել ո՛չ հատուկ նշաններ և ո՛չ էլ հանցագործության հետքեր, օրինակ՝ ինքնավնասման դեպքում անձի մոտ կարող են հայտնաբերվել մարմնական վնասվածքներ, որոնք հանցավոր գործունեության հետևանքով չեն առաջացել, հետևաբար այդ վնասվածքները նույնպես կարող են հայտնաբերվել քննման ընթացքում:

Բացի վերը նշվածից, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում քննման ինքնուրույն նպատակ է նախատեսված անձի խմածությունը պարզելը: Կարծում ենք՝ քննչական քննման միջոցով դա պարզել հնարավոր չէ, սակայն այդ կերպ կարող են պարզվել խմածության որոշակի հատկանիշներ:

Գաղտնիք չէ, որ խմածությունը ներքին, երբեմն բավականաչափ թաքնված հատկություն է, որը երբեք հնարավոր չէ անմիջական դիտարկման, մասնավորապես՝ ցանկացած տեսողական ուսումնասիրության միջոցով հայտնաբերել: Անձի մոտ խմածությունը պարզելու

⁶ Տե՛ս **А. В. Смирнов, Калиновский К. Б.** Уголовный процесс: Учебник для вузов. СПб.: "Питер", 2005, էջ 397:

⁷ Տե՛ս **Белкин А. Р.** Освидетельствование: особенности регламентации и производства // "Следственная деятельность: прошлое, настоящее, будущее". Сб. ст. по матер. Междунар. науч.-практ. конф., посвящ. 90-летию со дня рождения профессора В. А. Дубровниного (Саратов, 10 ноября 2015 г.). Саратов, ФГБОУ ВО «Саратовская государственная юридическая академия». 2015, էջ 67–75:

համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ, ուստի այն հնարավոր է պարզել առանձին հետազոտություններով: Քննչական քննման միջոցով կարող են պարզվել միայն անձի մոտ խմածության որոշակի նշաններ (օրինակ՝ ալկոհոլի հոտ, դեմքի կարմրություն և այլն):

Բացի այդ, գործնականում ալկոհոլային խմածությունը կամ դրա աստիճանը որոշելու անհրաժեշտություն առաջանում է հիմնականում ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննության ընթացքում: Իսկ վարորդի սթափության վիճակը պարզելու հնարավորությունը կարգավորվում է «Վարորդի սթափության վիճակի գննության կարգը, այդ գննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 19-ի թիվ 277-Ն որոշմամբ և «Վարորդի սթափության վիճակի գննության ուղեգրի ձևը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետի 2009 թվականի մայիսի 20-ի թիվ 13-Ն համատեղ հրամանով:

Հետևաբար, անձի մոտ խմածությունը և դրա տեսակը հնարավոր է որոշել բացառապես կամ համապատասխան փորձաքննության կամ բժշկական գննության միջոցով, որն իրականացման իրավական հիմքերով դուրս է քրեական դատավարության ոլորտից և կարգավորվում է իրավական այլ ակտերով:

Հետևաբար, քննման նպատակ կարող է լինել ոչ թե անձի մոտ առհասարակ խմածության, այլ խմածության որոշակի հատկանիշներ պարզելը: Ընդ որում, մեր մոտեցումը պաշտպանում են մի շարք հայտնի գիտնականներ⁸:

Իրավակիրառ պրակտիկայում լինում են իրավիճակներ, երբ քրեական գործով վարույթի ընթացքում անհրաժեշտություն է առաջանում հայտնաբերելու ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220 հոդվածի 1-ին մասում նշված սուբյեկտների մարմնի վրա հանցագործության հետքերի կամ հատուկ նշանների առկայությունը, այլ պարզելու հասակը կամ մարմնի որևէ մասի, օրինակ՝ ոտնաթաթի չափսերը⁹:

Ակնհայտ է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներկա կարգավորումների պայմաններում, օրինակ՝ անձի հասակը պարզելը չի մտնում որևէ քննչական գործողության նպատակների մեջ:

Այսպիսով՝ գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220 հոդվածում քննման նպատակները լիարժեք ամրագր-

⁸ Տե՛ս **Росинский С. Б.** Концептуальные основы формирования результатов невербальных следственных и судебных действий в доказывании по уголовному делу. Дисс. ... доктора юрид. наук. М., 2006, էջ 295-301:

⁹ Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 60120814 քրեական գործի քննության ընթացքում հետազայում քննչական փորձարարություն կատարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել պարզելու անձի հասակը:

ված չեն, ուստի անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով դրանք ներդնել: Այդ նպատակով առաջարկում ենք քննարկվող հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Քննիչն իրավունք ունի կատարելու կասկածյալի, մեղադրյալի, վկայի կամ տուժողի քննում՝ նրանց մարմնի վրա հանցագործության հետքերի, մարմնական վնասվածքների, հատուկ նշանների առկայություն հայտնաբերելու կամ նրանց որոշակի անատոմիական հատկանիշներ պարզելու համար, եթե դրա համար չի պահանջվում դատաբժշկական փորձաքննություն»:

Տեսական գրականության մեջ հաճախ քննարկվում է այն հարցը, թե թույլատրվում է արդյոք քննման ընթացքում մարդու մարմնի վրայից վերցնել միկրոմասնիկներ, թե դրանք կարող են վերցվել միայն փորձաքննության ընթացքում: Կարծում ենք, ժամանակակից տեխնիկական առաջընթացի պայմաններում անձի մարմնի վրա եղած միկրոմասնիկները հնարավոր է հայտնաբերել նաև քննման ընթացքում հատուկ տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ առանց փորձագիտական հետազոտություններ իրականացնելու:

Գործնականում հաճախ վիճահարույց է այն հարցը, թե քննումը կարող է արդյոք ուղեկցվել նաև քննվողի հագուստների և կոշիկների զննությամբ, թե այն պետք է սահմանափակվի միայն քննվողի մարմնի ուսումնասիրությամբ:

Քննիչների մեծամասնությունը կարծում է, որ քննման ընթացքում քննվողի հագուստների և կոշիկների զննությունը անհրաժեշտ է գործի հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման ու գործով ճշմարտությունը բացահայտելու համար:

Որոշ տեսաբաններ նույնպես գտնում են, որ քննումը կարող է ուղեկցվել քննվողի հագուստի զննությամբ՝ նպատակ ունենալով հայտնաբերել վնասվածքներ, միկրոմասնիկներ և այլ հետքեր, որոնք կարող են նշանակություն ունենալ քրեական գործով և հետագայում դառնալ փորձագիտական հետազոտման օբյեկտ¹⁰:

Բարձրացված խնդրին լուծում տալու նպատակով Ա. Գ. Պոտապովան առաջարկում է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 179 հոդվածում ամրագրել նորմ՝ հետևյալ բովանդակությամբ. «Քննումը կարող է ուղեկցվել քննվող անձի հագուստների և կոշիկների զննությամբ: Չննության արդյունքները ամրագրվում են քննման արձանագրության մեջ»¹¹:

Ինչպես վերը նշվեց, քննումը կատարվում է անձի մարմնի վրա հանցագործության հետքերը կամ հատուկ նշանները հայտնաբերելու համար: Դրանք, ինչպես հայտնի է, չեն համարվում առանձին նյութական միջոցներ, քանի որ անբաժանելի են մարդու մարմնից, հետևա-

¹⁰ Տե՛ս Уголовно-процессуальное право: учебник. М.: "Юрайт", 2012, էջ 471:

¹¹ Տե՛ս Потапова А. Г., նշվ. աշխ., էջ 13:

բար հնարավոր չէ վերցնվել: Միայն առանձին դեպքերում է, որ քննման ընթացքում կարելի է վերցնվել գործի համար նշանակություն ունեցող ինչ-որ առարկա, օրինակ՝ ավտովթարի հետևանքով տուժողի մարմնի վրա ավտոմեքենայի քերված ներկի հետքերը:

Սակայն հաշվի առնելով, որ գործնականում կարող է անհրաժեշտություն առաջանալ քննման ընթացքում զննման ենթարկելու նաև անձի հագուստներն ու կոշիկները, ինչը իրականացնելու կարգը նախատեսված չէ քրեադատավարական օրենսգրքով, այս կերպ ձեռք բերված տվյալները կարող են վիճարկվել դատավարության մասնակիցների կողմից, ուստի կարծում ենք, որ այս առումով պետք է համապատասխան փոփոխություններ նախատեսվեն քրեադատավարական օրենքում՝ սահմանելով, որ քննումը կարող է ուղեկցվել նաև անձի հագուստների և կոշիկների զննությամբ, որոնց արդյունքները պետք է արտացոլվեն քննման արձանագրության մեջ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 220 հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ քննում կատարելու մասին քննիչը կայացնում է որոշում: Քննման դեպքում, ի տարբերություն զննության, պարտադիր է գրավոր որոշման կայացումը:

Գործնականում հաճախ ստեղծվում են իրավիճակներ, երբ նախաքննական մարմինը որոշում է կայացնում մեղադրյալին քննման ենթարկելու վերաբերյալ, սակայն վերջինս հրաժարվում է քննիչի որոշման պահանջները կատարելուց: Ուստի իրավաչափ հարց է առաջանում, թե այս դեպքում ինչպես պետք է վարվի քննիչը: Բանն այն է, որ քրեադատավարական օրենսգրքը, նախատեսելով պահանջ այն անձի համար, ում վերաբերյալ կայացվել է որոշում քննման ենթարկվելու, չի նախատեսել այդ պահանջը չկատարելու դեպքում դրա ապահովման իրավական մեխանիզմներ, այդ իսկ պատճառով այն իրավիճակներում, երբ անձը (կասկածյալը, մեղադրյալը, վկան, տուժողը) հրաժարվում է քննման ենթարկվելուց, քննիչը սահմանափակվում է միայն այդ մասին քննման որոշման կամ արձանագրության մեջ նշում կատարելով:

Հիշատակված խնդրի կարգավորմանն է միտված վերջերս շրջանառության մեջ դրված ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություն և լրացում կատարելու մասին օրենքների նախագիծը:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11 հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականությունը չկատարելու դեպքում եթե գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական տվյալները հնարավոր չէ ձեռք բերել դատավարական այլ եղանակով, ապա քննումը, փորձաքննությունը կամ

նմուշ ստանալն օրենքով սահմանված կարգով կատարվում են հարկադրաբար՝ դատարանի որոշման հիման վրա՝ իրավունքի միջամտության համաչափության սկզբունքի պահպանմամբ»:

Նույն օրենքի նախագծով առաջարկվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 188.1 հոդվածը լրացնել 4.1 մասով հետևյալ բովանդակությամբ. «Վարույթն իրականացնող մարմինն անձին նախագգուշացնում է քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականությունը չկատարելու դեպքում քննումը, փորձաքննությունը կամ նմուշներ ստանալը դատարանի որոշմամբ հարկադրաբար կատարելու մասին, ինչպես նաև պարզաբանում է քննման, փորձաքննության ենթարկվելու կամ նմուշներ տալու պարտականությունը չկատարելու դեպքում օրենքով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննման, փորձաքննության ենթարկվելուց կամ նմուշներ տալուց հրաժարվելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը կազմում է արձանագրություն, որտեղ նշում է քննչական գործողություններին մասնակցելու պարտականությունը կատարելուց անձի հրաժարվելու մասին:

Քննումը, փորձաքննությունը կամ նմուշներ ստանալը հարկադրաբար կարող են կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա:

Վարույթն իրականացնող մարմինը հանձնարարում է հետաքննության մարմնի աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով և միջոցներով աջակցելու՝ քննումը, փորձաքննությունը հարկադրաբար կատարելուն կամ նմուշները հարկադրաբար ստանալուն»:

Իսկ ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագծով առաջարկվում է օրենսգիրքը լրացնել նոր՝ 339.1 հոդվածով և պատասխանատվություն սահմանել քննման, փորձաքննության, բժշկական ստուգման ենթարկվելուց, լուսանկարման, մատնադրոշման, ինչպես նաև համեմատական հետազոտման համար այլ նմուշներ տալուց հրաժարվելու համար:

Կարծում ենք, որ առաջարկվող քրեադատավարական և քրեաիրավական մեխանիզմները կլուծեն քննման կատարման ընթացքում գործնականում հանդիպող այն խնդիրները, որոնց լուծումները ներկայիս օրենսդրական կարգավորումներով նախատեսված չեն:

Եվ վերջապես, քննարկվող քննչական գործողության արդյունքների ամրագրման վերաբերյալ հաճախ քննարկվում է հետևյալ հարցը, թե թույլատրվում է արդյոք տեխնիկական միջոցներ կիրառելով (լուսանկարում, տեսագրում) արձանագրել քննման ընթացքը:

2018 թ. մարտի 21-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-181-Ն օրենքի 8 հոդվածով օրենսգրքի 220 հոդվա-

ծի 3-րդ մասում դրույթ նախատեսվեց, ըստ որի՝ եթե քննումը չի զուգորդվում քննվող անձին մերկացնելու հետ, ապա քննվող անձի համաձայնությամբ նրա մարմնի վրա առկա հանցագործության հետքերը կամ հատուկ նշանները լուսանկարվում կամ տեսագրվում են:

Գործող օրենսգրքի իրավակարգավորումների տեսանկյունից քննման ընթացքում, այն էլ եթե քննումը չի զուգորդվում անձին մերկացնելու հետ, տեխնիկական միջոցների կիրառում թույլատրվում է միայն քննվող անձի համաձայնությամբ: Այլ կերպ՝ մերկացմամբ զուգորդված քննման ընթացքում տեխնիկական միջոցների կիրառում չի թույլատրվում:

Այս տեսանկյունից ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներն այլ են: Այսպես, օրենսգրքի 179 հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եթե քննումը զուգորդվում է քննվող անձին մերկացնելու հետ, ապա այդ ընթացքում «լուսանկարում, կինոնկարահանում և տեսագրում» թույլատրվում է միայն քննվող անձի համաձայնությամբ:

Կարծում ենք, որ քննման ընթացքում տեխնիկական միջոցների կիրառման առումով ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներն ավելի ընդունելի են, քան ՀՀ քրեադատավարական օրենսգրքինը, քանի որ եթե քննումը չի զուգորդվում անձին մերկացնելու հետ, ապա քննչական գործողության ընթացքում տեխնիկական միջոցներ կիրառելու համար քննվող անձի համաձայնությունը ստանալու պահանջն ավելորդ է:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ մեր առաջարկած և արդեն իսկ շրջանառության մեջ դրված օրենսդրական փոփոխությունները հնարավորություն կտան վարույթն իրականացնող քննիչներին առավել արդյունավետ և անշեղ իրականացնելու իրենց առջև դրված խնդիրները և գործնականում ապահովելու նախաքննության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունը:

Բանալի բառեր – քննչական գործողություն, քննում, հանցագործության հետքեր, մարմնական վնասվածք, հատուկ նշաններ, հագուստների և կոշիկների զննում, դատաբժշկական փորձաքննություն, տեխնիկական միջոցներ

АРТУР ЧАХОЯН, АРСЕН МАРТИРОСЯН – Процессуальные и такти-ческие проблемы освидетельствования в качестве следственного действия в уголовном процессе РА. – Статья посвящена некоторым проблемам одного из предусмотренных уголовно-процессуальными нормами следственных действий – освидетельствования. Всесторонне проанализированы вопросы, затрагивающие цели освидетельствования и процессуальный порядок его производства. Изучены не только соответствующие статьи Уголовно-процессуального кодекса РА, но и проблемы, обусловленные недостаточной урегулированностью данных норм.

В статье не только выявлены имеющиеся в УПК проблемы, но и предложены способы разрешить их и повысить эффективность расследования.

Ключевые слова: следственное действие, освидетельствование, следы преступления, телесное повреждение, особые знаки, осмотр одежды и обуви, судебно-медицинская экспертиза, технические средства

ARTHUR CHAKHOYAN, ARSEN MARTIROSYAN – Procedural and Tactical Problems of Examination as Investigative Actions in RA Criminal Procedure. – Procedural and tactical problems of examination, one of the investigative actions provided by RA code of criminal procedure, are discussed in the paper presented.

Almost all the problematic issues concerning the aims of the examination and the procedural order of its execution are raised in the frames of the presented paper. The specialty of this paper is that the authors studied not only the relevant articles of RA Code of Criminal Procedure, which provide legal grounds for the discussed investigative action but also covered a number of practical problems arising due to the lack of legal regulation.

The authors have gone beyond the identification of the shortcomings of the code of criminal procedure and suggested possible solutions for overcoming the highlighted problems and increasing the effectiveness of the investigation.

Key words: investigative action, examination, traces of crime, injury, special signs, examination of clothes and shoes, forensic medical examination, technical means

Ներկայացվել է՝ 12.02.2019, գրախոսվել է՝ 19.02.2019, ընդունվել է տպագրության՝ 19.04.2019

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. Անահիտ Մանասյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, Արդարադատության ակադեմիայի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր
Анаит Манасян – кандидат юридических наук, доцент кафедры конституционного права ЕГУ, проректор Академии юстиции по научной работе
Anahit Manasyan – PhD, Associate Professor at the Chair of Constitutional law, YSU, Vice-Rector of the Academy of Justice for Scientific Affairs
Էլ. փոստ՝ anahit.manasyan@ysu.am
- 2. Նարեկ Շարաֆյան** - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի իրավախորհրդատու
Нарек Шарафян – юрисконсульт министра экономического развития и инвестиций РА
Narek Sharafyan – Legal Advisor to the RA Minister of the Economic Development and Investments
Էլ. փոստ՝ sharafyan96@gmail.com
- 3. Արմեն Հայկյանց** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր
Армен Айкянц – доктор юридических наук, профессор кафедры гражданского права ЕГУ
Armen Haykyants – Sc. D. in Legal Sciences, Professor at the Chair of Civil Law, YSU
Էլ. փոստ՝ ahaykyants@ysu.am
- 4. Սիրո Ամիրխանյան** – ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ
Сиро Амирханян – аспирант кафедры гражданского права ЕГУ
Siro Amirkhanyan – PhD student at the Chair of Civil Law, YSU
Էլ. փոստ՝ S.amirkhanyan@ysu.am
- 5. Վահե Ենգիբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր
Ваге Енгибарян – доктор юридических наук, профессор кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Vahe Engibaryan – Sc. D. in Legal Sciences, Professor at the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ yengibaryan@ysu.am

- 6. Մերզեյ Մարաբյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ
Сергей Марабян – кандидат юридических наук, ассистент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Sergey Marabyan – PhD, Assistant Professor at the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ s.marabyan@ysu.am
- 7. Արթուր Չախոյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ
Артур Чахоян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Arthur Chakhoyan – PhD, Associate Professor at the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ arturchakhoyan@ysu.am
- 8. Արսեն Մարտիրոսյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Լոռու մարզի դատախազ
Арсен Мартиросян – кандидат юридических наук, доцент, прокурор Лорийской области РА
Arsen Martirosyan – PhD, Associate Professor, Prosecutor of Lori Region, RA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Անահիտ Մանասյան* – Սահմանադրական դատարանի իրավական դիրք-
որոշումների զարգացման առանձին հիմնախնդիրներ՝ սահմանա-
դրական կայունության երաշխավորման համատեքստում 3
- Анаит Манасян* – Некоторые вопросы развития правовых позиций Конститу-
ционного суда в контексте гарантирования конституционной
стабильности
- Anahit Manasyan* – Some Issues of the Development of Constitutional Court Le-
gal Positions in the Context of Guaranteeing Constitutional Stability
- Նարեկ Շարաֆյան* - Անձնական տվյալների պաշտպանությունը Բլոքչեյն
տեխնոլոգիաներում 16
- Нарек Шарафян* – Необходимость защиты данных в блокчейн-технологиях
- Narek Sharafyan* – Personal Data Protection in the Blockchain Technologies

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ГРАЖДАНСКОЕ ПРАВО CIVIL LAW

- Արմեն Հայկյանց* – Չճանաչված պետության իրավունքի և պաշտոնական
փաստաթղթերի ճանաչումը ու կիրառումը (միջազգային մասնա-
վոր-իրավական հիմնախնդիրներ) 27
- Армен Айкянци* – Признание и применение права и официальных документов
непризнанного государства (международные частноправовые пробле-
мы)
- Armen Haykants* – Recognition and Application of the Law and Official Docu-
ments of Unrecognized States (International Private-Law Problems)
- Միրո Ամիրխանյան* – Հանրային իրավունքի իրավաբանական անձանց
քաղաքացիաիրավական պատասխանատվությունը 40
- Сиро Амирханян* – Гражданско-правовая ответственность юридических лиц
публичного права
- Siro Amirkhanyan* – Civil Liability of Legal Entities of Public Law

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ
УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА
CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS

<i>Վահե Ենգիբարյան</i> – Փորձագետի եզրակացության ապացուցողական նշանակության առանձնահատկությունները քրեական դատավարությունում.....	48
<i>Ваге Енгибарян</i> – Особенности доказательственного значения заключения эксперта в уголовном процессе	
<i>Vahe Yengibaryan</i> – Peculiarities of Evidentiary Value of Expert’s Conclusion in Criminal Procedure	
<i>Սերգեյ Մարաբյան</i> – Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելը որպես հեռակա (մեղադրյալի բացակայությամբ) կալանավորման այլընտրանք ՀՀ քրեական դատավարությունում.....	59
<i>Сергей Марабян</i> – Задержание обвиняемого, находящегося в розыске, в качестве альтернативы заочному (при отсутствии обвиняемого) аресту в уголовном процессе РА	
<i>Sergey Marabyan</i> – The Arrest of the Wanted Defendant as an Alternative to Detention (in the Absence of the Defendant) in the Criminal Proceedings	
<i>Արթուր Չախոյան, Արսեն Մարտիրոսյան</i> – Քննման՝ որպես քննչական գործողության դատավարական և տակտիկական հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում.....	73
<i>Артур Чахоян, Арсен Мартиросян</i> – Процессуальные и тактические проблемы освидетельствования в качестве следственного действия в уголовном процессе РА	
<i>Arthur Chakhoyan, Arsen Martirosyan</i> – Procedural and Tactical Problems of Examination as Investigative Actions in RA Criminal Procedure	
Տեղեկություններ հեղինակների մասին	82
Сведения об авторах	
Information about the Authors	

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 22. 04. 2019:
Տպարանակ՝ 100: Չափար՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: